

Ինչդեպ փաղափները դարձնել դիմակայում

Ձեռնարկ փաղափառների և սեղական իմնականառավարման մարմինների ղեկավարների համար

Լեռնում 2010-2015թթ. «Դարձնենք փաղափները դիմակայում. իմ փաղափը դասրասվում է» գլոբալ փարոգարակին



Դարձնենք քաղաքները դիմակայուն. Իմ քաղաքը պատրաստվում է

Տեղական մակարդակում որոշում կայացնողների և քաղաքային իշխանության շրջանում պատրաստակամությունը բարձրացնելու համար 2010թ. ՄԱԱՆՄԻ-ն (UNISDR) իր գործընկեր կազմակերպությունների հետ հայտարարեցին «Դարձնենք քաղաքները դիմակայուն. իմ քաղաքը պատրաստվում է» գլոբալ քարոզարշավի մեկնարկը: Քարոզարշավի նպատակն է բարձրացնել իրազեկվածությունը որոշում կայացնողների շրջանում և խրախուսել տեղական և ազգային կառավարման մարմիններին աղետների ռիսկի նվազեցումը, դիմակայունությունը և կլիմայի փոփոխությունը դարձնել զարգացման քաղաքականության առաջնահերթություն, ինչպես նաև Հյուսիսային և Հարավային ամերիկյան ժողովուրդների համապատասխանեցնել տեղական կարիքներին: Քարոզարշավն իր մեջ ներառող տարբեր մեծություն, բնութագրեր, ուղղվածություն, ռիսկեր ունեցող և տարբեր տեղանքներում գտնվող քաղաքների, նահանգների և համայնքների աճող համընդհանուր ցանց է, որտեղ կարող են աջակցել միմյանց, սովորել մեկը մյուսից, ընդլայնել գիտելիքները, փոխանցել փորձառությունը և տրամադրել տեխնիկական աջակցություն՝ դիմակայման մշակույթ ստեղծելու նպատակին հասնելու համար:

«Քաղաքները դիմակայուն դարձնելու տասն գերակա ուղղությունները» նշված պարտականությունների ուղղորդիչ սկզբունքներն են և օգնում են սահմանելու թիրախներ՝ քաղաքները դիմակայուն դարձնելու համար (Տե՛ս ավելին՝ Տասն գերակա ուղղությունների մասին Գլուխ 2-ում և Հավելված 1-ում):



Sign up
today to make
your city resilient
to disasters

Տեղական ինքնակառավարման առաջին ղեկավարներից մեկը, ով փորձարկում է քաղաքները դիմակայուն դարձնելու տեղական ինքնակառավարման ինքնազնադատման գործիքը, Դեհրադունի քաղաքապետ, Ուտարանչայի նահանգ, Հնդկաստան: Աղբյուրը՝ նկարը ՄԱԱՆՄԻ



International Strategy for Disaster Reduction

Ինչպես դարձնել քաղաքները դիմակայուն

*Ձեռնարկ քաղաքապետների և տեղական ինքնակառավարման
մարմինների ղեկավարների համար*

Ներդրում 2010-2015թթ.

«Դարձնենք քաղաքները դիմակայուն. իմ քաղաքը պատրաստվում է» գլոբալ
քարոզարշավին

Ժնև
Հունվար 2012թ.



United Nations

Երախտիքի խոսք

ՄԱԱՆՄՌ-ն իր երախտիքի և շնորհակալական խոսքն է ուղղում բոլոր նրանց, ովքեր մասնակցություն են ցուցաբերել սույն ձեռնարկի մշակմանը, այդ թվում տարբեր քաղաքների մեծ թվով ներկայացուցիչներ, «Դարձնենք քաղաքները դիմակայուն» քարոզարշավի խորհրդատվական խմբի փորձագետներ և անդամներ, որոնց անուններն ամբողջությամբ ներկայացված չեն: Սույն ձեռնարկում տեղ գտած նյութի շրջանակը, ձևաչափն ու օրինակները հավաքագրվել են քաղաքապետների և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ հարցազրույցների արդյունքում, որոնք տեղի են ունեցել 2011թ. Ժնևում անցկացված Աղետների նվազեցման գլոբալ պլատֆորմի, 2011թ. օգոստոսին Չինաստանի Չենգոու քաղաքում անցկացված աշխատանքային հանդիպման ժամանակ, ինչպես նաև 2011թ. հոկտեմբերին Ինչեոն քաղաքում կայացած Տեղական ինքնակառավարման ինքնագնահատման գործիքի կիրառման վերաբերյալ աշխատանքային հանդիպման և 2011թ. հոկտեմբերի Ժնևի աշխատանքային հանդիպման ժամանակ՝ քաղաքապետների, խորհրդարանների անդամների և փորձագետների հետ հանդիպումների արդյունքում: Ձեռնարկի նախնական տարբերակն ուղարկվել է վերանայման, իսկ ստացված նկատառումները հաշվի են առնվել: Սույն ձեռնարկի հետագա հրատարակություններում հաշվի կառնվի նաև կիրառողների կարծիքը: Լրացուցիչ նյութեր կմշակվեն ըստ անհրաժեշտության: Օրինակներն ու գործիքները կթարմացվեն այս ձեռնարկի կայքէջում՝ www.unisdr.org/campaign:

Ծրագրի ղեկավար և գործադիր խմբագիր՝ Հելենա Մոլին Վալդես, ՄԱԱՆՄՌ

Հրատարակման ղեկավար՝ Միշել Կոչիլիա, ՄԱԱՆՄՌ

Համահեղինակներ՝ Հելենա Մոլին Վալդես, Ալոյսիուս Ռեգո (խորհրդատու), Ջոն Աքոթ (խորհրդատու), Ժեմ Վալդես Ագուալո (համագործակցող), Պատրիսիա Բիտներ (խմբագիր):

Ձեռնարկի մշակմանը մասնակցել են (ովքեր կատարել են գրավոր ներդրում)՝

Քաղաքներ՝ Կիլդեստա Սևա (քաղաք Մակաոի), Յելգի Վերելե (Սիլիկոնեի քաղաքապետ, Կոստա Ռիկա), Պաուլա Տրիսան (CORILA, Վենետիկ), Նադա Յամուտ (Բեյրութի քաղաքային խորհուրդ, Լիբանան):

Գործընկերներ՝ Ֆուադ Բենդիմերադ, Խոսե Մարի Օ. Դակլան և Ջերոմ Բ. Ջայա (ԵՄՆ), Մարկուս Լի, Դան Հուրնվեգ, Դանիել Կուլլ և Սուզանա Սվետլոսակովա (Համաշխարհային բանկ և ԱՌՆ գլոբալ հիմնադրամ), Ալիս Բայթո և Ստիվ Գոլեր (Տեղական իշխանությունները հանուն կայունության (ICLEI)), Մոհամեդ Բուսրաուի (Միավորված քաղաքներ և տեղական ինքնակառավարման մարմիններ (UCLG)), Բերնարդիա Իրավատի Ժանդրադեմի (CityNet), Դան Լյուիս և Անա Մորենո (ՄԱԿ-ՀԱԲԻԹԱԹ), Ռաջիբ Շուու (Կյոտոյի համալսարան, Ասիայի քաղաքաշինության ոլորտի նվազեցման հատուկ խումբ), Ջանետ Էդվարդս (Շվեդիայի Ազգային պլատֆորմ), Փիլյու Ռանջան Ռուտ (LG-NET, Հնդկաստան), Դիլանթի Ամարատունգա (Սալգորդի համալսարան, Միացյալ թագավորություն), Մարկուս Մոնչ և Ստիվեն Թայլեր (ISET), Հաչիմ Բաջի (CADRI-ՄԱԶՇ):

Անհատներ՝ Մուրաթ Բալամիր (Թուրքիա), Գարրի դե լա Պոմմերայի (ՄԹ):

ՄԱԱՆՄՌ մասնավոր հարվածի խումբ՝ Մարկ Արմաթրոնգ (Field Secure), Նիկերին Բրես, Կարոլին Վուլլի (Marsh), Խեսուս Գարի Ս. Դոմինգո (ՄԱԿ-ում Ֆիլիպինների մշտական առաքելությունը), Փիթեր Գոյուտեր (Cisco Systems, Inc.), Արիս Պապադոպոլոս (Titan America), Դալե Սանդս (AECOM), Ռեգիս Թեյլոս (EPTB Seine Grands Lacs), Փիթեր Վիլյամս (IBM), Սանդրա Վու (Kokusai Kogyo Holdings):

ՄԱԱՆՄՌ՝ Սանդրա Ամլանգ, Սանջայա Բատիա (Վերականգնման միջազգային պլատֆորմ), Միշել Կոչիլիա, Բինա Դեսայի, Գլենն Դոլչեմասկոլո, Կրեյգ Դունկան, Ջաստին Ջիննետի, Վինսենթ Ֆոնոգ, Յուկի Մացուկո, Դենիս ՄակՔլին, Հանգ Թի Թան Փամ, Դիգերի Սալիմ:

ՄԱԱՆՄՌ-ն իր շնորհակալությունն է հայտնում նաև այն ուսանողներին, որոնք օգնություն են ցուցաբերել քարոզարշավի և 2011թ.-ի հետազոտության ընթացքում: Նրանք են՝ Իսավիեր Քերո, Ջեֆրի Մակալա Նգակա, Շաշանկ Միշրա, Ռաջինդեր Սագու, Ֆրանչեսկա Սավի:

Ֆինանսավորումը տրամադրվել է Համաշխարհային բանկի Աղետների ռիսկի նվազեցման գլոբալ հիմնադրամի (GDFRR-ձախտային հոդված I), Ինչեոն քաղաքի և Կորեայի հանրապետության և այլ նվիրատուների կողմից, այդ թվում՝ Շվեդիա, Եվրոպական հանձնաժողով, Ավստրալիա, Նորվեգիա, Նիդերլանդներ, Ճապոնիա, Շվեյցարիա, Դանիա, Գերմանիա, Ֆինլանդիա, Իսպանիա, Միացյալ Թագավորություն, Լյուքսեմբուրգ, Բրազիլիա, Չինաստան, Ամերիկայի միացյալ նահանգներ, Արգենտինա, Մեքսիկա, Հունգարիա, Կիպրոս, Ֆիլիպիններ (ներկայացված են ըստ ՄԱԱՆՄՌ ֆոնդ կատարած ներդրումների չափի):

Բովանդակություն

Նախաբան	5
Ներածություն և ձեռնարկի նպատակը	6
Ինչո՞ւ են քաղաքները ենթակա ռիսկի	8
Ո՞րն է դիմակայուն քաղաքը	10
Դիմակայուն ազգերի և համայնքների ստեղծման գլոբալ օրակարգը և քարոզարշավը	11

Գլուխ 1. Ինչո՞ւ կատարել ներդրումներ աղետների ռիսկի նվազեցման ոլորտում 14

• Աղետների ռիսկի նվազեցման և դիմակայունության բարձրացման գործընթացներում ներդրումներ կատարելու առավելությունները	15
• Դիմակայունության բարձրացման ոլորտում կատարված ներդրումը հնարավորության ստեղծում է	18
• Քաղաքականության ուղղությունները	19
• Մասնակցային գործընթացների խթանման հնարավորություն	20

Գլուխ 2. Որո՞նք են քաղաքները դիմակայուն դարձնելու տաս գերակա ուղղությունները 24

• Գերակա ուղղություն 1. Հաստատութենական և վարչական համակարգ	27
• Գերակա ուղղություն 2. Ֆինանսավորում և ռեսուրսներ	31
• Գերակա ուղղություն 3. Տարաբնույթ վտանգավոր երևույթների ռիսկի գնահատում. ճանաչի՞ր քեզ սպառնացող ռիսկը	35
• Գերակա ուղղություն 4. Ենթակառուցվածքների պաշտպանություն, բարելավում և դիմակայունություն	38
• Գերակա ուղղություն 5. Կենսական նշանակության հաստատությունների պաշտպանություն. կրթություն և առողջապահություն	42
• Գերակա ուղղություն 6. Շինարարական կանոնակարգեր և հողօգտագործման պլանավորում	45
• Գերակա ուղղություն 7. Վերապատրաստում, կրթություն և հանրային իրազեկում	49
• Գերակա ուղղություն 8. Շրջակա միջավայրի պահպանություն և էկոհամակարգերի հզորացում	52
• Գերակա ուղղություն 9. Արդյունավետ պատրաստվածություն, վաղ ազդարարում և արձագանքում	55
• Գերակա ուղղություն 10. Վերականգնում և համայնքների վերակառուցում	58

Գլուխ 3. Ինչպե՞ս իրականացնել տաս գերակա ուղղությունները քաղաքները դիմակայուն դարձնելու համար 62

• Նպատակներն ու ռազմավարական պլանավորումը	63
• Առաջին փուլ. Կազմակերպում և տաս գերակա ուղղությունների կիրառման նախապատրաստում	65
• Երկրորդ փուլ. Քաղաքային ռիսկի բացահայտում և գնահատում	66
• Երրորդ փուլ. Անվտանգ և դիմակայուն քաղաքի գործողությունների պլանի մշակում	67
• Չորրորդ փուլ. Պլանի իրականացում	67
• Հինգերորդ փուլ. Մշտադիտարկում և վերահսկողություն	68
• Ինչպե՞ս ֆինանսավորել աղետների ռիսկի նվազեցման գործընթացը	69

«Դարձնենք քաղաքները դիմակայուն. իմ քաղաքը պատրաստվում է» գլոբալ քարոզարշավի գործընկերները 74

Հապավումների ցանկ 78
Հավելվածներ 81



Նկար՝ UCLG

▶ «Ստամբուլի բնակչությունը շատ է տառապել պատշաճ պլանավորման բացակայության պատճառով, քանի որ քաղաքը կառուցված է սեյսմիկ խզվածքի վրա, որն էլ ավելի է մեծացնում ռիսկի աստիճանը: Այստեղ խիստ արդիական են դառնում երկու հիմնահարց. ինչպես վերականգնել գոյություն ունեցող բնակավայրերը, և ինչպես պլանավորել նորերը՝ սպառնացող վտանգներին համապատասխան: Բոլոր երկրները պետք է համագործակցեն այս դաշտում, կառավարությունները պետք է ստեղծեն մեխանիզմներ և դրսևորեն աշխատանքների իրականացման կամք, հասարակական կազմակերպություններն ու հանրությունը նույնպես պետք է աջակից լինեն այս գործընթացներին, իսկ մասնավոր հատվածը պատրաստ պետք է լինի կատարել համապատասխան ներդրումներ: Հարկ է ձեռնարկել կոնկրետ քայլեր հստակ սահմանված պլանով, իսկ քաղաքները պետք է միմյանց հետ համագործակցեն, քանի որ բոլորն էլ գտնվում են նմանատիպ վտանգների սպառնալիքի տակ: Մենք իրավունք չունենք ժամանակ կորցնել, քանի որ այն կբերի ավելի շատ մարդկային զոհերի և տնտեսական կորստի: Ստամբուլի փորձի համաձայն, քաղաքային բնակավայրերը պետք է ձևափոխվեն, սակայն համայնքի բնակիչները պետք է ներգրավված լինեն այդ գործընթացում: Գործը միայն վերևից ներքև չի կատարվում, այլ նաև ներքևից վերև»:

Պրն. Կադիր Տայրիաս՝ Ստամբուլի քաղաքապետ, «Միավորված քաղաքներ և տեղական ինքնակառավարման մարմիններ» (UCLG) շարժման նախագահ

Մեջբերում Միավորված ազգերի Ընդհանուր վեհաժողովի՝ «Աղետների ռիսկի նվազեցման» թեմատիկ քննարկումից, փետրվար, 2011թ.

Էջ 6-ի նկարը ձախից աջ. Մարգարեյա Վոլշորոմ՝ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի աղետների ռիսկի նվազեցման գծով ներկայացուցիչ, ՄԱԱՄՄ-ի և Դեվիդ Կեդման՝ Տեղական իշխանությունները հանուն կայունության ընկերության (ICLEI) նախագահ

Մարսելո Էրբարո՝ Մեխիկոյի քաղաքապետ և Կլիմայի փոփոխության քաղաքապետների համաշխարհային խորհրդի նախագահ,

Յուրգեն Նիմիշ՝ Բոննի քաղաքապետ և Կլիմայի փոփոխության քաղաքապետների համաշխարհային խորհրդի փոխնախագահ, Գերմանիա,

Շեյխ Սամադու Աբիբուլայ Դիեյ՝ Սեյնթ Լյուիսի քաղաքապետ, Սենեգալ, Էնրիկե Գոմես՝ Լարեյնագա-Մալպախիլոյի քաղաքապետ, Նիկարագուա,

Ասկ Պեյերսոն Ֆրիկբերգ՝ Կարլշրադի փոխքաղաքապետ, Շվեդիա, Ջոի Սալսեդա՝ Ալբայի նահանգապետ, Ֆիլիպիններ:

Առաջին քաղաքապետերը, որոնք 2010թ. մայիսին Գերմանիայի Բոնն քաղաքում կայացած «Դիմակայուն քաղաքները» թեմայով համագումարի ժամանակ անդամակցեցին «Դարձնենք քաղաքները դիմակայուն» քարտաշավին:

Նախարան

Այսօր աշխարհի բնակչության մեծ մասն ապրում է քաղաքներում, ուստի վերջիններս ավելի անվտանգ դարձնելը երկարաժամկետ մարտահրավեր է: Քաղաքներն ազգային զարգացման շարժիչ ուժն են, իսկ վերջիններիս կառավարման համակարգերն ու կարողությունները շատ դինամիկ: Ողջ պատմության ընթացքում աղետալի երևույթները մշտապես խաթարել են քաղաքային կյանքի բնական ընթացքը: Հիդրոդերևութաբանական վտանգավոր երևույթները (<ՎԵ) և փոփոխվող կլիման, երկրաշարժերը և մարդածին վտանգավոր երևույթներից առաջացած արտակարգ իրավիճակները գնալով ավելի մեծ ազդեցություն են ունենում մարդկանց կենսագործունեության և քաղաքների զարգացման ընթացքի վրա:

Տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների համար նախատեսված սույն ձեռնարկը քաղաքապետերին, մարզպետներին, համայնքապետերին և այլոց տրամադրում է աղետների դիսկի կառավարման ընդհանուր հենք և այնպիսի գործելակերպի և գործիքների ամբողջություն, որը հաջողությամբ արդեն իսկ կիրառվում է տարբեր քաղաքներում՝ նշված նպատակի իրականացման համար: Ձեռնարկում ներկայացված են հետևյալ հարցերի պատասխանները. **ինչու՞**՝ է դիսկի նվազեցումն անհրաժեշտ, **ինչպիսի**՞ ռազմավարություն ու միջոցառումներ են անհրաժեշտ, **ինչպե՞ս** է անհրաժեշտ այն իրականացնել:

Մեծ և փոքր քաղաքները և քաղաքապետարանները տարբեր են իրենց մեծությամբ, սոցիալական, տնտեսական և մշակութային ուղղվածությամբ, և, իհարկե, դիսկի ազդեցության աստիճանով, ինչը ենթադրում է, որ նրանցից յուրաքանչյուրը խնդիր յուրովի և այլ կերպ կդիտարկի:

Գաղափարը հետևյալն է. կայուն զարգացումն ապահովելու համար դիմակայունությունը և աղետների դիսկի նվազեցումը պետք է լինեն քաղաքի պլանավորման և ռազմավարության անբաժան մասը: Վերջինիս իրականացման համար հարկավոր են ամուր համագործակցային մեխանիզմներ ու լայնածավալ, ակտիվ մասնակցություն: Քարոզարշավի գերակա ուղղությունների և սույն ձեռնարկում բերված տեղեկատվության կիրառումը կաջակցի քաղաքներին և տեղական ինքնակառավարման մարմիններին փոխանակել գիտելիքներ, ստանալ տեղեկատվություն, մշակել և կիրառել աշխատանքների արդյունավետ իրականացման համապատասխան չափորոշիչներ և արձանագրել ձեռքբերումներն ու առաջընթացը:

Օգտագործելով այս հնարավորությունը, շնորհակալություն ենք հայտնում բոլոր նրանց, ովքեր ներկայումս ընդգրկված են «դիմակայուն քաղաքների շարժման» գործընթացում, և մենք քաջալերում և ողջունում ենք Ձեր մեծ թվով գործընկերների ներգրավումն ու համագործակցությունը մեզ հետ: Երախտիքի խոսքն՝ ուղղված սույն ձեռնարկի մշակմանը մասնակցություն ցուցաբերած մասնագետներին, ովքեր տրամադրել են իրենց գիտելիքները, փորձը և ներ են դրել ֆինանսական միջոցներ՝ ներկայացված է Հավելվածներ բաժնից առաջ:

ՄԱԱՆՄՌ-ն հայցում է Ձեր կարծիքը բովանդակության, օրինակների և ձևաչափի վերաբերյալ՝ հետագա հրատարակումները բարելավելու նպատակով:

Մարզարեպա Վուլչորոմ՝

ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի աղետների դիսկի նվազեցման գծով հատուկ ներկայացուցիչ, ՄԱԱՆՄՌ

Դեվիդ Կեդման՝

Վանկուվերի փոխքաղաքապետ և Տեղական իշխանությունները հանուն կայունության ընկերության (ICLEI) նախագահ, որը հյուրընկալեց 2010թ. մայիսին կայացած «Դարձնենք քաղաքները դիմակայուն» քարոզարշավի մեկնարկը



Նվարդ՝ UNISDR



▶ «Աղետների ռիսկի նվազեցումը ներդրում է, այլ ոչ թե ծախս: Այն մեծացնում է բիզնես եկամուտները: Ալբայում մեծ ներդրումներ են կատարվել, նույնիսկ թայֆուններից և հրաբխային ժայթքումներից հետո: Կլիմայի փոփոխության հարմարվողականությունը և ռիսկի նվազեցումը թույլ են տալիս ապահովել զարգացման կայուն ընթացքը աղետներին համընթաց, քանի որ վերջիններս չեն խաթարում մարդկանց կյանքի բնական ընթացքը, երբ տեղական իշխանությունը աղետների կառավարման պատասխանատվությունն իր վրա է վերցնում»:

Ջոի Սայսեռա, Ալբայի նահանգապետ, Ֆիլիպիններ
Առաջին չեմպիոն, Քաղաքները դիմակայուն դարձնելու քարոզարշավ

Ներածություն

Ձեռնարկի նպատակը

Սույն ձեռնարկը նախատեսված է տեղական ինքնակառավարման մարմինների, ղեկավարների և քաղաքականություն մշակողների համար՝ նպատակ ունենալով աջակցել աղետների ռիսկի նվազեցման և դիմակայունության բարձրացման միջոցառումների իրագործման ընթացքում հանրային քաղաքականության, որոշումների կայացման և կազմակերպչական աշխատանքների իրականացմանը: Ձեռնարկը գործնական ուղեցույց է: Այն հնարավորություն է տալիս հասկանալ և իրագործել «Քաղաքները դիմակայուն դարձնելու տաս գերակա ուղղությունները», որոնք ներկայացված են «Դարձնենք քաղաքները դիմակայուն. իմ քաղաքը պատրաստվում է» գլոբալ շարժման ծրագրում:

Ձեռնարկը մշակվել է քարոզարշավի գործընկերների, մասնակից քաղաքների և տեղական կառավարման մարմինների գիտելիքի և փորձառության հիման վրա: Ձեռնարկում դիտարկվում է տեղեկատվության, գիտելիքների, կարողությունների և գործիքների ավելի լայն հասանելիության հարցը, որը հնարավորություն կտա արդյունավետորեն կառավարել աղետների ռիսկն ու հիդրոլոգերեվոթաբանական վտանգավոր երևույթները: Առանց շատ մանրամասնելու, այստեղ ընդհանուր ներկայացվում են այն հիմնական ռազմավարություններն ու միջոցառումները, որոնք անհրաժեշտ է իրականացնել՝ աղետներին դիմակայելու կարողություններ ստեղծելու և կայուն զարգացում ապահովելու համար: Յուրաքանչյուր քաղաք և տեղական ինքնակառավարման մարմին յուրովի է որոշելու, թե ինչպես կիրառել նշված միջոցառումներն իր համատեքստում և կարողությունների շրջանակում, ուստի չկան այնպիսի լուծումներ, որոնք կիրառելի են բոլորի համար:

Ձեռնարկի հավելվածներում ներկայացված են մանրամասն տեղեկություններ, այդ թվում՝ համապատասխան էլեկտրոնային կայքերի, ռեսուրսների և գործընկեր քաղաքների օրինակների հղումներ: Էլեկտրոնային տեղեկատվական հարթակը, որտեղ քաղաքներն ու տեղական ինքնակառավարման մարմինները կարող են գետեղել իրենց գործիքները, պլանները, կանոնակարգերն ու գործելակերպերը, լրացնում է այս ձեռնարկը և հասանելի է քարոզարշավի էլեկտրոնային կայքէջի միջոցով հետևյալ հասցեում՝ www.unisdr.org/campaign:

Ձեռնարկում մենք հղում ենք կատարում «քաղաքներին» և «տեղական ինքնակառավարման մարմիններին», սակայն ներկայացված մտքերը կարող են կիրառելի լինել նաև տարբեր մասշտաբների և մակարդակների այլ միավորների համար, այդ թվում՝ տարածքային, մարզային, քաղաքային, համայնքային և գյուղական մակարդակներում:



Ճապոնիայի Քոբե քաղաքը, որն ունի 1.5 միլիոն բնակչություն, մեծ կորուստներ կրեց 1985 թվականի հունվարին տեղի ունեցած Մեծ Հանշին-ավաջի երկրաշարժի պատճառով (7.2 Ռիխտերի սանդղակով): Արդյունքում, խաթարվեց տարածաշրջանի ամենասկզիվ նավահանգիստներից մեկի գործունեությունը: Վերականգնման աշխատանքներն ուղղված էին ավելի անվտանգ քաղաք ստեղծելուն, որտեղ բարդ ենթակառուցվածքների ու ծառայությունների մատուցման համակարգերի զարգացմանը համընթաց հզորա- նում է հասարակության մասնակցությունը, կրթությունը և համայնքային համագործակցությունը:

Բովանդակություն

Քաղաքապետերը, տեղական ինքնակառավարման մարմինները և որոշում կայացնողները հաճախ են բախվում փոքր և միջին մասշտաբի և, ավելի հազվադեպ, մեծ մասշտաբի արտակարգ իրավիճակների հետ, որոնք առաջանում են բնածին և մարդածին վտանգավոր երևույթներից: Կլիմայի փոփոխությունը և հիդրոոդերևութաբանական վտանգավոր երևույթները մեծացնում են քաղաքների աղետների ռիսկին ենթարկվելու հավանականությունը: Ակնհայտ է նաև այն, որ ընթացիկ զարգացման գործընթացները նույնպես կարող են առաջացնել բնապահպանական փոփոխություններ, որոնք հաշվի չառնելու և համապատասխան միջոցառումներ չձեռնարկելու դեպքում նույնպես նպաստում են ռիսկի մեծացմանը:

Տեղական ինքնակառավարման մարմիններն առաջինն են արձագանքում արտակարգ իրավիճակներին և այս գործառույթն իրականացնելու համար հաճախ ունեն պարտավորությունների բավականին լայն շրջանակ ու, միաժամանակ, ոչ բավարար կարողություններ: Նրանք հավասարապես առաջին պատասխանատուներն են, երբ հարցը վերաբերում է աղետների ռիսկի կառավարմանն ու նվազեցմանը, վաղ ազդարարման համակարգերի ստեղծմանը, հատուկ ճգնաժամային կառավարման համապատասխան մեխանիզմների և կառույցների հիմնադրմանը:

Հաշվի առնելով այս ամենը և նպատակ հետապնդելով նշված ղժվարությունները հաղթահարելու համար զարգացնել տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունները՝ անհրաժեշտ է վերանայել վերջիններիս մանդատը, պարտականություններն ու իրավունքները, ինչպես նաև համապատասխան միջոցների հատկացման հարցը:

$$\text{վտանգ} \times \text{խոցելիություն} \times \text{սպառնալիք} = \text{աղետների ռիսկ}$$

աղետներին դիմակայելու կարողություն

* Այս բանաձևը հաշվարկման համար չի կարելի օգտագործել, այն աղետների ռիսկի որակական նկարագիրն է:

Հասկանալու համար, որ աղետները «բնական չեն լինում», պետք է հասկանալ ռիսկի տարրերը: Ռիսկը բաղկացած է **վտանգավոր երևույթից** (օրինակ՝ ցիկլոն, երկրաշարժ, ջրհեղեղ կամ հրդեհ), որը որոշակի պայմանների առկայության դեպքում, կարող է դառնալ **սպառնալիք** տվյալ տարածքում գտնվող մարդկանց և ակտիվների համար: Ռիսկի մյուս տարրը **խոցելիությունն է**, երբ տվյալ համակարգը (համայնք, քաղաք, պետություն) լիարժեք պատրաստ չէ կամ չունի իրեն սպառնացող վտանգավոր երևույթին դիմակայելու համապատասխան կարողություններ և փաստացիորեն վտանգված է վերջինիս ծագման դեպքում (օրինակ՝ սեյսմավտանգ տարածքում ոչ սեյսմակայուն շենքերի առկայությունը, որոնք երկրաշարժի որոշակի ուժգնության դեպքում կարող են փլուզվել՝ պատճառ դառնալով մարդկային զոհերի և նյութական կորստի): Այս տարրերը հաստատուն չեն և կարող են փոփոխվել, եթե կարողանանք զարգացնել աղետների ռիսկի կառավարմանն ուղղված հաստատույթենական և մասնագիտական կարողություններ: Պետք է գիտակցել, որ ոչ հաշվենկատ զարգացումը կարող է մեծացնել խոցելիությունը և պատճառ դառնալ նաև վտանգի ծագման համար՝ մեծացնելով ռիսկը տվյալ տարածքում:

Ինչո՞ւ են քաղաքները ենթակա ռիսկի

Ռիսկի գործոնները քաղաքային միջավայրում

Քաղաքներն ու քաղաքային տարածքները փոխկապակցված գործառույթների և ծառայությունների խիտ և, միաժամանակ, բարդ համակարգեր են: Որպես այդպիսին, դրանք բախվում են մի շարք խնդիրների հետ, որոնցով էլ պայմանավորված է աղետների ռիսկը տվյալ տարածքում: Այս խնդիրներից յուրաքանչյուրը դիտարկելու համար, որպես ընդհանուր տեսլականի մի մաս, կարող են մշակվել ռազմավարություններ և քաղաքականություններ՝ բոլոր մեծության քաղաքներն ավելի դիմակայուն և բնակության համար անվտանգ դարձնելու համար:

Ամենաէական ռիսկի գործոններից են.


- Քաղաքներում աճող բնակչությունը և խտությունը, բնակավայրերի ավելացումը ավիամերձ տարածքներում, գետերի ավազաններում, անկայուն լանջերում և աղետավտանգ տարածքներում:
- Միջոցների և կարողությունների կենտրոնացումը ազգային մակարդակում, աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման համար ոչ հստակ իրավասությունները և պարտականությունները տեղական մակարդակում, ինչպես նաև հարկաբյուջետային, մարդկային և մասնագիտական ռեսուրսների անբավարար մակարդակը տեղական կառավարման ոլորտում:
- Ոչ արդյունավետ կառավարումը տեղական մակարդակում, ինչպես նաև պլանավորման և քաղաքային կառավարման գործընթացներում տեղական շահագրգիռ կողմերի անբավարար մասնակցությունը:
- Ջրային ռեսուրսների անհամապատասխան կառավարումը, անբավարար ջրահեռացման և դրենաժային համակարգերը, անբավարար կամ ոչ արդյունավետ աղբահանությունը, որոնք առողջապահական խնդիրների, համաճարակների, հեղեղումների և սողանքների առաջացման պատճառ են դառնում:
- Էկոհամակարգերի վատթարացումը մարդկային անհաշվենկատ այնպիսի գործունեության արդյունքում, ինչպիսիք են՝ ճանապարհային շինարարությունը, մթնոլորտի աղտոտումը, հողերի դեգրադացիան և բնական պաշարների անկառավարելի արդյունահանումը, որոնք վտանգում են զարգացման գործընթացը՝ միաժամանակ մեծացնելով նաև աղետների ռիսկը:
- Հնացող ենթակառուցվածքները, վատ կառուցված շենքերն ու շինությունները, որոնք կարող են փլուզման պատճառ դառնալ:
- Արտակարգ իրավիճակների ոչ արդյունավետ և թույլ համակարգված կառավարումը, որը նվազեցնում է աղետներին պատրաստվածության և արագ արձագանքման կարողությունները:
- Կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունները, որի արդյունքում, կախված տվյալ

տեղանքի յուրահատկություններից, հնարավոր է տեղի ունենա ջերմաստիճանի կտրուկ բարձրացում կամ նվազում, ինչպես նաև տեղումների քանակի և ինտենսիվության ավելացում կամ կրճատում: Արդյունքում, կփոփոխվի հեղեղումների և հիդրոոլերևութաբանական վտանգավոր երևույթների հետ կապված այլ աղետալի իրավիճակների հաճախականությունը, ուժգնությունը և տեղանքը:

Ամբողջ աշխարհում ավելանում է վտանգավոր երևույթների թիվը, ինչը բացասաբար է ազդում մարդկանց վրա (միտումները ներկայացված են Նկար 1-ում): Վերջիններիս ազդեցությունը յուրաքանչյուր համայնքի կամ քաղաքի վրա տարբեր ձևով է արտահայտվում, կախված տվյալ տարածքում առկա վտանգավոր երևույթների սպառնալիքի մակարդակից և խոցելիության աստիճանից (տես ավելին՝ Գլուխ 2, Գերակա ուղղություն 3):

Գծապատկեր 1-ում պատկերված են աղետալի երևույթները համընդհանուր մասշտաբով, որտեղ ներկայացված են վերջիններիս աճման միտումը և փաստացի աղետների թվաքանակը: Նկարում երևում է, որ գրանցված սեյսմիկ երևույթների թիվը, համեմատաբար հաստատուն է (ամենակործանարարը՝ մարդկային կորուստների առումով), սակայն փոթորիկների և ջրհեղեղների թիվը կտրուկ ավելացել է: Աշխարհի շատ մասերում հիդրոոլերևութաբանական վտանգավոր երևույթների հետ կապված ռիսկը գնալով մեծանում է (տնտեսական վնասների ռիսկը նույնպես մեծացել է, թեև ավելի քիչ մահվան դեպքեր են գրանցվել): Հեղեղումների, երաշտների, սողանքների և տաք հոսանքների թվաքանակն ու ուժգնությունը կարող է մեծ ազդեցություն ունենալ քաղաքային համակարգերի և դիմակայման ռազմավարությունների վրա: Կախված տեղանքից, կլիմայի փոփոխության արդյունքում հավանական է շատ շրջաններում ավելանա տեղումների հաճախականությունը: Վերջինս ենթադրում է փոփոխություններ՝ հեղեղումների միտումների առումով և նպաստում է ծովի մակարդակի կտրուկ բարձրացմանը:

Համաձայն Կլիմայի փոփոխության միջկառավարական խորհրդի (IPCC) կլիմայի փոփոխության



հարմարվողականության առաջընթացի սպահովման համար հիդրոոլերևութաբանական վտանգավոր երևույթների և աղետների ռիսկի կառավարմանն ուղղված հատուկ հաշվետվության, նշված վտանգավոր երևույթները պետք է հաշվի առնվեն հողօգտագործման հետագա պլաններում և զարգացման այլ գործառույթներում: Ազդեցության մեծացումը՝ սպառնալիքի և խոցելիության առումով, մեծապես կախված կլիմայի մարդկության գործունեությունից (տես՝ Հավելված 3):

Ո՞րն է դիմակայուն քաղաքը

Նվաղ՝ UNISDR



Սան Ֆրանցիսկո, Սերու, Ֆիլիպիններ, Հոյոզիս գործողությունների ծրագրի ինտեգրումը տեղական մակարդակի պլանավորման գործընթաց:

Դիմակայուն քաղաքը.

- **Այն քաղաքն է**, որտեղ աղետների ռիսկը հասցված է նվազագույնի, քանի որ բնակչությունն ապրում է այնպիսի տներում և թաղամասերում, որոնք ունեն կազմակերպված ծառայություններ և շինարարական նորմերին համապատասխան ենթակառուցվածքներ: Դիմակայուն քաղաքների հեղեղումների ենթակա հարթավայրերում կամ կտրուկ լանջերի վրա չկան կառուցված անօրինական շինություններ և բնակավայրեր, որոնց առկայությունը այլ քաղաքների վերոհիշյալ վտանգավոր վայրերում հաճախ պատճառաբանվում է շինարարության համար ոչ բավարար տարածքներով:
- **Այն քաղաքն է**, որն ունի մասնագիտացված, գրագետ և հաշվետու տեղական կառավարման մարմին, որը հոգ է տանում կայուն և անվտանգ ուղղանիվածացման ուղղությամբ և հատկացնում է անհրաժեշտ միջոցներ՝ աղետներից սեփական ուժերով դիմակայելու կարողությունների զարգացման համար:
- **Այն քաղաքն է**, որտեղ տեղական իշխանությունները և բնակչությունը հասկանում են գոյություն ունեցող աղետների ռիսկերը և տեղական մակարդակում ստեղծում այդ ռիսկերն առաջացնող վտանգավոր երևույթների, խցցելիության և հնարավոր կորուստների վերաբերյալ ընդհանուր ու հասանելի տեղեկատվական բազա, որը ներառում է նաև տեղեկատվություն խցցելի խմբերի մասին:
- **Այն քաղաքն է**, որտեղ բնակիչներն ունեն համապատասխան լիազորություններ տեղական իշխանությանը կայացնելու և իրենք քաղաքի պլանավորման միջոցները:
- **Այն քաղաքն է**, որն աղետների հնարավոր ազդեցությունը կանխորոշելու և հետևանքները մեղմելու համար իրականացրել է համապատասխան քայլեր՝ միավորելով մշտադիտարկման և վաղ ազդարարման տեխնոլոգիաները՝ պաշտպանելու ենթակառուցվածքները, համայնքային ակտիվներն ու բնակիչներին, այդ թվում՝ նրանց տներն ու ունեցվածքը, մշակութային ժառանգությունը, բնապահպանական և տնտեսական կապիտալը և կարող է նվազագույնի հասցնել ծայրահեղ ինքնազոհման արտաբանական պայմաններից, երկրաշարժերից և այլ բնածին և մարդածին վտանգավոր երևույթներից առաջացող ֆիզիկական և սոցիալական կորուստները:
- **Այն քաղաքն է**, որն արտակարգ իրավիճակներում կարող է սեփական ուժերով օպերատիվ արձագանքել ստեղծված իրավիճակին և իրականացնել անհետաձգելի վերականգնողական միջոցառումներ՝ ուղղված կենսական կարևոր ծառայությունների, սոցիալական, հաստատությունական և տնտեսական բնականոն կենսագործունեության վերականգնմանը:
- **Այն քաղաքն է**, որը գիտակցում է, որ վերոնշյալ գործառնությունների մեծ մասի իրականացումը կարևորագույն նշանակություն ունի անբարենպաստ բնապահպանական փոփոխությունների և ջերմոցային զագերի արտանետումների նվազեցման, ինչպես նաև կլիմայի փոփոխությանը դիմակայելու կարողությունների ստեղծման ու զարգացման համար:

խանությունների հետ մասնակցելու որոշումներ կայացնելու և իրենք քաղաքի պլանավորման գործընթացներին և, որտեղ արժևորում են տեղական գիտելիքը, կարողությունն ու միջոցները:

• **Այն քաղաքն է**, որն աղետների հնարավոր ազդեցությունը կանխորոշելու և հետևանքները մեղմելու համար իրականացրել է համապատասխան քայլեր՝ միավորելով մշտադիտարկման և վաղ ազդարարման տեխնոլոգիաները՝ պաշտպանելու ենթակառուցվածքները, համայնքային ակտիվներն ու բնակիչներին, այդ թվում՝ նրանց տներն ու ունեցվածքը, մշակութային ժառանգությունը, բնապահպանական և տնտեսական կապիտալը և կարող է նվազագույնի հասցնել ծայրահեղ ինքնազոհման արտաբանական պայմաններից, երկրաշարժերից և այլ բնածին և մարդածին վտանգավոր երևույթներից առաջացող ֆիզիկական և սոցիալական կորուստները:

• **Այն քաղաքն է**, որն արտակարգ իրավիճակներում կարող է սեփական ուժերով օպերատիվ արձագանքել ստեղծված իրավիճակին և իրականացնել անհետաձգելի վերականգնողական միջոցառումներ՝ ուղղված կենսական կարևոր ծառայությունների, սոցիալական, հաստատությունական և տնտեսական բնականոն կենսագործունեության վերականգնմանը:

• **Այն քաղաքն է**, որը գիտակցում է, որ վերոնշյալ գործառնությունների մեծ մասի իրականացումը կարևորագույն նշանակություն ունի անբարենպաստ բնապահպանական փոփոխությունների և ջերմոցային զագերի արտանետումների նվազեցման, ինչպես նաև կլիմայի փոփոխությանը դիմակայելու կարողությունների ստեղծման ու զարգացման համար:

Դիմակայուն ազգերի և համայնքների ստեղծման գլոբալ օրակարգը և քարոզարշավը

Հյոգոյի գործողությունների ծրագիր

Հյոգոյի 2005-2015թթ. «Ազգերի և համայնքների՝ աղետներին դիմակայելու ունակությունների զարգացում» գործողությունների ծրագիրը (ՀԳԾ) ընդունվել է 2005թ.-ին Միավորված ազգերի կազմակերպության անդամ պետությունների կողմից և մինչ այժմ հանդիսացել է ուղղորդիչ գործիք ազգային քաղաքականության մշակման գործընթացում և միջազգային կազմակերպությունների համար, որոնք փորձում են էականորեն նվազեցնել բնական վտանգավոր երևույթների պատճառած կորուստները: Գործողությունների այս համապարփակ ծրագիրը դիտարկում է պետությունների, տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների դերը և կոչ է անում քաղաքացիական հասարակությանը, գիտական ոլորտին, կամավորական կազմակերպություններին և մասնավոր հատվածին միավորելու իրենց ուժերը: Այն խրախուսում է լիազորությունների և ռեսուրսների ապակենտրոնացումը տեղական մակարդակում՝ աղետների ռիսկի նվազեցման իրականացման համար:

Հյոգոյի գործողությունների ծրագրի վերջնական արդյունքում ակնկալվում է էականորեն նվազեցնել աղետներից հնարավոր կորուստները՝ մարդկային կյանքի, համայնքների և պետությունների սոցիալական, տնտեսական և բնապահպանական ակտիվների առումով: ՀԳԾ հինգ առաջնահերթ գործողություններն են՝



- 1. Զարգացնել հաստատութենական կարողությունները.** երաշխավորել, որ աղետների ռիսկի նվազեցումը պետական և տեղական նշանակության գերակայություն է և գտնվում է ամուր հաստատութենական հիմքերի վրա:
- 2. Ճանաչել ռիսկերը.** բացահայտել, գնահատել և վերահսկել աղետների ռիսկերը, ինչպես նաև ամրապնդել վաղ ազդարարման համակարգը:
- 3. Զարգացնել գիտելիքները և իրազեկվածությունը.** օգտագործել գիտելիքները, նորարարությունը և կրթությունը՝ բոլոր մակարդակներում անվտանգության և դիմակայման մշակույթ ձևավորելու համար:
- 4. Նվազեցնել ռիսկը.** նվազեցնել հիմքային ռիսկի գործոնները՝ հողօգտագործման պլանավորման, բնապահպանական, սոցիալական և տնտեսական միջոցառումների իրականացման միջոցով:
- 5. Լինել պատրաստված և պատրաստ գործելու.** բարձրացնել աղետների արդյունավետ արձագանքման պատրաստվածությունը բոլոր մակարդակներում:

Կարդացե՛ք ավելին՝ www.unisdr.org/hfa

ԳԼՈՒԽ 1

Ինչո՞ւ կատարել ներդրումներ աղետների ռիսկի նվազեցման ոլորտում



Նկարը՝ UNISDR

2008թ.-ի Սիչուան երկրաշարժից հետո իրականացվող վերակառուցումը Չինաստանի այլ համայնքների և քաղաքների աջակցությամբ, որոնք տրամադրեցին փնտրեսական, փեխնիկական, հոգեբանական և սոցիալական աջակցություն: Քաղաքային և կիսազյուղական բնակավայրերը, ենթակառուցվածքները, դպրոցներն ու արդու-նաբերությունը վերակառուցվեցին և բացվեցին երկու փարվա ընթացքում, ինչպես Չենգդուի այս Դուօհանգյան կիսաքաղաքային բնակավայրում:

Աղետների ռիսկի նվազեցման և դիմակայունության բարձրացման գործընթացներում ներդրումներ կատարելու առավելությունները

Գոյություն ունեն մի շարք պատճառներ, որոնց հիման վրա քաղաքապետներն ու քաղաքապետարանները դիմակայուն քաղաք ունենալու հիմնահարցը պետք է դասեն իրենց քաղաքական և կայուն զարգացման ծրագրերի առաջնահերթությունների շարքում: Տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ղեկավարների համար աղետների ռիսկի նվազեցումը կարող է իրավասության ապահովման առումով կարևոր հնարավորություն հանդիսանալ, իսկ պաշտպանվածության հարցերին ուշադրություն դարձնելը կբարելավի բնապահպանական, սոցիալական և տնտեսական պայմանները, ինչպես նաև հնարավորություն կընձեռի պայքարելու կլիմայի փոփոխության դեմ և, որպես արդյունք, հասարակությանը կընձեռի բարգավաճ և առավել անվտանգ ապրելու պայմաններ՝ նախկինի համեմատ:

► «Գոյություն չունի այնպիսի երևույթ, ինչպիսին է «բնական աղետը»: Բնական վտանգավոր երևույթները (ջրհեղեղներ, երկրաշարժեր, սողանքներ և փոթորիկներ) աղետներ են դառնում մարդկային և սոցիալական խոցելիության հետևանքով, որը կարելի է լուծել վճռական քաղաքականությունների ու գործողությունների իրականացմամբ և համայնքային շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցությամբ: Աղետների ռիսկի նվազեցման ոլորտում կատարված ներդրումների համար զղջալ հարկավոր չէ, քանի որ այն պաշտպանում է մարդկային կյանքը, ունեցվածքը, դպրոցները, բիզնեսները և աշխատատեղերը»:

Չենգրուի գործողությունների հռչակագիր, Օգոստոս 2011թ.

Ձեռքբերումները ներառում են.

ՏԻՄ ղեկավարության գործառույթների լիարժեք իրականացում՝

- ավելի մեծ հավատ և վստահություն տեղական մակարդակում քաղաքական կառույցների և իշխանությունների նկատմամբ,
- գործառույթների ապակենտրոնացման և ռեսուրսների նպատակային օգտագործման հնարավորություններ,
- համապատասխանություն միջազգային չափանիշներին և գործելակերպին:

Սոցիալական և մարդկային ձեռքբերումներ՝

- աղետների կամ արտակարգ իրավիճակների ժամանակ փրկված կյանքեր և նյութական արժեքներ, ինչպես նաև տուժածների ու նյութական կորուստների կտրուկ նվազում,
- քաղաքացիների ակտիվ մասնակցություն և համապատասխան հարթակի ստեղծում՝ տեղական զարգացման ապահովման համար,
- համայնքային ակտիվների և մշակութային ժառանգության պահպանում:

Տնտեսական աճ և աշխատատեղերի ստեղծում՝

- ներդրողների համար առավել գրավիչ միջավայր, որն աղետների դեպքում երաշխավորում է ներդրումների անվտանգությունը և կորուստներն ու վնասները հասցնում նվազագույնի, ինչն, իր հերթին, նպաստում է անվտանգության չափանիշներին համապատասխանող շենքերի, շինությունների և այլ սեփականության ձևերի կառուցման համար տրամադրվող ներդրումների աճին,
- ավելի մեծ թվով կապիտալ ներդրումներ ենթակառուցվածքներում, ներառյալ շինությունների ամրացումը, վերակառուցումն ու վերանորոգումը,
- հարկային դաշտի բարելավում, գործարարության և ներդրումների ավելի լայն հնարավորություններ, տնտեսական

► **Իրապես մասնակցային մոտեցումները դիմակայման մշակույթի ստեղծման համար հնարավորություն են տալիս առաջ քաշել նորարարական համայնքային նախաձեռնություններ:** Կարևոր գործոն է քաղաքային իշխանությունների և վերջինիս ենթակայության տակ գտնվող առավել խոցելի բնակիչների փոխհարաբերությունները, որտեղ առկա խնդիրներն ու համայնքային առաջնահերթությունները պետք է լինեն հստակ և ստանան համապատասխան լուծում:

աճ և աշխատատեղերի ստեղծում, քանի որ ավելի անվտանգ ու արդյունավետ կառավարվող քաղաքներն ավելի գրավիչ են ներդրողների համար:

Բնակության համար ավելի բարենպաստ համայնքներ՝

- հավասարակշռված էկոհամակարգեր, որոնք խթանում են այնպիսի ծառայությունների զարգացումը, ինչպիսիք են՝ մաքուր ջրի մատակարարում, հանգստի ապահովում, մթնոլորտային արտանետումների նվազեցում և այլն,
- արդյունավետ կրթություն անվտանգ դպրոցներում, ինչպես նաև բարելավված առողջական պայմաններ և բարեկեցություն:

Ազգային, միջազգային փորձով և հնարավորություններով կապված և փոխհամագործակցող քաղաքներ՝

- աղետների դիմակայման ոլորտում համագործակցող քաղաքների և գործընկերների ընդլայնվող ցանց, որոնք քարոզարշավի միջոցով կիսում են իրենց լավագույն փորձը, հաջողված մոդելներն ու ձեռքբերումները,
- գիտելիքի ծավալուն պաշար ունեցող առավել քաջատեղյակ և իրազեկ քաղաքացիներ:

Օրինակ

Վենետիկ. Քաղաքի մշակութային ժառանգության պահպանումը

Վենետիկի քաղաքապետ՝ Զիորջիո Օրսոնին աշխարհի ամենամեծ մշակութային վայրերից մեկի պահպանի իր դերին շատ լուրջ է վերաբերվում, հետևաբար և այն բազմազան աշխատատեղերին և բիզնեսներին, որ այնտեղ ստեղծվում են: Տարեկան մոտ 20 միլիոն զբոսաշրջիկ է այցելում Վենետիկ: Քաղաքը գտնվում է ծովի մակարդակի վրա, և վերջինիս ցանկացած փոփոխություն քաղաքը դարձնում է խոցելի հեղեղումներից՝ վտանգի տակ դնելով UNESCO-ի կողմից պահպանվող համաշխարհային ստեղծագործական և մշակութային ժառանգությունը: Թեև առաջին հայացքից կարող է թվալ, թե այս հարցը միայն Վենետիկին է վերաբերում, սակայն շատ առումներով այն կլիմայի փոփոխության և, ընդհանուր առմամբ, ծովի մակարդակի բարձրացման հետ կապված խնդիր է: «Որոշ առումով, մենք ստիպված էինք հատուկ ջանքեր գործադրել մշակութային ժառանգության պահպանման համար: Այդ նպատակի իրագործման համար, ՄԱԱՄՈ-ի կողմից մենք ճանաչվեցինք որպես մոդել՝ այլ քաղաքների համար», - նշեց Վենետիկի CORILA հետազոտական կենտրոնի տնօրեն և ՄԱԱՄՈ «Դարձնենք քաղաքները դիմակայուն» քարոզարշավի համակարգող՝ Պիերպաոլո Կամպոստրինին: CORILA-ն համակարգում է Վենետիկի ծովածոցի հետ կապված գիտահետազոտական աշխատանքները, որը երկար տարիներ եղել է գիտական և հանրային քաղաքականությանը զբաղվող երկու համայնքների վեճի առարկա: Պրն. Կամպոստրինին նշում է, որ քարոզարշավի արդյունքում այս երկու համայնքների միջև երկխոսությունն ընդլայնվել է՝ հնարավորություն տալով հետազոտության արդյունքները թրամադրել այլ քաղաքների: Այիքներն արգելափակող շարժական պատնեշը կգործարկվի 2014 թվականին, որը Վենետիկ քաղաքը կայուն և «ջրհեղեղներից զերծ» պահելու նպատակով ստեղծված մի շարք կազմակերպությունների համատեղ աշխատանքի արդյունք է:

Ավելին կարող եք կարդալ <http://www.corila.it/ENCorila.asp> կայքէջում:


Սան Ֆրանցիսկո, Կալիֆորնիա. Դիմակայունության անիվը

Արտաքինից «դիմակայունության» նպատակը, համընդհանուր առմամբ, ընդունվում է որպես իդեալ՝ անհատի, կազմակերպության և համայնքի մակարդակով: Այնուամենայնիվ, հաշվի առնելով քաղաքի բարդ կառուցվածքը և բազմաբնույթ շահագրգիռ կողմերին, դժվար կլինի դիմակայունության բարձրացման հնարավորությունը ձևակերպել այնպես, որ համահունչ լինի բոլոր դերակատարների ընթացիկ առաքելությանն ու նպատակներին: Սան Ֆրանցիսկոյում (Կալիֆորնիա) կիրառվում է «Դիմակայունության անիվը», որն իր ութ գործառնական բնագավառներով կառավարության ներքին և արտաքին գործընկերներին ցույց է տալիս, թե ինչպես իրենց կազմակերպության առաքելությունը կարող է կապված լինել այլ շահագրգիռ կողմերի հետ, որոնք, թեև, աշխատում են միմյանցից շատ տարբերվող բնագավառներում (այսինքն՝ գործակալություններ, որոնք աշխատում են ամրապնդել ֆինանսական անկախությունը աղքատ համայնքներում և արտակարգ իրավիճակների կառավարիչներ, որոնք զբաղվում են աղետներին պատրաստվածության իրազեկման հարցերով):

Լրացուցիչ տեղեկությունների համար տես <http://resilientSF.org> կայքէջում:

Գծապատկեր 2.

Դիմակայունության անիվը




Դիմակայունության բարձրացման ոլորտում կատարված ներդրումը հնարավորության ստեղծում է

Աղետների ռիսկի նվազեցման հարցին հետամուտ չլինելը կարող է հանգեցնել տնտեսության և էկոհամակարգերի լուրջ վնասի, ինչպես նաև բնակչության ու ներդրողների վստահության կորստի: Հաճախակի տեղի ունեցող փոքր և միջին ազդեցությամբ պատահարները և ոչ հաճախակի տեղի ունեցող ուժգին, ավերիչ երևույթները կարող են լրջորեն խաթարել համայնքների բնականոն կենսագործունեությունը (համակարգեր, որոնց միջոցով իրականացվում են սննդի արտադրությունը, ջրի մատակարարումը, բուժսպասարկումը, տրանսպորտային ծառայությունները, աղբահանությունը և հաղորդակցությունը) ինչպես տեղերում, այնպես էլ ամբողջ աշխարհի հետ: Գործարարները և մասնավոր ներդրողները կարող են հեռանալ այն քաղաքներից, որտեղ անտարբերություն են ցուցաբերում աղետների ռիսկի նվազեցման հարցին:

Աղետների ռիսկի նվազեցումը պետք է դառնա համայնքի զարգացման անբաժանելի մասը, որը կնպաստի նաև վերացնելու այն թյուր մոտեցումը, երբ աղետների ռիսկի կառավարման համար հատկացվող բյուջեն համեմատության մեջ է դրվում այլ առաջնահերթությունների հետ և անտեսվում՝ պատճառաբանվելով առկա միջոցների սղությամբ: Աղետների ռիսկի ամբողջական կառավարումն ավելի արդյունավետ է, երբ մի շարք շահագրգիռ կողմերի կարիքներն ու առաջնահերթությունները դիտարկվում են միաժամանակ: Ընդհանուր առմամբ, փաստարկներն ավելի համոզիչ են, երբ աղետների ռիսկի կառավարումը բացահայտորեն նպաստում է տնտեսության և բարեկեցության զարգացմանը: Օրինակ՝

- Լավ նախագծված և համակարգված ջրահեռացման ճանապարհները, որոնք սողանքներ կամ հեղեղումներ չեն առաջացնում, կապահովեն ապրանքների և մարդկանց անխափան տեղափոխումը երկար տարիներ:
- Անվտանգ դպրոցներն ու հիվանդանոցները կապահովեն երեխաների, հիվանդների, ուսուցիչների և առողջապահության ոլորտի աշխատակիցների անվտանգությունը:



Աղետների ռիսկի նվազեցումը բնապահպանական, տնտեսական, սոցիալական և քաղաքական ոլորտների կայուն զարգացման գործընթացների մի մասն է ու գրավականը: **Գծապատկեր 3-ում** ներկայացված է սույն ձեռնարկում քննարկվող որոշ հարաբերությունների կանոնակարգմանը նպաստած ձեռքբերումներ:

Քաղաքականության ուղղությունները

Հիմնվելով աղետների ռիսկի նվազեցման ոլորտում ներդրումների կատարման առավելությունների վրա՝ քաղաքապետերն ու քաղաքապետարանները կարող են նաև դիտարկել աղետների ռիսկի նվազեցումը, որպես առաջնահերթություն սահմանելու աստիճանական մոտեցում՝ նպաստելով կանխարգելման և անվտանգության ապահովման նոր, այլընտրանքային օրակարգերի իրականացմանը (ինչպիսիք են՝ ճանապարհային անվտանգությունը, քաղաքացիների անվտանգությունը, ջրային ռեսուրսների կառավարումը կամ կլիմայի փոփոխության հարմարվողականությունը)։ Քաղաքականության վարման առումով, կանխարգելման ու ռիսկի նվազեցման ոլորտում կատարվող ներդրումները երկարաժամկետ և անտեսանելի են։ Այստեղ էականը ոչ թե ռիսկի նվազեցման և արձագանքման կարողությունների միջև ընտրությունն է, այլ այդ երկուսի փոխկապակցվածությունը։

Ռիսկի նվազեցմանն ու դիմակայունության ամրապնդմանն ուղղված քաղաքականություն մշակելիս կարող են օգտակար լինել հետևյալ դրույթները.

- Ընդունել որոշում, համաձայն որի ձեր քաղաքը կդառնա «Դիմակայուն քաղաք»՝ ստանձնելով աղետների ռիսկի, ինչպես նաև կլիմայի փոփոխության ռիսկի նվազեցման գործընթացները։
- Ապակենտրոնացնել լիազորություններն ու պարտականությունները կառավարման մարմնի տարբեր վարչությունների և ստորաբաժանումների միջև։
- Իրականացնել ռիսկի ուսումնասիրում և գնահատում՝ ինտեգրելով վերջնական արդյունքները աղետների ռիսկի նվազեցման ծրագրերում, քաղաքային զարգացման նախագծերում ու պլաններում։
- Բարձրացնել իրազեկվածության մակարդակը՝ օգտագործելով կ գիտական, կ տեղական գիտելիքներն աղետների ռիսկի նվազեցման գործընթացներում։ Ապահովել տեղական մակարդակում կարողությունների կարևորումը, զարգացումն ու արժևորումը։
- Քաղաքներն էլ ավելի դիմակայուն դարձնելու նպատակով ակտիվորեն մասնակցել ազգային, տարածաշրջանային և միջազգային զարգացումներին ու գործընթացներին՝ փոխանակելով սեփական փորձը՝ միաժամանակ տեղայնացնելով մյուսներինը, և միանալ «Դարձնենք քաղաքները դիմակայուն. իմ քաղաքը պատրաստվում է» քարոզարշավին։

Օրինակ

Կիտո. Անվտանգության ինտեգրված մոտեցումը

Եկվադորի մայրաքաղաք Կիտոյի բնակչությանը սպառնում են մի շարք երկրաբանական և հիդրո-օդերևութաբանական վտանգավոր երևույթներ։ Ավելին, սպառնացող վտանգների մասին գիտելիքների և իրազեկվածության բացակայության պատճառով քաղաքի զարգացումն ընթացել է ոչ արդյունավետ, քանի որ հաշվի չեն առնվել անվտանգության նորմերը։ Այս իրականությունը փոխելու համար, Կիտոն որդեգրում է համապատասխան քաղաքականություն, որով ստանձնում է անվտանգության ինտեգրված մոտեցում՝ անդրադառնալով իրավիճակային ռիսկերին, ճանապարհային անվտանգությանը և բնածին ու մարդածին վտանգներին։ Ռիսկի նվազեցման տեսանկյունից վերոնշյալ քաղաքականությունը ներառում է՝

- դարձնել աղետների ռիսկի նվազեցումը քաղաքի պլանավորման և զարգացման գործընթացների կարևորագույն խնդիր,
- խրախուսել բնածին և մարդածին երևույթներից առաջացած աղետների կանխարգելման և պատրաստվածության մշակույթի զարգացումը՝ բնակչության պաշտպանության համար,
- հիմնել քաղաքային ռիսկի կառավարման համակարգ՝ համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական միջոցներով և կարողություններով։

Իրականացնելով միասնական քաղաքականություն և աշխատելով միջգերատեսչական հանձնաժողովների միջոցով՝ Կիտոյի բնակչության անվտանգության հետ կապված բոլոր խնդիրները կլուծվեն։

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք <http://www.quito.gov.ec> կայքէջը (նյութն առկա է միայն իսպաներենով)։

Մասնակցային գործընթացների խթանման հնարավորություն


► Համայնքների մասնակցությամբ պլանավորողներն ավելի շատ տեղեկատվություն են ստանում համայնքի առանձնահատկությունների և խնդիրների վերաբերյալ, որն օգնում է նրանց հանձն առնել համայնքային առաջնահերթ խնդիրների լուծմանն ուղղված հստակ և ուղղակի միջոցառումների իրականացման ծրագրեր: Հաջողության հասնելու համար տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներն առաջին հերթին պետք է կարևորեն համայնքի կարիքներին առընչվող հիմնահարցերը, այնուհետև իրականացնեն վերջինիս արդյունավետ կարգավորմանն ուղղված գործնական, քիչ ծախսեր պահանջող, սակայն կարևոր միջոցառումներ:

Աղետների ռիսկի նվազեցման խնդիրը բոլորին է վերաբերում: Որպես միասնական ջանքեր պահանջող նախաձեռնություն, այն բացառիկ հնարավորություն է տալիս հզորացնել շահագրգիռ բոլոր դերակատարների մասնակցությունը:

Այդ նախաձեռնությունը պետք է առաջնորդեն տեղական ինքնակառավարման մարմինները, քանի որ նրանք լավագույնս են պատկերացնում համայնքային մակարդակի կարիքները: Շահագրգիռ կառույցների կողմից իրականացված գնահատումը կաջակցի հանրային ծառայություններ մատուցողներին սահմանելու իրենց դերն ու պարտականությունները (իրենց զարգացմանն ուղղված գործունեության և վերահսկողության մեխանիզմների շրջանակներում), բացահայտել ռիսկ առաջացնող գործոնները և իրականացնել համապատասխան միջոցառումներ՝ այդ ռիսկերին անդրադառնալու համար:

Ռիսկային գոտիներում գտնվող քաղաքացիական խմբերը, տեղի գործարարները և այլ խմբեր պետք է մասնակցեն ռիսկի գնահատման գործընթացներին, իսկ առկա գնահատման արդյունքներն ու բացահայտումները պետք է հասանելի լինեն վերջիններին: Քաղաքները պետք է աշխատեն ազգային և տեղական հետազոտական ինստիտուտների և վտանգավոր երևույթների մշտադիտարկում իրականացնող կազմակերպությունների և կենտրոնների հետ՝ խթանելով վերջիններիս աջակցել ու նպաստել անցյալում տեղի ունեցած պատմական աղետների արձանագրման և ուսումնասիրման գործընթացներին, ինչպես նաև ապագայում հնարավոր վտանգավոր երևույթների և ռիսկի սցենարների մշակմանն ու գնահատմանը: Այս ինստիտուտները պետք է լինեն աղետների ռիսկի նվազեցման գործընթացը համակարգող մեխանիզմի մի մասը:

Տեղական ինքնակառավարման մարմինները նույնպես պետք է համակարգեն իրենց աշխատանքներն ազգային իշխանությունների հետ, և հակառակը՝ ազգային քաղաքականությունը և օրենսդրությունը պետք է հարմարեցվի տեղական պայմաններին: Տեղական ինքնակառավարման մարմիններին առաջնորդող դեր տալու համար անհրաժեշտ է ապակենտրոնացնել ինչպես միջոցառումների իրականացման պատասխանատվությունը, այնպես էլ միջոցների հատկացումն ու օգտագործումը: Այն դեպքում, երբ այս մոտեցումը հնարավոր չէ իրականացնել, խորհուրդ է տրվում կիրառել մասնակի մոտեցում: Քաղաքապետարանը պետք է լինի արձագանքման և պատասխանատվության առաջին գծում:



Նկարը՝ J. Valdés



Նիկարագուայի երեք քաղաքապետարաններ (Տեխկա, Քեզալզաք և Լարեյնագա- Մալպայսիլո) միասին աշխատում են ՀԿ-ի հետ:

Աղետների ռիսկի նվազեցումը թիմային ձեռնարկում է

- **Տեղական ինքնակառավարման մարմինները** ստանձնում են առաջնորդի դերը, ներգրավում այլ մասնակիցների, կանոնակարգում և վերահսկում ողջ գործընթացը:
- **Ոլորտները** (կրթություն, առողջապահություն, տրանսպորտ, բնապահպանություն և այլն) ինտեգրում են ռիսկի նվազեցումը ոլորտային զարգացման ծրագրերում և դարձնում այն պարտականությունների մի մաս, նպաստում տեղեկատվության ձեռքբերմանը և իրականացնում համապատասխան միջոցառումներ:
- **Գիտական ոլորտն ու հետազոտական կենտրոններն** իրականացնում են ռիսկին վերաբերող հետազոտություններ և տվյալների վերլուծություն:
- **Քաղաքացիները, համայնքային խմբերը՝** ներառյալ խոցելի խմբերը մասնակցում են ռիսկի կառավարման գործընթացներին, տեղեկություններ ստանում և ստանձնում անհատական պատասխանատվություն:
- **Մասնավոր հատվածն ու գործարար համայնքն** իր գործունեությունը համապատասխանեցնում է անվտանգության նորմերին, նպաստում է համայնքային զարգացմանը՝ նոր տեխնոլոգիաների կիրառմամբ և բիզնեսի շարունակականության ապահովմամբ:
- **Քաղաքացիական հասարակությունը** և հասարակական կազմակերպությունները (համայնքահեն, հավատքի վրա հիմնված, կամավորական և այլն) իրենց մասնակցությունն են ունենում դիմակայուն քաղաքի ձևավորման գործում. կազմակերպում են համայնքային միջոցառումներ, համակարգում և օգնում վերահսկել գործընթացների իրականացումն ու մշտադիտարկումը:
- **Պետական կառավարման մարմիններն ու պատգամավորներն** աջակցում են ապակենտրոնացմանը միջոցների հստակեցման, քաղաքականության և բարենպաստ օրենսդրության միջոցով:
- **Միջազգային կազմակերպությունները** տրամադրում են տեխնիկական համագործակցություն, աջակցում կարողությունների զարգացմանը, հատկացնում միջոցներ և կազմակերպում հանդիպում-քննարկումներ:

ԳԼՈՒԽ 2


Որո՞նք են քաղաքները դիմակայուն դարձնելու տաս գերակա ուղղությունները





Պորտ-օ-Պրենս, Հաիթի, 2010թ.: Մարդիկ մահանում են ոչ թե երկրաշարժից, այլ իրենց վրա փլուզվող շենքերից:


Այս գլխում հակիրճ ներկայացվում են «Տաս գերակա ուղղությունները», այդ թվում՝ այն կարևորագույն և փոխադարձաբար իրարից կախված քայլերը, որ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները կարող են իրականացնել քաղաքներն ավելի դիմակայուն դարձնելու համար: Այստեղ նաև ներկայացված է յուրաքանչյուր ուղղության հիմնավորումը՝ բացահայտելով միջամտության ռազմավարական ուղղություններն ու հիմնական գործողությունները: Յուրաքանչյուր ուղղության ներքո ներկայացված գործողություն պետք է կազմի աղետների ռիսկի նվազեցման պլանավորման գործընթացի անբաժանելի մասը և իր ազդեցությունն ունենա քաղաքային զարգացման պլանավորման և նախագծման գործընթացներում:


Քաղաքները դիմակայուն դարձնելու «Տաս գերակա ուղղությունների» գնահատման ամփոփ ցանկը


- 

1. Քաղաքացիական խմբերի և քաղաքացիական հասարակության անմիջական մասնակցությամբ ստեղծել **կազմակերպչական և համակարգման** մեխանիզմներ՝ բացահայտելու և նվազեցնելու աղետների ռիսկը: Համայնքային մակարդակում ստեղծել համագործակցային մեխանիզմներ: Ապահովել, որ տեղական բոլոր հաստատություններն ու կառույցները հասկանան իրենց դերը աղետների ռիսկի նվազեցման և պատրաստվածության ոլորտում:
- 


2. **Ձևավորել աղետների ռիսկի նվազեցման բյուջե** և խրախուսել համայնքներին, տների սեփականատերերին, ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին, գործարար համայնքին և հասարակական հատվածին ներդրումներ կատարել՝ իրենց առջև ծառայած ռիսկերը նվազեցնելու համար:
- 


3. Ապահովել պարբերաբար թարմացվող հստակ տվյալներ վտանգավոր երևույթների և խոցելիության վերաբերյալ, **իրականացնել ռիսկի գնահատումներ** և օգտագործել դրանք՝ որպես քաղաքային զարգացման պլանավորման և որոշումների կայացման հիմք: Ապահովել, որ վերոհիշյալ տեղեկատվությունը և ձեռք բերված «դիմակայման պլանները» հասանելի լինեն հանրությանը և ամբողջությամբ քննարկվեն նրանց հետ:
- 


4. Կատարել ներդրումներ և ապահովել **ռիսկի նվազեցման առումով կարևոր այնպիսի ենթակառուցվածքների** անխափան շահագործումը, ինչպիսիք են՝ հեղեղատարներն ու դրենաժային համակարգերը, որոնք հարմարեցված են և, ըստ անհրաժեշտության, կարող են հաղթահարել կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած իրավիճակները:
- 


5. Գնահատել **բոլոր դպրոցների և առողջապահական հաստատությունների անվտանգությունը** և, ըստ անհրաժեշտության, ուժեղացնել և բարելավել այն:
- 

6. Պարտադիր և հետևողականորեն կիրառել առկա **ռիսկերին համապատասխան և իրատեսական շինարարական նորմերն ու հողօգտագործման պլանավորման սկզբունքները**: Հատկացնել անվտանգ հողատարածքներ ցածր եկամուտ ունեցող քաղաքացիներին, ինչպես նաև բարձրացնել ու բարելավել գործող շինարարական նորմերին չհամապատասխանող շինությունների անվտանգության մակարդակը:

- 

7. Ապահովել աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված **հանրակրթական ծրագրերի և հանրության համար նախատեսված դասընթացների** իրականացումը համայնքներում և դպրոցներում:
- 

8. **Պաշտպանել առկա այն էկոհամակարգերն ու բնական պաշտպանական միջավայրը**, որոնց օգնությամբ հնարավոր է մեղմել կամ նվազեցնել ջրհեղեղների, փոթորիկների և այն վտանգավոր երևույթների ազդեցությունը, որից ձեր քաղաքը խոցելի է: Հարմարվել կլիմայի փոփոխությանը՝ ներդնելով և զարգացնելով, հաջողված փորձի վրա հիմնված, աղետների ռիսկի նվազեցման արդյունավետ միջոցառումներ:
- 

9. Հիմնել **վաղ ազդարարման համակարգեր և ստեղծել ճգնաժամային կառավարման** համապատասխան կարողություններ: Բնակչության պատրաստվածության մակարդակի բարձրացման համար կանոնավոր կերպով կազմակերպել և իրականացնել հանրային ուսումնավարժանքներ:
- 


10. Ապահովել, որ ցանկացած աղետից հետո **տուժած բնակչության կարիքներն առաջնահերթ լինեն վերականգնման փուլում**: Աջակցել բնակչությանն ու համայնքային կազմակերպություններին՝ մշակելու և իրականացնելու արձագանքմանն ու հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումներ՝ ներառելով շենքերի և շինությունների վերակառուցումն ու կենսական կարևոր պայմանների վերականգնումը:

► **Տես Հավելված 1, որտեղ ներկայացված են Տաս գերակա ուղղություններից յուրաքանչյուրի իրականացման, առաջընթացի գնահատման և վերահսկման հիմնական հարցերը:**



Գերակա ուղղություն 1 Հաստատութենական և վարչական համակարգ

«Քաղաքացիական խմբերի և քաղաքացիական հասարակության անմիջական մասնակցությամբ ստեղծել կազմակերպչական և համակարգման մեխանիզմներ՝ հասկանալու և նվազեցնելու աղետների ռիսկը: Ստեղծել տեղական համագործակցային մեխանիզմներ: Ապահովել, որ հասարակությունները հասկանան իրենց դերը աղետների ռիսկի նվազեցման և պատրաստվածության ոլորտներում»:



Քսեն քաղաքի աղետների ռիսկի կառավարման կազմակերպությունը

▶ **Համակարգող մարմնի (գրասենյակի) պարտականությունների շարքում կարող են լինել իրազեկման բարձրացման քարտզարարման կազմակերպումը, ռիսկի գնահատումների և աղետների ռիսկի նվազեցման պլանավորման համակարգումը, քաղաքի զարգացման գործընթացներում դիմակայման հարցի ընդգրկման ապահովումը, միջոցների հայթայթման համար համապատասխան ռազմավարության ու ծրագրերի մշակումը և առաջընթացին հետամուտ լինելը:** Ռիսկի նվազեցման պլանավորումը հնարավոր է դարձնում արտակարգ իրավիճակներում և վերականգնողական փուլերում բոլոր դերակատարների գործողություններն իրականացնել ավելի կազմակերպված և արդյունավետ:

Ինչո՞ւ

Արդյունավետ գործելու և քաղաքի զարգացմանն ու անվտանգության ապահովմանը նպաստելու, ինչպես նաև աղետների ռիսկի կառավարման և հնարավոր արտակարգ իրավիճակների սպառնալիքները հասկանալու համար հարկավոր է կիրառել համապարփակ մոտեցում և կառավարման գործընթացներում ընդգրկել տեղական իշխանության ներկայացուցիչներին, որոշում կայացնողներին, քաղաքային պաշտոնյաներին, գիտական աշխատողներին, գործարար հատվածին և քաղաքացիական խմբերին: Հյոգոյի գործողությունների ծրագրի իրականացման փորձը ցույց է տալիս, որ համապատասխան քաղաքականության և հաստատութենական դաշտի առկայությունը հանդիսանում է որոշումների կայացման և աղետների ռիսկի նվազեցման հիմնավոր գործողությունների իրականացման նախապայմանը: Ծրագրի իրականացման ապակենտրոնացումը նպաստում է քաղաքի զարգացման հիմնահարցերի լուծմանն ու կայունության ապահովմանը, երբ այն ուղեկցվում է ապակենտրոնացման գործընթացներով, ռեսուրսների հատկացումներով, ինչպես նաև պլանավորման, իրականացման և մշտադիտարկման գործընթացներում հիմնական դերակատարների և սոցիալական խմբերի ներգրավմամբ:

Ի՞նչ է հարկավոր անել

Հիմնել կամ հզորացնել քաղաքային մակարդակում հաստատութենական և համակարգման կարողություններ

- Քաղաքապետարանում ստեղծել համապատասխան մարմին կամ հիմնել նպատակային գրասենյակ, որը կհամակարգի տարբեր վարչությունների և այլ դերակատարների գործունեությունը:
- Սահմանել և կանոնավոր կերպով վերանայել ներգրավված վարչությունների և ծառայությունների դերերն ու պարտականությունները: Հստակեցնել յուրաքանչյուրի լիազորությունների սահմանները:
- Հնարավորինս վաղ փուլերում ներգրավել և խրախուսել տարբեր դերակատարների, կամավորների, հասարակական կազմակերպությունների, գիտական ոլորտի աշխատողների,

գործարար համայնքի, համայնքահեն կազմակերպությունների և այլոց մասնակցությունը ԱՌՆ գործընթացում:

Մշակել կամ հզորացնել դիմակայման և աղետների ռիսկի նվազեցման դաշտը կարգավորող օրենսդրությունը

- Բացահայտել այն բոլոր պարտավորությունները, խոչընդոտներն ու կարողությունները, որոնք պարտադրված են քաղաքապետարաններին առկա քաղաքային պլանավորման նորմերի, օրենքների ու կանոնակարգող մեխանիզմների միջոցով: Բարելավել տեղական նորմերը՝ ներառելով դիմակայման չափանիշներ:
- Մշակել և իրականացնել տեղական ինքնակառավարման մարմնի կողմից ընդունված որոշումներ, որոնք նպաստում են աղետների ռիսկի նվազեցմանը բոլոր հատվածներում (հասարակական և մասնավոր):
- Վերանայել և թարմացնել բնապահպանական, շինարարական և պլանավորման չափանիշներն ու տեղական իշխանության որոշումները՝ աջակցելու ԱՌՆ գործընթացներին, և դրանք ընդգրկել ռիսկի գնահատման վերջնական ուսումնասիրություններում:
- Ցածր եկամուտ ունեցող տարածքների համար ապահովել կանոնակարգերի որոշակի ճկունություն, սակայն՝ ոչ անվտանգության հաշվին:

Համակարգել քաղաքում գործող արտակարգ իրավիճակների կառավարման բոլոր ծառայությունները

- Ստեղծել համագործակցային ռազմավարություն՝ ինտեգրելու և համակարգելու արտակարգ իրավիճակներում արձագանքման, օգնության տրամադրման և վերականգնողական գործողությունների համար պատասխանատու գոյություն ունեցող բոլոր մարմինները, նույնիսկ, եթե դրանք գործում են տարբեր մարմինների ենթակայության տակ:
- Կիրառել պաշտոնական կանոնակարգեր՝ համակարգելու և պահպանելու կազմակերպությունների և ծառայությունների տվյալները (հրշեջ, շտապ օգնության և առողջապահական ծառայություններ, ոստիկանություն, հասարակական կազմակերպություններ և այլն), ընդլայնելու փոխադարձ գործունեությունը նշված միավորների միջև (լեզու, գործիքներ, հաղորդակցում) և մշակել համապատասխան սցենարներ՝ համակարգված ուսումնական վարժանքներ անցկացնելու համար:

Ստեղծել համագործակցային մեխանիզմներ և ցանցեր

- Փնտրել և խրախուսել համագործակցային մեխանիզմների հիմնումը, նմանատիպ կամ յուրատեսակ ռիսկեր ունեցող հարևան քաղաքների հետ հզորացնել համագործակցությունը, բարելավել ապակենտրոնացված գործունեությունը, կանխատեսել ընդհանուր տարածաշրջանային ռիսկերը և բազմապատկել վերջիններիս կառավարման համար միջոցների հատկացումը:
- Գործընկերություն հաստատել տեղական, ազգային կամ միջազգային այնպիսի համալսարանների, հասարակական կազմակերպությունների կամ գիտատեխնիկական մարմինների հետ, որոնք կարող են տրամադրել տվյալներ, մասնագիտական փորձառություն և հետազոտական վերլուծություններ:
- Դիտարկել փորձի փոխանակման և համագործակցության խորացման ծրագրեր այլ երկրների այն քաղաքների հետ, որոնք ունեն նմանատիպ ռիսկեր կամ մարտահրավերներ:
- Մասնակցել տարածաշրջանային և միջազգային ֆորումների և «Դարձնենք քաղաքները դիմակայուն» գլոբալ քարոզարշավին, որը կաջակցի նոր նախաձեռնությունների ստանձնմանը, փորձի փոխանակմանը և տեղական-ազգային-միջազգային մակարդակներում համագործակցության ընդլայնմանը:

Օրինակ

Ալբեյ նահանգ. Տեղական ինքնակառավարման մարմինները ռիսկի նվազեցումը դիտում են որպես պաշտոնական և մշտական առաջնահերթություն

Ֆիլիպինների Ալբեյ նահանգի իշխանությունը 1995 թվականին հիմնեց աղետների ռիսկի կառավարման մշտական գործող գրասենյակ, որի նպատակն է զբաղվել թափոնների, ջրհեղեղների, սողանքների և երկրաշարժերի հարցերով: Աղետների ռիսկի նվազեցումը դրվեց հաստատութենական հիմքերի վրա, ստացավ համապատասխան ֆինանսավորում և իրապես ներառվեց տեղական պլանավորման գործընթացներում և ծրագրերում՝ հստակ ցույց տալով, որ աղետների ռիսկի նվազեցումը կանոնավոր պլանավորման, կառավարման և տեղական ծրագրերի պաշտոնական և մշտական առաջնահերթությունն է: Արդյունքում, աղետների կանխարգելումը, պատրաստվածությունը և արձագանքումը արդյունավետորեն համակարգվում են և, բացի 2006 և 2011 թվականներից, վերջին 17 տարիներից 15-ի ընթացքում զոհեր չեն գրանցվել:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելե՛ք <http://www.unisdr.org/we/inform/publications/13627> (էջ 48) և <http://tinyurl.com/ck6btbn> կայքէջերը:

Բեյրութ. Լիբանանի քաղաքներն ինտենսիվ աշխատանքներ են սկսել՝ «Տաս գերակա ուղղությունների» իրականացման ուղղությամբ

Բեյրութի քաղաքապետ Նադա Յամուբը 2011թ.-ի մայիսին կայացած Լիբանանի Աղետների ռիսկի նվազեցման երրորդ գլոբալ պլատֆորմի նիստի ժամանակ նշեց. «Մենք նորընտիր քաղաքապետարան ենք և մեզ անհանգստացնում են աղետների ռիսկի նվազեցման հիմնահարցերը: Այդ իսկ պատճառով, 2010թ.-ի հոկտեմբերին մենք անդամագրվեցինք «Դարձնենք քաղաքները դիմակայուն» քարոզարշավին: Որպես առաջին քայլ, քաղաքապետարանը ստանձնեց աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների իրականացման համար բյուջեի հատկացման գործընթացը: Այդ միջոցառումների թվում են ռիսկի գնահատումը, ռիսկի տվյալների բազայի ստեղծումը, ԱՌՆ հիմնական պլանի մշակումը, և այլն: Մենք բացահայտեցինք մեր կարիքները և արձանագրեցինք առկա իրավիճակը՝ բացերի վերլուծություն իրականացնելու համար: Բեյրութում ժառանգաբար մեզ փոխանցված մի քանի տեսաթման վայրեր կան, որոնց պահպանումը շատ կարևոր է: Մենք մեր աշխատանքները կկառուցենք չորս հիմնական սյուների վրա, որոնք են՝ տեխնիկական աջակցությունը, ֆինանսական օժանդակությունը, մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության ներգրավումը և ազգային կառավարության աջակցությունը: Եթե մենք պատշաճ միջոցներ չհատկացնենք, ապա ծրագրերն ըստ առաջնահերթությունների չեն դասակարգվի: Դիմակայուն քաղաքի ստեղծումը միայն քաղաքապետի պարտականությունը չէ: Գործունեությունը պետք է ծավալել չորս մակարդակներում, որոնք են՝ ազգային և նահանգային կառավարման մարմինները, քաղաքի կառավարման մարմիններում ընդգրկված քաղաքական գործիչները՝ լինեն ընտրված, թե նշանակված, և քաղաքապետարանի վարչակազմը»:

Լիբանանի Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմն աջակցում է փոքր և միջին տեղական ինքնակառավարման մարմիններին անդամակցելու «Դարձնենք քաղաքները դիմակայուն» քարոզարշավին: Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմը ձեռնարկում է բազային ուսումնասիրություններ և ընդլայնում աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումները (Նոյեմբեր, 2011թ.):

Հյուսիսային Վանկուվեր. Նորարարությունը և համայնքային ներգրավվածությունը

Կանադայի Հյուսիսային Վանկուվերի տարածքում ձևավորվել է բնական վտանգավոր երևույթների կառավարման հատուկ խումբ՝ կազմված ութ համայնքների կամավոր բնակիչներից: Նրանք հանձն

են առել տեղեկացնել քաղաքապետարանին համայնքներին սպառնացող բնածին վտանգավոր երևույթներից բխող ռիսկի թույլատրելի մակարդակի մասին: Փորձագետները հատուկ խմբին տրամադրել են համապատասխան նյութեր, իսկ խումբն էլ, իր հերթին, դիմել է հանրությանը՝ հայցելով նրանց աջակցությունը: Արդյունքում, ձեռք բերված առաջարկները դրվել են համայնքային ռիսկի կառավարման ներկայիս քաղաքականության հիմքում: Շինարարության, ինչպես նաև շենքերում և շինություններում փոփոխություններ կատարելու վերաբերյալ թույլտվություն տալուց առաջ ուշադիր դիտարկվում են վտանգավոր երևույթներն ու ռիսկերը: Ռիսկը համեմատվում է ռիսկի թույլատրելի մակարդակի չափանիշի հետ և հետագայում խելամիտ սահմաններում նվազեցվում է: Համայնքը համատեղ աշխատում է բնակիչների, մասնավոր ձեռնարկությունների և հարևան համայնքների հողատերերի հետ՝ սողանքային և անտառային հրդեհների ռիսկը նվազեցնելու ուղղությամբ: Այդ նպատակով իրականացվել են լանջերի ջրահեռացման համակարգերի բարելավման և հրդեհներից պաշտպանական տարածքների ստեղծման աշխատանքներ:

«Հյուսիսային Վանկուվերը Կանադայի բոլոր համայնքների համար բարձր չափանիշներ է սահմանել և ծառայում է որպես օրինակ աղետների ռիսկի նվազեցման գործընթացում քաղաքային և ֆեդերալ կառավարություններին խրախուսելու, ինչպես նաև մասնավոր հատվածին ներգրավելու համար»,- նշել է Կանադայի Հանրային անվտանգության նախարար՝ Վիկ Թոմսը, երբ Հյուսիսային Վանկուվերը 2011թ.-ին ստացավ Միավորված ազգերի կազմակերպության՝ Սասակավայի Աղետների ռիսկի նվազեցման մրցանակը (մրցանակ ստացան նաև Սան Ֆրանցիսկոն, Սեբուն, Ֆիլիպինները և Արգենտինայի Սանտա Ֆե քաղաքը): Հյուսիսային Վանկուվերը ռիսկի նվազեցումն ինտեգրել է իր համայնքային պաշտոնական ծրագրի, ռազմավարական պլանավորման և շինարարության ընդլայնման թույլտվության շնորհման գործընթացների մեջ, և հաստատութենական հիմքերի վրա է դրել սողանքների և քարաթափերի վաղ ազդարարման համակարգերը: ՄԱԿ-ի Սասակավա մրցանակաբաշխության ժյուրին նշեց, որ համայնքն ունի բարդ տեխնոլոգիաների հետ աշխատելու համապատասխան կարողություններ, ավանդական ու նոր գիտելիքներ և արտադրանքներ, ինչպես նաև նորարարական գործելակերպ:

«Այս միջազգային ճանաչումն արհեստավարժ մասնագետների աշխատանքի ապացույցն է, որոնց շարքերում են Հյուսիսային Վանկուվերի քաղաքացիները, առաջնորդները և Հյուսիսային ավի արտակարգ իրավիճակների կառավարման գրասենյակի կամավորները, ինչպես նաև բոլոր այն գործակալությունները, որոնք աշխատում են իրենց համայնքի հանրային անվտանգության կարիքների բավարարման ուղղությամբ: Սա մի գործընթաց է, որով մեր ամբողջ համայնքը կարող է հպարտանալ»,- նշեց Հյուսիսային Վանկուվերի քաղաքապետ՝ Ռիչարդ Վոլթոնը: «Աշխատանքները շարունակական են, և մենք շարունակում ենք սովորել ամբողջ աշխարհի տարբեր համայնքների փորձից»:

Տեսն ավելին www.nsemo.org, www.getprepared.gc.ca, <http://tinyurl.com/d4m85ry> կայքէջերում:

Developing a FireSmart Community

Community Workshop

Regarding Fire Risk Reduction and Ecosystem Restoration in Grousewoods Park

Pre-Treatment

Dense, small trees and fallen woody debris under a canopy of mature trees provide fuels for forest fires and prevent understory vegetation from growing.

Post-Treatment

Retention of the large trees, snags and decaying logs creates structure similar to that found in old forests. It also reduces fire hazard and allows understory vegetation to re-establish.

If you have any questions, please contact:
Mark Brown, District Arborist 604-990-3809

Place: Montroyal School - 5310 Sonora Drive Date: Feb. 11, 2008 6:30 p.m.



Գերակա ուղղություն 2 Ֆինանսավորում և ռեսուրսներ

«Հատկացնել աղետների ռիսկի նվազեցման բյուջե և խրախուսել համայնքներին, սեփականատերերին, ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին, գործարար համայնքին և հանրային ոլորտին ներդրումներ կատարել՝ իրենց առջև ծառայած ռիսկերը նվազեցնելու համար»:

Ինչո՞ւ

Գործողությունների ծրագիրը կմնա թղթի վրա այնքան ժամանակ, մինչև չհատկացվեն համապատասխան միջոցներ՝ դիմակայունության ապահովման Տաս գերակա ուղղությունների իրականացման համար: Տեղական ինքնակառավարման մարմիններին անհրաժեշտ են համապատասխան կարողություններ և մեխանիզմներ՝ իրենց ընդհանուր տեսլականի, առաքելության և ռազմավարական ծրագրերի շրջանակներում ռեսուրսներ ձեռք բերելու և կառավարելու, ինչպես նաև աղետների ռիսկի նվազեցման համար: Ռեսուրսները կարող են ձևավորվել քաղաքի եկամուտներից, առանձին ոլորտային հատկացումներից, հանրային-մասնավոր հատված համագործակցությունից, ու քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների ներդրումներից: Գլուխ 3-ում բերված է լրացուցիչ տեղեկություն այն մասին, թե ինչպես ֆինանսավորել աղետների ռիսկի նվազեցման միջոցառումները:

Ի՞նչ է հարկավոր անել

Կատարել ներդրումներ՝ ռիսկի նվազեցման միջոցառումների և իրազեկվածության բարձրացման քարոզարշավների իրականացման համար

- Ինտեգրել ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումները տեղական բյուջեում՝ բարձրացնելու տնտեսության, էկոհամակարգերի և ենթակառուցվածքների դիմակայունությունը (դրանք են՝ դպրոցները, հիվանդանոցները, կարևոր նշանակության օբյեկտները, ջրային ռեսուրսները, քրահեռացման և աղբահանության համակարգերը):
- Առկա միջոցների հետ միասին, հայթայթել ազգային և համայնքային լրացուցիչ միջոցներ և ծրագրեր՝ պլանավորված գործողություններն իրականացնելու համար (այսինքն՝ քաղաքային ենթակառուցվածքներ, բնապահպանության կառավարում և հանրային աշխատանքներ):
- Խրախուսել հանրային և մասնավոր հատվածի ներկայացուցիչներին մասնակցել հանրային իրազեկման բարձրացման քարոզարշավների կազմակերպմանն ու տեղեկատվությունների տարածմանը, որը կխրախուսի հանրությանը, սեփականատերերին, կրթության և առողջապահության ոլորտների աշխատողներին, բնակարանաշինության մասնագետներին և այլոց իրականացնել դիմակայմանն ուղղված միջոցառումներ:

Ապահովել համապատասխան բյուջե՝ պատրաստվածության և արձագանքման միջոցառումների իրականացման համար

- Բյուջեում նախատեսել միջոցներ՝ արտակարգ իրավիճակների ժամանակ արդյունավետ արձագանքում, հաղորդակցություն, վաղ ազդարարման համակարգեր և ռիսկի գնահատման կարողություններ ապահովելու համար:
- Արտակարգ իրավիճակների կառավարումն ու գործունեությունը դնել հաստատութենական հիմքերի վրա և ապահովել որոշումների կայացման կարողությունն ու ֆինանսական միջոցների հասանելիությունը:

- Դիտարկել արտակարգ իրավիճակների արձագանքման ֆոնդի հիմնումը՝ վերականգնողական աշխատանքների իրականացման համար
- Հետադետային կարիքները հոգալու համար ստեղծել արտակարգ իրավիճակների արձագանքման պլան, որն իր մեջ կներառի օգնության տրամադրման համար անհրաժեշտ պաշար, արձագանքման սարքավորումներ և մեքենաներ, հետադետային միջամտության և արագ վերականգնման համար պահուստային ֆոնդ, և հատկացնել վերականգնողական միջոցառումների իրականացման համար գործիքների և ստանդարտ գործառնական ընթացակարգերի մշակման համար անհրաժեշտ միջոցներ:
- Մշակել ռազմավարություն, որը հնարավորություն կտա ձեռք բերել գումարներ ազգային և միջազգային աղբյուրներից, մասնավոր հատվածից կամ անհատներից և կատարել կանխիկ հատկացումներ ու տրամադրել վարկեր՝ աղետներից տուժած համայնքներում կենսապայմանների վերականգնման և ավելի հիմնավոր աշխատանքների իրականացման համար:

Մշակել ռիսկի նվազեցման գործընթացների խրախուսման միջոցների և տուգանքների համակարգ

- Անվտանգ բնակարանաշինության և ենթակառուցվածքների շինարարության ապահովման, ինչպես նաև աղետների դիմակայման ու ռիսկի նվազեցման ոլորտում ներդրումներ կատարող տեղական գործարարների համար ապահովել խրախուսման միջոցներ: Օրինակ՝ կիրառել հարկային արտոնություններ, առաջարկել սուբսիդիաներ և/կամ ծախսերի մասնակի դրամաշնորհներ խոցելի շինությունների գնահատման, ամրացման և վերակառուցման համար:
- Բարձր ռիսկային գոտիներում տրամադրել նախագծերի այլընտրանքային տարբերակներ և հատկացումներ, որոնք կնպաստեն գործարարների կողմից անվտանգության չափանիշների կիրառմանը: Խրախուսել տեղական գործարարներին, բանկերին և ապահովագրական ընկերություններին իջեցնել շինարարական նյութերի արժեքը և աջակցել ցածր եկամուտ ունեցող համայնքներին՝ տրամադրելով նպաստավոր պայմաններով ապահովագրություն, խնայողություններ և վարկային ծրագրեր:
- Դիտարկել տուգանքների և պատժամիջոցների կիրառումը ռիսկը մեծացնող և բնապահպանական վնաս հասցնող գործարար համայնքի և կազմակերպությունների նկատմամբ:
- Ապահովել հանրային ճանաչում կամ մրցանակներ այն քաղաքների համար, որոնք ունեն անվտանգության ուժեղացման լավագույն գործելակերպ:

Բարելավել տնտեսական գործունեությունը

- Բացահայտել տնտեսական ոլորտի խնդիրներն ու առաջնահերթությունները, հնարավոր խոցելի ուղղությունները, ինչպիսիք են՝ շենքերի տեղանքը կամ ամրությունը և այն ռեսուրսների կայունությունը, որոնցից կախված է ոլորտի զարգացումը:
- Համոզվել, որ քաղաքային պլաններում հաշվի է առնված ռիսկի գործոնը, օրինակ՝ սահմանված են բնակավայրերի և տնտեսական զարգացման համար տրամադրվող տարածքների անվտանգության չափանիշները:

Օրինակ

Կայրնս. Կանոնավոր բյուջեի հատկացում՝ աղետներից պատրաստվածության և արձագանքման համար

Ավստրալիայի Կայրնս քաղաքն ունի տարեկան բյուջե, որով հոգում է Աղետների կառավարման բաժնի, Համակարգման կենտրոնի, կամավորական արտակարգ իրավիճակների ծառայությունների և համայնքների իրազեկման ծրագրերի ծախսերը: Տարեկան կապիտալ բյուջեով վերջին տարիներին միջոցներ են հատկացվել շենքերի կառուցման, արտակարգ իրավիճակներին արձագանքման մեքենաների և սարքավորումների ձեռքբերման, ռիսկի գնահատման նոր համակարգչային ծրագրերի, ջրհեղեղների ազդարարման համակարգի թարմացման և հեղեղումների կանխարգելման համար, որով հստակ երևում է քաղաքի ստանձնած պարտավորվածությունը աղետների ռիսկի նվազեցման գործընթացում:

Քաղաքի աշխարհային մասին մանրամասն տեղեկացեք <http://tinyurl.com/7qm2vvg> կայքէջում:

Կոլումբիայի Մանիգալես քաղաքում աղետների ռիսկի նվազեցման գործընթացին նպաստելու համար կիրառում են նորարարական ֆինանսական միջոցներ

Կոլումբիայի Մանիգալես քաղաքի ղեկավարությունը ստանձնել է նորարարական ֆինանսական քայլեր՝ աղետների ռիսկի նվազեցման գործընթացին նպաստելու համար, այդ թվում՝

- սողանքների և հեղեղումների բարձր ռիսկային գոտիներում բնակարանաշինության խոցելիությունը նվազեցնելու համար համապատասխան միջոցառումներ ձեռնարկող մասնավոր հատվածին և գործարարներին հարկային արտոնությունների տրամադրում,
- բնապահպանական հարկի կիրառում գյուղական և քաղաքային սեփականությունների նկատմամբ, որից ստացված հասույթը կօգտագործվի բնապահպանության, աղետների կանխման և կանխարգելման, համայնքների ուսուցման և ռիսկային գոտիներում գտնվող համայնքների վերաբնակեցման նպատակով,
- հավաքական կամավորական ապահովագրական համակարգի ստեղծում, որը հնարավորություն կտա ցածր եկամուտ ունեցող խմբերին ապահովագրել իրենց սեփականությունը: Քաղաքային իշխանությունը համաձայնագիր ունի ապահովագրական ընկերության հետ, որով ցանկացած քաղաքացի հնարավորություն է ստանում ձեռք բերել ապահովագրություն քաղաքային հարկերի միջոցով:

Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ Աղետների ռիսկի նվազեցման Գլոբալ գնահատման 2009թ. հաշվետվությունը (UNISDR), www.preventionweb.net/gar: Սեղմե՛ք GAR-2009 (Գլոբալ գնահատման հաշվետվություն), Գլուխ 6.2:

Ֆիլիպինները, Չինաստանը և Շրի Լանկան աջակցում են աղետների ռիսկի նվազեցման ոլորտում իրականացվող ներդրումները

2001թ. ի վեր **Ֆիլիպինների** քաղաքները պարտավոր են իրենց տեղական բյուջեներից 5% հատկացնել աղետներից տուժածների օգնության ֆոնդին: 2010թ.-ին ընդունված Աղետների ռիսկի նվազեցման և կառավարման ակտի հիման վրա, այդ հատկացումների 70%-ը կարող է ծախսվել պատրաստվածության, փրկարարական սարքավորումների և անհրաժեշտ ապրանքների ձեռք բերման համար:

Շրի Լանկայի Աղետների կառավարման նախարարությունը 2011թ.-ին 8 միլիարդ ռուպի հատկացրեց մայրաքաղաք **Կոլումբոյում** հեղեղումների կառավարման ծրագրի իրականացման համար: Միևնույն ժամանակ, որպես *Քաղաքները դիմակայուն դարձնելու* քարոզարշավի մի մաս, մեկնարկեց անվտանգ քաղաքի պլանավորման ծրագիրը, որի նպատակն է աղետները հասցնել նվազագույնի:

Հատկացված գումարն օգտագործվելու է ջրատարների մաքրման, ջրահեռացման համակարգերի վերակառուցման և այլ միջոցառումների իրականացման համար, որը կնպաստի Կոլումբոյում հեղեղումների կանխմանը: «Անվտանգ քաղաքներ» ծրագրի ներքո ընտրվել է 15 քաղաք՝ որպես աղետներից զերծ քաղաքներ:

Չինաստանի երկու աղետավտանգ մարզերի նահանգապետերը լրացուցիչ գումարներ են հատկացրել աղետների ռիսկի նվազեցման համար: Սիչուան մարզի փոխմարզպետ՝ Վայի Հոնգը նշեց, որ 2 միլիարդ յեն կներդրվի՝ տեղի երկրաբանական աղետների կանխարգելման համակարգի բարելավման համար: Յունան մարզի փոխմարզպետ՝ Գու Չաոքսին նշեց, որ 10 տարվա ընթացքում առնվազն 10 միլիարդ յեն կներդնեն՝ տեղի աղետների կանխարգելման և գնահատման համակարգի բարելավման համար: Յունան մարզը գտնվում է երկրաբանական աղետների բարձր ռիսկային գոտում: *Շրի Լանկայի հաշվեվրվությունը հասանելի է <http://tinyurl.com/7t23osr> կայքէջում, իսկ Չինաստանի հաշվեվրվությունը՝ <http://tinyurl.com/858rfo> կայքէջում:*



Գերակա ուղղություն 3 Տարաբնույթ վտանգավոր երևույթների ռիսկի գնահատում. ճանաչիր քեզ սպառնացող ռիսկը



Վենետիկի փոսքը արքանյակից

▶ **Ռիսկի գնահատումը տեղական իշխանություններին, ներդրողներին և բնակչությանը կտրամադրի ճշգրտված և թարմացված տվյալներ, քարտեզներ և այլ տեղեկատվություն վտանգավոր երևույթների, խոցելիության և ռիսկի վերաբերյալ, ինչը հնարավորություն կտա կայացնել համապատասխան որոշումներ՝ աղետների ռիսկի կառավարման գործընթացում ժամանակին և արդյունավետ միջամտություն կատարելու համար:**

▶ **Ռիսկի գնահատման հիմնական բաղադրիչներն են՝**

- Պատմական տվյալներ. մշակել և պահպանել կանոնավոր կերպով թարմացվող տվյալների շտեմարան անցյալում տեղի ունեցած աղետների կորուստների և քաղաքին սպառնացող ներկայիս հնարավոր վտանգավոր երևույթների մասին:

«Ապահովել պարբերաբար թարմացվող հստակ տվյալներ վտանգավոր երևույթների և խոցելիության վերաբերյալ, իրականացնել ռիսկի գնահատումներ և օգտագործել դրանք՝ որպես քաղաքային զարգացման պլանավորման և որոշումների կայացման հիմք: Ապահովել, որ վերոհիշյալ տեղեկատվությունը և ձեր քաղաքի «դիմակայման պլանները» հասանելի լինեն հանրությանը և ամբողջությամբ քննարկվեն նրանց հետ»:

Ինչո՞ւ

Մինչև քաղաքները հստակ պատկերացում չունենան իրենց սպառնացող ռիսկերի մասին, աղետների ռիսկի նվազեցման պլանավորումը կարող է անարդյունավետ լինել: Ռիսկի վերլուծություններն ու գնահատումները կարևոր նախապայման են արդյունավետ որոշումների կայացման, ծրագրերի առաջնահերթությունների սահմանման, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների պլանավորման և բարձր, միջին և ցածր ռիսկային գոտիների բացահայտման, ինչպես նաև խոցելիության նվազեցման միջոցառումների ֆինանսատնտեսական արդյունավետության բարձրացման համար: Պատմական աղետներից առաջացած հետևանքների և կորուստների վերաբերյալ արդյունավետ գործող տվյալների շտեմարանը և աշխարհագրական տեղեկատվական համակարգը հնարավորություն կտա քարտեզագրելու վտանգավոր երևույթները, խոցելիության տարրերը, մարդկանց և ակտիվների համար սպառնալիք հանդիսացող գործոններն ու առկա կարողությունները, որոնք էլ հիմք կհանդիսանան ռիսկի բացահայտման և գնահատման համար:

Ի՞նչ է հարկավոր անել

Բացահայտել աղետների ռիսկի բնույթը և աստիճանը

- Քաղաքի համապատասխան գերատեսչության առաջնորդությամբ կատարել ռիսկի համապարփակ գնահատում և մշակել ռիսկի քարտեզներ հնարավոր վնասների և կլիմայի փոփոխության ազդեցության սցենարներով՝ օգտագործելով քաղաքի համապատասխան մարմինների տեխնիկական փորձագիտական կամ տեղական տեխնիկական հաստատությունների կարողությունները:
- Ըստ անհրաժեշտության, ռիսկի գնահատման գործընթացներում ներգրավել տեղական շահագրգիռ կողմերին, ազգային, տարածաշրջանային և միջազգային փորձագետների,

- Վտանգավոր երևույթների գնահատում. քարտեզագրել վտանգավոր երևույթների բնույթը, տեղանքը, ուժգնությունը և հնարավորությունը (այդ թվում՝ բնական երևույթներ, տեխնոլոգիական և այլ մարդածին վտանգավոր երևույթներ):
- Խոցելիության գնահատում. որոշել բնակչության, զարգացման ոլորտների, ենթակառուցվածքների և ընթացիկ կամ պլանավորված քաղաքային ծրագրերի խոցելիության և սպառնացող վտանգի աստիճանը: Քարտեզագրել բարձր ռիսկային գոտիներում ապրող բնակչությանը և համապատասխան աշխատանքներ իրականացնել նրանց հետ:
- Կարողությունների գնահատում. բացահայտել հաստատությունական և տարածքային մակարդակով առկա կարողություններն ու ռեսուրսները:

և առկա տեղեկատվությունը հասանելի դարձնել հանրությանը:

Տարածել ռիսկի վերաբերյալ տեղեկատվություն և կիրառել այն զարգացման ոլորտում որոշումների կայացման համար

- Սահմանել գործողությունների առաջնահերթությունները՝ քաղաքային պլանի, հողօգտագործման գոտիավորման, ներդրումների մասին որոշումների և արտակարգ իրավիճակներին պատրաստվածության պլանների և վարժանքների համար մշակված սցենարների վերլուծության հիման վրա:
- Արդյունքները տարածել համացանցի և տեղեկատվության այլ միջոցներով:
- Թարմացնել ռիսկի գնահատման արդյունքները՝ ցանկալի է տարեկան կտրվածքով:

Հիմնել ամբողջ քաղաքն ընդգրկող աշխարհագրական տեղեկատվության և մշտադիտարկման համակարգ

- Դիտարկել աշխարհագրական տեղեկատվական և մշտադիտարկման համակարգի ստեղծման հնարավորությունը, որտեղ տեղ կգտնեն բոլոր դերակատարներից ստացված տվյալները, այդ թվում՝ քաղաքացիական հասարակությունը, արտադրական ոլորտը (օրինակ՝ գյուղատնտեսություն, հանքարդյունաբերություն, առևտուր և զբոսաշրջություն), ինչպես նաև գիտական և տեխնիկական հատվածը: Հավաքագրված տվյալները հասանելի կլինեն բոլորին:
- Արդյունքները ամփոփել քաղաքի աշխարհագրական տեղեկատվական համակարգում (USC/GIS):

Օրինակ

Պերու, Կեյփ Թաուն. Ազգային և քաղաքային իշխանությունները սահմանում են համապատասխան պահանջներ՝ ուսումնասիրելու աղետների ռիսկի ազդեցությունը զարգացման նոր ծրագրերի վրա

Շատ երկրներում, մասնավորապես **Լատինական Ամերիկայում**, կիրառում են հատուկ համակարգեր, որոնց միջոցով գնահատում են աղետների ռիսկի ազդեցությունն արտադրական ենթակառուցվածքների վրա: ՄԱՄՆՄԻ 2011թ. Գլոբալ գնահատման հաշվետվության մեջ առանձնացվում է **Պերուի** օրինակը, որն առաջին անգամ ընդունեց իրավական ակտ, համաձայն որի բոլոր հանրային ներդրման ծրագրերը պետք է գնահատվեն աղետների ռիսկի տեսանկյունից: Եթե ռիսկին չեն անդրադառնում, ապա ծրագիրը ֆինանսավորում չի ստանում: 2008թ. հաստատված 10 միլիարդ ԱՄՆ

Գերակա ուղղություն 3. Տարաբնույթ վտանգավոր երևույթների ռիսկի գնահատում.
ճանաչիր քեզ սպառնացող ռիսկը

ղլարի ներդրումների մոտավորապես կեսն իրացվելու էր տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

Նմանապես, Աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) ծրագրի շրջանակներում, **Կեյի Թաուն** քաղաքը ներդրել է մի սկզբունք, համաձայն որի քաղաքային ԱՌԿ կենտրոնը պետք է ներգրավված լինի բոլոր նոր զարգացման ծրագրերի վերանայման գործընթացում:

Աղետների ռիսկի նվազեցման կառավարման հնարավորությունների և խրախուսման միջոցների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք <http://tinyurl.com/7sganme> կայքէջը և ուսումնասիրեք Կեյի Թաունի ԱՌԿ համակարգը <http://tinyurl.com/cw9n22x> կայքէջում:

Կուրակ. Տվյալների հավաքագրում և ռիսկի քարտեզագրում քաղաքաշինության պլանավորման համար

Մահիլա Միլանը կանանց խումբ է, որը ծավալուն գործունեություն է իրականացնում անօրինական կառուցապատման դեմ: **Հնդկաստանի Կուրակ** քաղաքի քարտեզագրման գործընթացն իրականացվում է անօրինական շինությունների, խոցելի տարածքներում կառուցված թաղամասերի բնակիչներին ներառող համայնքային կազմակերպությունների կողմից՝ տեղական Մահիլա Միլան խմբերի և տեղական խախտված բնակատեղերի ֆեդերացիաների միջև համագործակցության միջոցով: Հավաքագրված տվյալներն օգտագործվում են թվային քարտեզների ստեղծման համար, որոնք ներկայացվում են քաղաքային իշխանություններին՝ բանակցելու շինությունների, տների վերանորոգման կամ վերակառուցման հարցերի շուրջ, այդպիսով իսկ նպաստելով աղետների ռիսկի նվազեցմանը: Այս գործընթացն իրականացվում է բոլոր անօրինական կառուցված բնակատեղիներում, և արդյունքում ձեռք են բերում ռիսկի և խոցելիության վերաբերյալ ճշգրիտ, մանրամասն և ծավալուն տվյալների շտեմարան ամբողջ քաղաքի համար և սահմանազծում բոլոր անօրինական բնակատեղիները:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք <http://tinyurl.com/7wg3ktd> կայքէջը:

Քաղաքային ռիսկի գնահատման ծրագիր

Համաշխարհային բանկը, ՄԱԿ-ՀԱԲԻԹԱԹ-ի, UNEP-ի և քաղաքների Այլանսի հետ միասին մի շարք երկրների փորձի հիման վրա մշակել է քաղաքային ռիսկի գնահատման ծրագիր: Քաղաքային ռիսկի գնահատումը մի ճկուն մոտեցում է, որը ծրագրերի և քաղաքների ղեկավարները կարող են օգտագործել՝ քաղաքային ռիսկի գնահատման նպատակով կիրառելի չափորոշիչներ սահմանելու համար: Մեթոդաբանությունը հիմնված է երեք հիմնական ուղղությունների վրա, որոնք նպաստում են հասկանալու քաղաքին սպառնացող ռիսկը: Այդ ուղղություններն են՝ վտանգավոր երևույթների ազդեցության գնահատումը, հաստատութենական գնահատումը և սոցիալ-տնտեսական գնահատում: Գնահատումը հիմնված է չորս սկզբունքների վրա, որոնք հնարավորություն են տալիս բարելավել քաղաքային ռիսկի մասին պատկերացումները: Դրանք են՝ վտանգավոր երևույթների վերաբերյալ պատմական տվյալների ընդգրկումը, աշխարհագրական և տարածական տվյալները, հաստատութենական քարտեզագրումը և համայնքների մասնակցությունը: Քաղաքային ռիսկի գնահատումը կարելի է կիրառել ճկուն ձևով՝ կախված տվյալ քաղաքի ռեսուրսներից և հաստատութենական կարողություններից:

Մանրամասն տես <http://go.worldbank.org/VW5ZBJBHA0> կայքէջում:



Գերակա ուղղություն 4 Ենթակառուցվածքների պաշտպանություն, բարելավում և դիմակայունություն

«Կատարել ներդրումներ և ապահովել ռիսկերի նվազեցման առումով կարևոր այնպիսի ենթակառուցվածքների անխափան շահագործումը, ինչպիսիք են հեղեղատարներն ու դրենաժային համակարգերը, որոնք հարմարեցված են և, ըստ անհրաժեշտության, կարող են հաղթահարել կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած իրավիճակները»:

▶ **Հեղեղումների և սողանքների ռիսկի կանխման ու կանխարգելման միջոցառումները ներառում են քաղաքային ջրահեռացման, կոյուղու և աղբահանության համակարգերի գրագետ կառավարում, համայնքներում կանաչ գոտիների խթանում, լանջերի կայունացմանն ու հողերի ղեգրադացմանն ուղղված միջոցառումներ, ամբարտակների ու ավամերձ պաշտպանիչ թմբերի կառուցում և այլն:**

▶ **Հիշեք, որ գոյություն ունեցող, սակայն վատ կառուցված ջրհեղեղներից պաշտպանող կառույցների առկայությունը մեծացնում է ռիսկը այդ տարածքում գտնվողների համար, քանի որ այդ կառույցների նկատմամբ բնակիչների ունեցած «գերվստահությունը» կարող է հանգեցնել «կեղծ» անվտանգության:**

Ինչո՞ւ

Ոչ բոլոր վտանգավոր երևույթներն են աղետների պատճառ դառնում: Կանխարգելիչ միջոցառումները կարող են օգնել խուսափել այնպիսի իրավիճակներից, ինչպիսիք են ենթակառուցվածքների խաթարումը կամ ոչնչացումը, որը կարող է ունենալ սոցիալական, առողջապահական և տնտեսական դառը հետևանքներ: Երկրաշարժերի ժամանակ զոհերի հիմնական պատճառը շենքերի փլուզումն է: Վատ նախագծված ճանապարհները կամ ոչ արդյունավետ գործող ջրահեռացման համակարգերը կարող են բազմաթիվ սողանքների պատճառ հանդիսանալ: Կենսական այնպիսի համակարգեր, ինչպիսիք են՝ ճանապարհները, կամուրջները, օդանավակայանները, էլեկտրական և հաղորդակցման համակարգերը, հիվանդանոցները, արտակարգ իրավիճակների կառավարման ծառայությունները, էլեկտրաէներգիայի և ջրամատակարարման համակարգերը քաղաքի համար կարևոր նշանակություն ունեն, քանի որ ապահովում են քաղաքի կենսագործունեությունն աղետներին արձագանքման ժամանակ:

Ի՞նչ է հարկավոր անել

Հզորացնել պաշտպանական ենթակառուցվածքները

- Ընդունել և հաստատել երկրաբանական, հիդրոօդերևութաբանական և տեխնոլոգիական վտանգավոր երևույթների կանխմանն ու կանխարգելմանն ուղղված քաղաքային կառավարման ռազմավարություն, քաղաքականություն և պլաններ, որոնք ներառում են նաև պաշտպանական ենթակառուցվածքների հզորացման կառուցվածքային և ոչ կառուցվածքային միջոցառումներ:
- Գնահատել յուրաքանչյուր համակարգին սպառնացող ռիսկը, վերանայել համակարգի գործունեությունը, արդյունավետությունն ու գործառույթները: Այնուհետև, բացահայտված թերությունները վերացնելու, վերաձևավորելու կամ համակարգերի արդյունավետությունը հզորացնելու նպատակով մշակել ծրագրեր (այս միջոցառումներն, ընդհանուր առմամբ, կբարելավեն նաև ծառայությունների մատուցման գործընթացները):

► Կարևոր նշանակության ենթակառուցվածքները ներառում են տրանսպորտը (ճանապարհներ, կամուրջներ, օդանավակայաններ, երկաթուղային կայաններ և ավտոբուսի տերմինալներ), կենսապահովման համակարգերը (այդ թվում՝ հիվանդանոցներ և դպրոցներ, որոնք անհրաժեշտության դեպքում դառնում են նաև տուժած բնակչության ժամանակավոր կացարաններ), էլեկտրական ցանցերն ու հեռահաղորդակցության համակարգերը, անվտանգության և արտակարգ իրավիճակների կառավարման ծառայությունները, ջրամատակարարման ու սանիտարահիգիենիկ համակարգերը, որոնք փաստացի այն բոլոր հիմնական ակտիվներն են, որ ապահովում են քաղաքի բնականոն կենսագործունեությունը և կարևորագույն նշանակություն ունեն աղետներից արդյունավետ արձագանքման և արագ վերականգնման համար:

- Դիտարկել բնական ռելիեֆի ֆիզիկական փոփոխությունները, որոնք հնարավոր է ազդեն հեղեղային հոսքերի ուղղության վրա: Հաշվի առնել կլիմայի փոփոխության հնարավոր այնպիսի ազդեցություններ, ինչպիսիք են՝ ծովի մակարդակի բարձրացումը, ալեկոծությունները և հիդրոտեղերնութաբանական վտանգավոր երեվոյթների աճը: Հիմնել վաղ ազդարարման և մշտադիտարկման համակարգեր, որոնք ճգնաժամային կառավարման մարմիններին կահագանգեն մոտալուտ ռիսկի մասին:
- Ապահովել ճանապարհների և այլ տեղամասերի այնպիսի նախագծում, որ դրանց գործունեությունը չխաթարվի արտակարգ իրավիճակների, այդ թվում՝ հրդեհների կամ երկրաշարժերի ժամանակ: Ապահովել, որ հանրային կառույցները լինեն տվյալ տարածքի սեյսմիկ նորմերին համահունչ, ինչպես նաև հետևել, որ բոլոր նախագծող և շինարարական կազմակերպությունները կիրառեն և պահպանեն նշված նորմերը:

Պաշտպանել կարևոր նշանակության ենթակառուցվածքները

- Գնահատել գոյություն ունեցող ենթակառուցվածքների խոցելիությունը բնական վտանգավոր երևույթներից, ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ կանխելու հնարավոր կորուստներն ու ավերածությունները, ինչպես նաև իրականացնել երկրաբաժամկետ կապիտալ ներդրումներ՝ արտակարգ իրավիճակներում ամենակարևոր նշանակության կենսաապահովման համակարգերի վերականգնման կամ փոխարինման համար:
- Պլանավորել բիզնեսի շարունակականությունը՝ կենսաապահովման համակարգերի և ծառայությունների արագ վերականգնումն ապահովելու նպատակով:
- Մշակել հատուկ ծրագրեր քաղաքի պատմական արժեք ներկայացնող շենքերի և մշակութային ժառանգության պահպանության համար:


Ստեղծել դիմակայուն նոր ենթակառուցվածքներ

- Որպես քաղաքի պլանավորման մի մաս, մշակել դիմակայունության և անվտանգության նվազագույն չափանիշներ (ՏԵՆ՝ Գերակա ուղղություն 6):
- Ներդնել, նախագծել և կառուցել նոր կայուն ենթակառուցվածքներ համապատասխան անվտանգ տարածքներում, վտանգավոր երեվոյթների և կլիմայական վտանգավոր երևույթների նկատմամբ դիմակայման բարձր չափանիշներին համահունչ, որը կապահովի դիմակայունությունն ու արտակարգ իրավիճակների ժամանակ անխափան ու արդյունավետ կենսագործունեությունը:
- Ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ վնասված կամ մաշված ենթակառուցվածքների անվտանգությունը բարձրացնելու և խոցելիությունը նվազեցնելու համար:
- Իրականացնել ուսումնասիրություններ՝ բացահայտելու վնասված կամ մաշված կառույցների շահագործմանն ուղղված բարելավման

և վերանորոգման ծրագրերը, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, այդ կառույցների վերազինման, վերակառուցման կամ փոխարինման առաջնահերթ միջոցառումները սահմանելու համար:

- Ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ չօգտագործվող, վերանորոգման ենթակա կամ հին շենքերում, հնարավորինս խուսափելով այդ ընթացքում նման շենքերի շահագործումից և, հետևաբար՝ մարդկանց անվտանգությունը ռիսկի ենթարկելուց:
- Հնարավորության դեպքում, դիտարկել ռիսկային կառույցների ապամոնտաժումը, եթե այն պատմամշակութային արժեք չի ներկայացնում, կամ էլ հնարավոր չէ վերանորոգել:

Պատկեր 4:
SMART թունելի գործունեության երեք տիպերը



Կուլա Լումպուր. Երկակի կիրառություն ունեցող ջրի արտահոսքի և մեքենաների թունել Ադըլուրը՝ Մոսկ Մակ Դոնալդ Խումբ, 2009թ.

Օրինակ

Փուն. Ներդրումներ ռիսկի նվազեցման միջոցառումների իրականացման համար

Տասնամյակների ընթացքում **Հնդկաստանի Փուն** քաղաքը պարբերաբար ենթարկվել է ավերիչ ջրհեղեղների: Կանխատեսելով, որ կլիմայի փոփոխությունը կարող է մեծացնել հեղեղումների հաճախականությունը, քաղաքն իրականացրել է կարողությունների զարգացման, վտանգավոր երևույթների և խոցելիության գնահատման ծրագրեր և մշակել ամբողջ քաղաքն ընդգրկող աղտոների ռիսկի նվազեցման գործողությունների ծրագիր, որը ներառում է կառուցվածքային և պլանավորման միջոցառումներ՝ բնական ջրահեռացման համակարգերի վերականգնման, ջրատարների հունի լայնացման, կամուրջների երկարացման և հողի ներծծման բնական մեթոդների կիրառման ուղղությամբ: Բլրապատ տարածքներում ջրբաժանների պահպանման համար իրականացվել է անտառապատում և կառուցվել են հողե պատնեշներ: Տնային տնտեսություններին հարկային արտոնություններ են տրամադրվել, որով խթանվել է տնային պայմաններում կեղտաջրե-

Գերակա ուղղություն 4. Ենթակառուցվածքների պաշտպանություն, բարելավում և դիմակայունություն

րի վերանախագծում, անձրևաջրերի կուտակումը և դրանց օգտագործումը: Ի լրումն այս ամենի, բարելավվել են ջրհեղեղների մշտադիտարկման և ազդարարման համակարգերը, ինչպես նաև տուժած ընտանիքների սոցիալական պաշտպանությունը: Նախաձեռնությունն իրականացվել է քաղաքապետարանի, համայնքային աշխատակիցների և ակտիվ քաղաքացիներից կազմված խմբերի, ինչպես նաև մի շարք տարբեր քաղաքային գերատեսչությունների միասնական ջանքերով:

Տես Համառոտ ներկայացում 02. Կլիմայի փոփոխության հարմարվողականությունը աղետների ռիսկի նվազեցման միջոցով: Երկրների փորձն ու քաղված դասերը (ՄԱՆՄԻ 2010թ.)՝ <http://tinyurl.com/6nmww8t> կայքէջում:

Կուլալա Լումպուր. Երկակի կիրառություն ունեցող ջրի արտահոսքի և մեքենաների թունել

Սվյալ տարածքի վրա նոր ենթակառուցվածքների կառուցման ու տեղակայման ազդեցության և հնարավոր կորուստների հաշվարկը միայն կարող է երաշխավորել, որ տվյալ ենթակառուցվածք նոր ռիսկի աղբյուր չի դառնա: Այն դեպքերում, երբ վերոհիշյալ մոտեցումը կիրառելի չէ, մեկ այլ ընդունված մեթոդ է բազմանպատակ ենթակառուցվածքի ստեղծումը, ինչպիսին է՝ Կուլալա Լումպուրի «Հեղեղումների կառավարման և ճանապարհային թունելը» (SMART): Հորդառատ անձրևներից առաջացող հեղեղումները վտանգավոր երևույթներ են, և 9.7կմ երկարությամբ 514 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ թունելն ունի երեք մակարդակ, որտեղ ամենաներքևի մակարդակը օգտագործվում է ջրահեռացման նպատակով, իսկ վերևի երկուսը՝ ճանապարհային երթևեկության: Թունելն ապահովում է հեղեղումների մեծ ծավալով ջրի արտահոսքը դեպի պահեստավորման ավազան, ջրհավաք ավազան և շրջանցող թունել: Զրահեռացումը ճանապարհի հետ միացնելն ունի ևս մեկ առավելություն. այն ապահովում է այս կարևոր նշանակության ենթակառուցվածքի համար անվտանգության սովորականից ավելի բարձր չափանիշների կիրառում (ճարտարագետները նախագծում լրացուցիչ ամրություն են կիրառում): 2010թ.-ին կառավարման մարմինները նշեցին, որ «Կուլալա Լումպուրի թունելի կառուցման համար կառավարության կողմից տրամադրված 2 միլիարդ մայլադիական ռիզգիտը մեծ ներդրում էր: Սակայն 2007թ.-ին թունելի գործարկումից հետո երեք տարվա ընթացքում այն հաջողությամբ կասեցրել է առնվազն յոթ ջրհեղեղ և խնայել հարյուր միլիոնավոր ռիզգիտ արժողությամբ հնարավոր վնասներ: Տուրքերից գանձվող եկամտի հետ միասին, մենք արդեն շատ մոտ ենք ամբողջությամբ վերականգնելու ներդրումային ծախսերը»,- նշեց քաղաքապետարանի գլխավոր տնօրեն՝ Դատուկ Հջ Սալլեհ Բին Յուսուպ: Տեղական թերթերից մեկում 2010թ.-ին հրապարակել էին, որ 2007թ.-ին թունելի գործարկումից ի վեր այն օգտագործվել է 114 անգամ՝ ապահովելով ջրի արտահոսքը և կանխելով յոթ հնարավոր ավերիչ ջրհեղեղ, որն ավելին է, քան նախնական նպատակը, այն է՝ հեղեղումների կանխարգելում տարեկան ընդամենը երկուսից երեք անգամ:

Ի լրումն թունելի կառուցմանը, լրացուցիչ 140 միլիոն ռիզգիտ է հատկացվել ջրհեղեղների հոսքի հավաքման լճակների և հիմնական ջրատարների պահպանության համար: Եվս 40 միլիոն ռիզգիտ է հատկացվել գետերի և հիմնական ջրատարների մաքրման և շահագործման համար, իսկ 300 միլիոն՝ տրամադրվել գետերի մաքրման և բարեկարգման համար: «Այս էական ներդրումները ինչպես կառավարության, այնպես էլ քաղաքապետարանի կողմից արդյունք են աղետների ռիսկի նվազեցման գործընթացների ընդգրկմանը քաղաքների զարգացման և հողօգտագործման բոլոր պլաններում: Դրանք են՝ Կուլալա Լումպուրի կառուցվածքային, քաղաքային և հեղեղումների մեղմացման պլանները»,-նշել է քաղաքապետը:

Կուլալա Լումպուրի թունելի մասին լրացուցիչ տեղեկությունների համար տես «Բնական վրանգավոր երևույթներ, ոչ բնական աղետներ. Տնօրենապետ արդյունավետ կանխարգելումը» հրատարակման էջ 6-7 (Համաշխարհային բանկ-Միավորված ազգերի կազմակերպություն, Աղետների նվազեցման և վերականգնման գլոբալ հիմնարան (GFDRR), 2010թ.), էջ 6-7 <http://tinyurl.com/7aalwj>:



Գերակա ուղղություն 5 Կենսական նշանակության հաստատությունների պաշտպանություն. Կրթություն և առողջապահություն

«Գնահատել բոլոր դպրոցների և առողջապահական հաստատությունների անվտանգությունը և, ըստ անհրաժեշտության, ուժեղացնել և բարելավել այն»:

► Թեև ճշմարիտ է, որ դպրոցի կամ հիվանդանոցի փլուզումը լուրջ խնդիրներ է առաջացնում աղետի ենթարկված քաղաքի համար, այնուամենայնիվ, շատ հաճախ ականատես ենք լինում այս հաստատությունների «գործառնական» փլուզմանը, երբ կառույցները կանգուն են, սակայն չեն կարող շահագործվել մի շարք պատճառներով, որոնք պայմանավորված են շինության խոցելիությամբ: Սրանից խուսափելու համար հիվանդանոցներն ու դպրոցները պետք է կառուցված լինեն անվտանգության և դիմակայունության բարձր չափանիշներով. մուտքի ուղիները պետք է բաց լինեն, ջրամատակարարումը, էլեկտրականությունը և հեռահաղորդակցությունը պետք է լինեն հասանելի և անխափան՝ ապահովելու գործունեության շարունակականությունը:

Ինչո՞ւ

Դպրոցներն ու առողջապահական հաստատությունները մատուցում են կարևորագույն սոցիալական ծառայություններ: Որպես այդպիսին, հատուկ ուշադրություն է պետք դարձնել այդ հաստատությունների անվտանգության բարձրացման և ռիսկի նվազեցման գործընթացների վրա՝ ապահովելու վերջիններիս կողմից առաջարկվող ծառայությունների անխափան մատուցումը, հատկապես այն պահերին, երբ դրանց կարիքը չափազանց մեծ է: Դպրոցներն ու հիվանդանոցները ոչ միայն համարվում են հաստատություններ, որտեղ գտնվում են հասարակության խոցելի խմբեր, այլև հանդիսանում են խնամքի, զարգացման և բարեկեցության վայրեր: Դրանք իրականացնում են կարևոր գործառույթներ արտակարգ իրավիճակների ժամանակ և հետո, քանի որ ծառայում են որպես ժամանակավոր կացարաններ տուժած բնակչության համար: Երեխաների բնականոն կրթության ընթացքը անհրաժեշտ է հնարավորինս շուտ վերականգնել՝ սոցիալական և հոգեբանական բացասական հետևանքներից խուսափելու համար:

Ի՞նչ է հարկավոր անել

Պահել դպրոցներն ու առողջապահական հաստատությունները գործող վիճակում

- Մշակել համապատասխան գործողությունների պլան և իրականացնել ծրագրեր, պահպանել այս հաստատությունների կառուցվածքային և ֆիզիկական դիմակայունությունն ու ամրությունը:
- Հետազոտել աշխարհագրական տեղադիրքը և հետազոտել արտակարգ իրավիճակներում և վերականգնման փուլում անհրաժեշտ կարողությունների վերապահվող պահանջները:
- Գնահատել աղետների ռիսկը դպրոցներում և հիվանդանոցներում, ամրացնել կամ վերականգնել ամենախոցելիները:
- Դպրոցների և առողջապահական հաստատությունների խոցելիության վերաբերյալ տվյալները ներառել ռիսկի գնահատման արդյունքներում: Բոլոր նոր ենթակառուցվածքների տեղանքի, նախագծի և կառուցման վերաբերյալ որոշումներ կայացնելիս ապահովել դրանց համապատասխանությունը անվտանգության չափանիշներին:

Գերակա ուղղություն 5. Կենսական նշանակության հաստատությունների պաշտպանություն. կրթություն և առողջապահություն

► **«Մեկ միլիոն անվտանգ դպրոցներ և հիվանդանոցներ քարոզարշավը»** համընդհանուր նախաձեռնություն է, որի նպատակն է դպրոցներն ու հիվանդանոցները դարձնել ավելի դիմակայուն: Այս նախաձեռնությունը 2010-2011թթ.-ի «Դարձնենք քաղաքները դիմակայուն. իմ քաղաքը պատրաստվում է» աղետների ռիսկի նվազեցման գլոբալ քարոզարշավի մի մասն է: Միացիր և փրկիր մեկ կյանք:

- Մշակել դպրոցների և առողջապահական հիմնարկների խոցելիության և ռիսկի գնահատման ու նվազեցման գործողությունների ծրագիր, ընտրել ու վերանորոգել դրանցից ամենակարևորներն ու խոցելիները՝ ներառելով դրանք պահպանման և վերանորոգման ծրագրերում:

Բացահայտել աղետից հետո առաջնային ծառայությունների և գործողությունների կարևորությունը

- Բարելավել այն հանրային առողջապահական և կրթական հաստատությունների անվտանգությունը, որոնք ունեն լրացուցիչ և աջակցող դեր արտակարգ իրավիճակների արձագանքման և վերականգնման ժամանակ:
- Հզորացնել և խրախուսել մասնավոր հաստատությունները, որոնք կարող են նպաստել օգնության տրամադրմանը և իրականացնել լրացուցիչ գործառնային արտակարգ իրավիճակներում և վերականգնման փուլում:
- Խրախուսել մասնավոր հատվածի հետ համագործակցությունը:

Օրինակ

Կայման կղզիներ. Առողջապահական հաստատությունները դառնում են ավելի անվտանգ

Կայման կղզիներին հաճախ են սպառնում առաջնային փոթորիկները, իսկ 2004թ.-ի «Իվան» փոթորիկը, որը վերջին 86 տարվա ընթացքում ամենաուժեղն էր, հարվածեց ամենամեծ կղզուն՝ Մեծ Կայմանին՝ մնասելով շենքերի 90%-ը: Որոշ տարածքներում մի քանի ամիս չէին գործում էլեկտրաէներգիայի, ջրամատակարարման և հաղորդակցման համակարգերը: Կղզում սկսվեց լայնածավալ շինարարական գործընթաց, և «Աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարական ծրագրի» շրջանակներում առողջապահական ծառայությունների կառավարման մարմինը անդրադարձավ կառուցվածքային, ոչ կառուցվածքային, գործառնական և աշխատանքային հարցերի լուծմանը: Օրինակ, Կայման կղզիների 124 մահճակալ ունեցող հիվանդանոցը (տարածքի հիմնական առողջապահական հաստատությունը), որը կառուցվել էր 5-րդ կարգի «Իվան» փոթորկի չափանիշներին համապատասխան, շարունակեց իր գործունեությունը հարվածի ընթացքում, դրանից հետո և ավելի քան 1000 մարդու ծառայեց որպես ժամանակավոր ապաստարան: Այնուամենայնիվ, ավելի հին հաստատությունները պետք է նորացվեին՝ ելնելով առողջապահական հաստատությունների համար պահանջվող տեղական և միջազգային շինարարական նորմերից: Ուստի, սեյսմիկ ռիսկի նվազեցման բաղադրիչները նույնպես մտցվեցին նոր հաստատությունների նախագծերում:

Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ <http://www.caymanprepared.gov.ky>

Հիվանդանոցների անվտանգության ինդեքսը. Արդյո՞ք իմ հիվանդանոցը կկարողանա գործել աղետի ժամանակ

Աշխարհում գնալով ավելի մեծ թվով երկրներ են կիրառում **Հիվանդանոցների անվտանգության ինդեքսը**. մատչելի մեխանիզմ գաժր արժողությամբ մի գործիք, որն օգնում է առողջապահական հաստատություններին գնահատել իրենց անվտանգությունը և աղետների ժամանակ խուսափել վնասներից: Հիմնվելով կառուցվածքային, ոչ կառուցվածքային և գործառնական գործոնների, այդ թվում՝ շրջակա միջավայրի և առողջապահական ծառայությունների ցանցի վրա, հիվանդանոցների անվտանգության ինդեքսը տալիս է այն պատկերը, թե որքանով է հնարավոր հիվանդանոցի կամ առողջապահական հաստատության գործունեության անխափան աշխատանքն արտակարգ իրավիճակների ժամանակ: Սահմանելով հիվանդանոցի անվտանգության ինդեքսը կամ միավորը, երկրներն ու որոշում կայացնողներն ընդհանուր պատկերացում են կազմում արտակարգ իրավիճակների և աղետների ժամանակ արձագանքելու իրենց կարողության մասին: Հիվանդանոցների անվտանգության ինդեքսը չի փոխարինում խոցելիության ծախսատար և մանրամասն ուսումնասիրություններին: Այնուամենայնիվ, քանի որ այն համեմատաբար էժան է և հեշտ կիրառելի, ապա դա առաջին կարևոր քայլն է հիվանդանոցների անվտանգության ոլորտում ներդրումների առաջնահերթության սահմանման հարցում: Հիվանդանոցների անվտանգության ինդեքսը հասանելի է անգլերեն, իսպաներեն, արաբերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով:

Նախնական տեղեկությունները և ձևաչափերը կարող եք ներբեռնել հետևյալ կայքէջից՝ <http://tinyurl.com/c53gdvw>:



Գերակա ուղղություն 6 Շինարարական կանոնակարգեր և հոդօգտագործման պլանավորում

«Պարտադիր և հետևողականորեն կիրառել առկա ռիսկերին համապատասխան և իրատեսական շինարարական նորմերն ու հոդօգտագործման պլանավորման սկզբունքները: Հատկացնել անվտանգ հողատարածքներ ցածր եկամուտ ունեցող քաղաքացիներին, ինչպես նաև բարձրացնել ու բարելավել գործող շինարարական նորմերին չհամապատասխանող շինությունների անվտանգության մակարդակը»:

► **Ըստ Համաամերիկյան առողջապահական կազմակերպության, վտանգավոր երևույթների նկատմամբ դիմայունությունն ապահովելու համար (օրինակ՝ երկրաշարժ) շենքի նախագծման և կառուցման ընդհանուր ծախսը ավելանում է 1%-5%-ով (տես Կոլումբիայի օրինակը 2011թ.-ի Գլոբալ գնահատման հաշվետվության մեջ): Երբ խոսքը վերաբերում է կոնկրետ ոչ կառուցվածքային բաղադրիչներին, ապա այս ծախսային խնայողությունները շատ մեծ են: Օրինակ, խիստ մնասված էլեկտրակայանի պատճառով կարող է էլեկտրաէներգիա չլինել, և փոխարինումն արժե՛նալ 50,000 ԱՄՆ դոլար: Այս իրավիճակից կարելի է խուսափել՝ կատարելով ընդամենը 250 ԱՄՆ դոլարի ներդրում և տեղադրելով սեյսմիկ մեկուսիչներ ու հենարաններ՝ էլեկտրակայանի խափանումը կանխելու համար:**

Ինչո՞ւ

Երկրներն ու քաղաքները կունենան ավելի անվտանգ ենթակառուցվածքներ, եթե կիրառվեն համապատասխան կանոնակարգեր և շինարարական նորմեր: Շինարարական նորմերի և քաղաքի հոդօգտագործման պլանավորման և մշտադիտարկման մեխանիզմներն արժեքավոր միջոցներ են աղետների նկատմամբ խոցելիության և վտանգավոր այնպիսի երևույթների ռիսկի նվազեցման համար, ինչպիսիք են՝ երկրաշարժերը, հրդեհները, ջրհեղեղները, վտանգավոր նյութերի արտանետումները և այլն: Տեղական լիազոր մարմինների պարտականությունն է վերահսկել դրանց շարունակական կիրառումը և համապատասխանությունը: Դիմակայուն նախագծման չափանիշների կիրառումը և հոդօգտագործման պլանավորումը ծախսային տեսանկյունից ավելի արդյունավետ է, քան բնակության համար վտանգավոր շենքերի ու շինությունների վերաբնակեցումը և/կամ վերակառուցումը (ծախս-արդյունավետություն հարաբերակցությունն է՝ 4/1):

Ի՞նչ է հարկավոր անել

Շենքերի կառուցման գործընթացներում առկա ռիսկերին համապատասխան շինարարական նորմերի և կանոնակարգերի պարտադիր կիրառում և համապատասխանեցում

- Ապահովել, որ կանոնակարգերն ու օրենքները ներառեն շենքերի ու շինությունների կառուցման նորմեր, որոնցով սահմանվում են տեղանքի ընտրության, նախագծման և շինարարության չափանիշները՝ աղետների ռիսկը նվազագույնին հասցնելու համար:

Ռիսկի գնահատման վրա հիմնված քաղաքային և հոդօգտագործման պլանավորում

- Հիմնվելով քաղաքային ռիսկի գնահատման արդյունքների վրա՝ ինտեգրել աղետների ռիսկի նվազեցումը և կլիմայի փոփոխության ազդեցությունները քաղաքային հոդօգտագործման պլանների և կանոնակարգերի մեջ: Հոդօգտագործման պլանավորումը

պետք է ապահովի քաղաքի մերձակա տարածքների համահունչ ներառումը քաղաքային զարգացման գործընթացներում:

- Օգտագործել պլանները ծայրահեղ բարձր ռիսկային գոտիներում իրականացվող շինարարության կանխման կամ վերահսկման համար, ինչպես նաև՝ արդեն իսկ, առկա շինություններում գոյություն ունեցող ռիսկը նվազեցնելու նպատակով: Բարձր ռիսկային գոտիներում կիրառել սահմանափակումներ՝ շինության տեսակի, զբաղեցրած տարածքի և խտության վերաբերյալ:
- Քաղաքի ողջ տարածքում տեղակայել և ընդլայնել կարևորագույն նշանակության ենթակառուցների տարածքները, տարհանման կետերը, ապաստարանները, արտակարգ իրավիճակների կառավարման ծառայությունները և կենսաապահովման միջոցները: Սահմանել տարհանման, ինչպես նաև օգնության տրամադրման առանձին ճանապարհները: Քաղաքի աղետավտանգ գոտիներում զարգացումները վերահսկելու համար ստեղծել հողօգտագործման դասակարգման, խոցելի գործոնների ցանկ և շենքերի ու շինությունների տվյալների բազա:

Վերակառուցել ապօրինի բնակավայրերը և շինությունները

- Խոցելի բնակավայրերում ռիսկի նվազեցման համար ստեղծել մասնակցային մեխանիզմ: Հաշվի առնել բնակչության կարիքները, շինարարական փորձը և ցուցաբերել ճկունություն, երբ խոսքը վերաբերում է տարածքի զոնավորման և կառուցման չափանիշներին: Հնարավորության դեպքում, ապօրինի բնակավայրերը տեղափոխել ավելի ապահով տարածքներ՝ միևնույն ժամանակ բարելավելով կյանքի որակը, ուշադրություն դարձնելով կենսաապահովման կարիքների վրա և փնտրելով նորարարական ուղիներ՝ նոր վայրերում ավելի արդյունավետ ծառայությունների ֆինանսավորման համար:
- Նպաստել դիմակայուն շենքերի ու շինությունների նախագծմանը, ավելի անվտանգ շինարարության իրականացմանը և շինարարական նորմերին չհամապատասխանող կառույցների ամրացմանը՝ կիրառելով քիչ ծախսեր պահանջող միջոցներ և տեղական շուկայում հասանելի նյութեր:
- Կատարել կուտակված փորձի և գիտելիքների փոխանակում՝ հանրային քարոզարշավների և անվտանգ շինարարության միջոցների ցուցադրման միջոցով:

Չարգացնել տեղական կարողությունները և խթանել մասնակցային գործընթացները քաղաքային պլանավորման և հողօգտագործման ոլորտում

- Դիմակայուն շինարարության կանոնակարգերը, պլանները և շինարարական նորմերը կիրառելու նպատակով զարգացնել տեղական լիազոր մարմինների, շինարարների, առևտրականների և մասնագետների կարողություններն ու ունակությունները, ինչպես նաև խրախուսել նորագույն տեխնոլոգիաների և նորարարական մոտեցումների կիրառումը շենքերի կառուցման, նախագծերի և տեխնոլոգիաների մշակման գործընթացներում:
- Բարձրացնել քաղաքացիների իրազեկվածությունը, որը նրանց հնարավորություն կտա նկատել և տեղեկացնել վտանգավոր շինությունների և կառույցների առկայության մասին, որն էլ, իր հերթին, կնպաստի նորմերի համապատասխանության պահպանմանը:
- Ստեղծել հատուկ տեխնիկական խմբեր, որոնք կանոնավոր կերպով կանցկացնեն հավաստագրում:

Կառուցման և պլանավորման կանոնակարգեր, որոնք նպաստում են տեղական մակարդակում աղետների ռիսկի նվազեցմանը	Կառուցման և պլանավորման կանոնակարգեր, որոնք խանգարում են տեղական մակարդակում աղետների ռիսկի նվազեցմանը
<ul style="list-style-type: none"> • Ազգային մանդատները, որոնցով տեղական ինքնակառավարման մարմիններին լիազորվում է անվտանգ շինարարության պատասխանատվությունը (միևնույն ժամանակ տրամադրելով տեխնիկական աջակցություն և միջոցներ՝ մշակելու և իրականացնելու նախագծեր և ուժի մեջ դնելու շինարարական կանոնակարգեր): • Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղքատների կարիքների ճանաչումը և նրանց նկատմամբ հաշվետվողականությունը: • Նախագծերը, նորմերը և չափանիշները, որոնք մշակվում են գործարարների, բնակիչների և զանազան համայնքների հետ մասնակցային սկզբունքով՝ հաշվի առնելով վերջիններիս զարգացման հեռանկարները: • Ճկուն կանոնակարգվող միջավայրի առկայությունը, որը հաշվի է առնում և արագ հարմարվում է փոփոխվող տնտեսությանը, շրջակա միջավայրին և մեծածավալ շինարարական գործընթացներին: • Ապօրինի շինարարական գործընթացների ճանաչումը և անվտանգ շինարարության խրախուսումը ուսուցման և քարոզարշավների միջոցով: 	<ul style="list-style-type: none"> • Անվտանգ շինարարությունը կամ հոդօգտագործումը մատչելի կամ հասանելի չէ աղքատ բնակչության համար: • Հողի կամ բնակարանաշինության հասանելիության գործընթացներում առկա անհավասարությունը: • Ապօրինի բնակավայրերի անվտանգության ցածր մակարդակը, բնակիչներին սեփականության իրավունքից զրկումն ու տվյալ տարածքներից հարկադիր վտարումները: • Կանոնակարգեր, որտեղ հաշվի չեն առնվում գոյություն ունեցող իրականությունը և քաղաքների խտությունը, և որտեղ փոքր տների կամ աշխատանքային տարածքների կառուցումը կամ ավելի մատչելի այլընտրանքային շինարարական նյութերի օգտագործումն արգելվում է:

Տես ավելին GAR-2011-ում (Գլոբալ զնահարման հաշվետվություն) www.preventionweb.net/gar կայքէջում, Գլուխ 6.5 Հոդօգտագործման պլանավորումը և շինարարական կանոնակարգերը:

Օրինակ

Թայլանդը մտադիր է կանոնակարգել ապօրինի բնակավայրերի վիճակը

Թայլանդի կառավարությունը ստանձնել է աղքատ և քանդված թաղամասերի արդիականացման հավակնոտ նախաձեռնություն: «Բասն Մանկոնգ» (անվտանգ բնակարանաշինություն) ծրագիրը ֆինանսական միջոցները ենթակառուցվածքներին տրամադրվող սուբսիդիաների և բնակարանաշինության վարկերի տեսքով ուղղվում է ապօրինի բնակավայրերում բնակվող ցածր եկամուտ ունեցող բնակիչների համայնքային կազմակերպություններին: Ֆինանսավորումը համարյա ամբողջությամբ ձևավորվում է ներքին ռեսուրսներից՝ միավորելով կառավարության, տեղական ինքնակառավարման և համայնքային ներդրումները: Այս ազգային ծրագրի շրջանակներում ապօրինի բնակավայրերը կարող են ստանալ օրինական ձևակերպում մի շարք միջոցներով, ինչպիսիք են՝ կառավարության կողմից տրամադրած վարկով հողի սեփականատերից ուղղակի ձեռքբերումը, համայնքային վարձակալությունը, կառավարության կողմից տրամադրված այլ տարածք տեղափոխվելը կամ հողի փոխանակումը:

Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ <http://tinyurl.com/72p7375>:

Սանտա Տեկլա, Էլ Սալվադոր. Ռիսկը ներառող քաղաքային զարգացման պլան

Սանտա Տեկլան Էլ Սալվադորի մայրաքաղաք՝ Սան Սալվադորի մի մասն է կազմում: «Սանտա Տեկլայում 2001թ.-ին տեղի ունեցավ երկու երկրաշարժ: Ընդամենը հինգ վայրկյանում սողանքը 700 մարդու կյանք խլեց, տեղահանեց քաղաքի 20%-ը և լրջորեն վնասեց ենթակառուցվածքների 38%-ը: Անշարժ գույքի գինը ընկավ: Մենք ստիպված էինք լրջորեն մտածել մեր անելիքների մասին», - նշել է քաղաքապետ՝ Օսկար Օրթոգո: «Մենք հասկացանք, որ մեր քաղաքը վերականգնելու և դիմակայուն դարձնելու համար պետք է հրաժարվենք աղետի ժամանակ հանպատրաստի գործողությունների մշակման և իրականացման մոտեցումից և, դրա փոխարեն, սկսենք գործողությունների պլանավորումը նախօրոք: Անհրաժեշտ է ամենայն պատասխանատվությամբ և լրջությամբ մոտենալ կառավարման հարցերին: Մենք մշակեցինք քաղաքի վերազարգացման տասնամյա ծրագիր և այժմ ունենք կայուն ապագայի երկարաժամկետ ծրագիր մինչև 2020թ.: Քաղաքացիները պետք է գիտակցեն մեր գործողությունների կարևորությունը, այլապես շատ քիչ փոփոխություններ տեղի կունենան: Վերոնշյալին հասնելու համար, մենք խրախուսում ենք մասնակցությունը քաղաքացիական խմբերում (Mesas de Ciudadanos), որտեղ բազմաթիվ տարբեր շահագրգիռ կազմակերպություններ կանոնավոր կերպով հավաքվում են քննարկումների անցկացման և որոշումների կայացման համար: Նրանք հասկանում են, որ սրանք այն խնդիրներն ու որոշումներն են, որ վերաբերում են իրենց կենսակերպին, իրենց երեխաներին, իրենց դպրոցներին ու իրենց աշխատանքի արդյունավետությանը»: (Աղբյուրը՝ հարցազրույց քաղաքապետ՝ Օսկար Օրթոգոյի հետ, փետրվար 2011թ., ՄԱԱՆՄՌ):

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք <http://www.santatecladigital.gob.sv/> կայքէջը և սեղմե՛ք Gestión de Riesgos 13.11 (նյութն իսպաներեն լեզվով է):



Քաղաքի քաղաքապետարան, Աֆղանստան. Ջրահեռացման և մաքրման բարելավման աշխատանքներից առաջ և հետո





Գերակա ուղղություն 7 Վերապատրաստում, կրթություն և հանրային իրազեկում

«Ապահովել աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված հանրակրթական ծրագրերի և հանրության համար նախատեսված դասընթացների ներդրումն ու իրականացումը համայնքներում և դպրոցներում»:



Կյանքի փրկության ուսումնավարժանք դպրոցներում

► **Անհրաժեշտ է կենտրոնանալ մարդկանց միջև հաղորդակցման գործընթացների զարգացման վրա, ընդգրկել երեխաներին և երիտասարդներին գործնական ուսումնական միջոցառումներում, ներգրավել վստահելի և ազդեցիկ խոսնակների, որոնք հանդես կգան որպես աղետների ռիսկի նվազեցման գործընթացները իրազեկող մասնագետներ, միևնույն ժամանակ սովորել նաև այլ քաղաքների կամ ծրագրերի լավագույն փորձից:**

Ինչո՞ւ

Եթե քաղաքացիները պատրաստվում են մասնակցել դիմակայուն քաղաքների ստեղծման հավաքական գործունեությանը, ապա վերապատրաստումը, կրթությունը և հանրային իրազեկումը կարևոր նշանակություն ունեն այն ապահովելու համար (սա պետք է ներառել նաև բոլոր տաս գերակա ուղղությունների մեջ): Ամբողջ համայնքը պետք է տեղեկացված լինի իրեն սպառնացող վտանգավոր երևույթների և ռիսկերի մասին, եթե ցանկանում է ավելի լավ պատրաստվել և միջոցներ ձեռնարկել՝ հնարավոր աղետներին դիմակայելու համար: Աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման, կրթական և կարողությունների զարգացման ծրագրերը կարևոր նշանակություն ունեն քաղաքային մակարդակում աղետների ռիսկի նվազեցման ռազմավարությունների իրականացման գործընթացում քաղաքացիների մասնակցությունն ապահովելու և տվյալ խնդրի լուծմանն ուղղված համայնքի ջանքերը համախմբելու առումով: Այն նաև հնարավորություն կընձեռի զարգացնել աղետների պատրաստվածության և արձագանքման կարողությունները:

Ի՞նչ է հարկավոր անել

Քաղաքային մակարդակում բարձրացնել հանրային իրազեկվածության մակարդակը

- Իրականացնել հանրային իրազեկման քարոզարշավներ քաղաքացիների անվտանգության և աղետների ռիսկի նվազեցման վերաբերյալ՝ տարածելով տեղեկություններ տեղական վտանգավոր երևույթների, աղետների ռիսկի և կլիմայի փոփոխության, ինչպես նաև վերջիններիս բացասական ազդեցությունների նվազեցման ու կառավարման քայլերի ու միջոցառումների մասին:
- Խրախուսել տեղական քաղաքացիական խմբերին, դպրոցներին, լրատվական ծառայություններին և մասնավոր հատվածի ներկայացուցիչներին՝ միանալ և աջակցել գլոբալ քարոզարշավին, ինչպես նաև տարածել նշված ուղերձն ու բարձրացնել իրազեկվածությունը:

Ներառել աղետների ռիսկի նվազեցումը կրթական ծրագրերում

- Աշխատել կրթական ոլորտի լիազոր մարմինների, ուսուցիչների, աշակերտների և այլ համապատասխան մարմինների հետ աղետների ռիսկի նվազեցումը դպրոցական ծրագրի բոլոր մակարդակներում, ինչպես նաև բոլոր պետական և մասնավոր կրթական հաստատություններում ներառելու համար:
- Կրթական ծրագրերի մշակման նպատակով անհրաժեշտ տեխնիկական աջակցություն ստանալու համար դիմել համապատասխան հաստատություններին ու գործակալություններին: Սովորել նախկին փորձից:

Քաղաքային մակարդակով իրականացնել աղետների ռիսկի նվազեցման դասընթացներ և զարգացնել կարողությունները

- Համայնքների, սոցիալական ու տնտեսական ոլորտի տարբեր մասնագետների և տեղական ու ազգային հաստատությունների հետ համագործակցելով՝ ստեղծել մշտական գործող վերապատրաստման դասընթացների ծրագիր քաղաքապետարանի հիմնական աշխատակազմի համար: Համագործակցել տեղական կառույցների հետ, ինչպիսիք են՝ Կարմիր խաչի ընկերությունը, համալսարանները, ՀԿ-ները և այլն:
- Ուշադրություն դարձնել վերապատրաստման կարիք ունեցող առաջնային թիրախային խմբերին, ինչպիսիք են՝ քաղաքապետարանի վարչությունները և արտակարգ իրավիճակների կառավարման լիազոր մարմինները, հրշեջ և փրկարար ծառայությունները, արտակարգ իրավիճակների բժշկական թիմերը և օրենսդրական դաշտի աշխատակիցները, ճարտարագետները, ջրամատակարարման և սանիտարական ոլորտի, պլանավորման և գոտիավորման, բնապահպանության, առողջապահության, հաղորդակցության, լրատվական միջոցների մասնագետները, մասնավոր հատվածի ներկայացուցիչները, համայնքապետերը և կրթական ոլորտի վերապատրաստող մասնագետները: Սույն ձեռնարկը և այլ ուսումնական նյութեր կարող են օգտագործվել դասընթացների ընթացքում: Հարկավոր է ապահովել նաև շարունակական վերապատրաստման հնարավորությունը:

Նախաձեռնել աղետների անվտանգության մշակույթի ձևավորման միջոցառումներ քաղաքի մասշտաբով

- Հիշատակել տվյալ տարածքում տեղի ունեցած պատմական հիշարժան աղետների տարելիցները «Աղետների անվտանգության օր» անվան տակ, քանի որ այդ օրերին մարդիկ ավելի ընկալունակ են անվտանգությանը վերաբերող տեղեկատվությանը:
- Քաղաքում հիմնել հուշարձան կամ կազմակերպել փոքր ցուցահանդեսներ, ստեղծել պատմական աղետների վերաբերյալ թանգարան՝ պահպանելու անցյալում տեղի ունեցած աղետների և դրանց հետևանքների մասին հիշատակումներն ու հիշողությունները:
- Գտնել նոր ստեղծագործական ուղիներ՝ մասնակցելու ամեն տարի հոկտեմբերի 13-ին նշվող Աղետների նվազեցման միջազգային օրվան և այլ միջազգային օրերի, ինչպիսիք են՝ Օդերևութաբանության համաշխարհային օրը, Առողջապահության համաշխարհային օրը և այլն, ինչը հնարավորություն կտա հիշատակելու հիմնական պատմական աղետները:

► Աղետների նվազեցման միջազգային օրվա մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս www.unisdr.org/2011/iddr/ կայքէջը:



Օրինակ

Սայջո. Դիտիր և սովորիր. երեխաներն ու համայնքներն ուսումնասիրում են լեռնային և քաղաքային ռիսկերը

Ճապոնիայում մանկապարտեզներից և դպրոցներից սկսած կանոնավոր ուսումնավարժանքների միջոցով երեխաներին սովորեցնում են, թե ինչպես հայտնաբերել և արձագանքել արտակարգ իրավիճակներին: Այս երկարաժամկետ ներդրումն անկասկած մարդկային շատ կյանքեր փրկեց 2011թ.-ի մարտին տեղի ունեցած Արևելյան Ճապոնիայի մեծ երկրաշարժի և ցունամիի ժամանակ: 2004թ. **Ճապոնիայի Սայջո քաղաքում** տեղի ունեցան ռեկորդային թվով թայֆուններ, որոնք պատճառ հանդիսացան քաղաքային տարածքներում՝ հեղեղումների, իսկ լեռնային տարածքներում՝ սողանքների առաջացման համար: Սայջո քաղաքն ունի ծերացող բնակչություն, ինչը մտածելու տեղիք է տալիս: Երիտասարդ, կարող մարդկանց առկայությունը չափազանց կարևոր է համայնքներում փոխադարձ օգնության տրամադրման և արտակարգ իրավիճակներին պատրաստ լինելու համար: Քանի որ երիտասարդները տեղափոխվում են ավելի մեծ քաղաքներ, Ճապոնիայի փոքր քաղաքներում մնում է ավելի տարիքով բնակչությունը, և սա, ի լրումն, արդեն իսկ առկա անհավասարակշիռ ազգային միջին տարիքային ցուցանիշին: Սայջոյի նման փոքր քաղաքները հաճախ տեղակայված են լինում աշխարհագրական խառը դիրքերում, օրինակ՝ մեկուսացած գյուղեր բլուրների և լեռների վրա, կամ էլ ափամերձ գոտիներում տեղակայված բնակավայրեր: Այս խնդիրները լուծելու համար Սայջո քաղաքի ղեկավարությունը դպրոցականների համար նախաձեռնեց աղետների ռիսկի իրազեկման ծրագիր՝ ուշադրությունը սևեռելով քաղաքի աշխարհագրական դիրքի և շրջակա միջավայրի ֆիզիկական առանձնահատկությունների վրա: Ծրագրի շրջանակներում տասներկուամյա երեխաները ներգրավվում են լեռնային և քաղաքային աշխարհագրական յուրահատկությունները ուսումնասիրող ուսուցողական էքսկուրսիաներում: Երիտասարդ քաղաքացիները հանդիպում են տարեցների հետ՝ միասին սովորելու Սայջո քաղաքին սպառնացող ռիսկերի մասին և հիշելու 2004թ.-ի թայֆուններից քաղված դասերը: Մշակվել է «լեռնային և քաղաքային ուսուցողական» ձեռնարկ, ինչպես նաև հիմնարկվել են աղետների ուսուցման ուսուցիչների ընկերություն և աղետների կանխարգելման երեխաների ակումբ:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելե՛ք <http://www.unisdr.org/we/inform/publications/13627> կայքէջը (էջ 29):

Աղետների անվտանգության օրեր. հիշում ենք անցյալի աղետալի իրադարձությունների տարելիցները

Նեպալում հունվարի 15-ին նշում են 1934թ. Նեպալի մեծ երկրաշարժի օրը: Կատմանդուում քաղաքական առաջնորդներն ու հայտնի անհատներն այդ իրադարձությունը հիշատակում են մի շարք միջոցառումներով, ինչպիսիք են՝ շքերթները, ցուցադրությունները, անվտանգ շինարարության ցուցահանդեսները, փողոցում անցկացվող ներկայացումները, ինտերակտիվ սեմինարները, ցուցատախտակները, երեխաների համար նախատեսված արվեստի և այլ ոլորտի մրցույթները և ներկայացումները: Երկրաշարժի սիմուլյացիոն ուսումնավարժանքներն ամենադիտարժան են, որոնց մասնակցում են հանրության բազմաթիվ ներկայացուցիչներ և դրանք լուսաբանվում են լրատվամիջոցների կողմից: Ազգային և քաղաքային իշխանությունները հանդիսանում են միջոցառումների կազմակերպիչ և առաջնորդում են դրանք:

Ճապոնիայում ամեն տարի սեպտեմբերի 1-ին նշում են Աղետների անվտանգության ազգային օրը, որը հանդիսանում է 1923թ.-ի Կանտոյի մեծ երկրաշարժի տարելիցը: Ամեն տարի մեծ թվով աշակերտներ են այցելում Կոբե քաղաքում գտնվող Երկրաշարժի հիշատակման թանգարան, որը կառուցվել է 1995թ.-ի հունվարի 18-ին տեղի ունեցած Հանշին-Ավաջի մեծ երկրաշարժից հետո:

Չինաստանում մայիսի 12-ին նշում են Աղետների անվտանգության ազգային օրը՝ ի հիշատակ 2008թ.-ի Վենչուանի երկրաշարժի: Շրի Լանկայի **Ռատնապուրա** և Ֆիլիպինների **Դագուպան** քաղաքներում նույնպես նշում են Աղետների անվտանգության ազգային օրը՝ տեղի պատմական իրադարձությունների տարելիցների օրերին:

Լրացուցիչ տեղեկությունների համար, թե ինչպես են փարբեր քաղաքներ և այլոք նշում Աղետների նվազեցման միջազգային օրը, տես www.unisdr.org/iddr կայքէջը:



Գերակա ուղղություն 8 Շրջակա միջավայրի պահպանություն և էկոհամակարգերի հզորացում

«Պաշտպանել առկա այն էկոհամակարգերն ու բնական պաշտպանական միջավայրը, որոնց օգնությամբ հնարավոր է մեղմել կամ նվազեցնել ջրհեղեղների, փոթորիկների և այն վտանգավոր երևույթների ազդեցությունը, որոնց նկատմամբ ձեր քաղաքը խոցելի է: Հարմարվել կլիմայի փոփոխությանը՝ ներդնելով և զարգացնելով, հաջողված փորձի վրա հիմնված, աղետների դիմացի նվազեցման արդյունավետ միջոցառումներ»:

► **Էկոհամակարգերի վրա հիմնված կառավարումն ընդգրկում է ամբողջ համակարգը, ներառյալ մարդիկ և շրջակա միջավայրը: Այն ուղղված է բնապահպանական միավորներին, ինչպիսիք են՝ ջրբաժանները, խոնավ հողերը կամ ափամերձ էկոհամակարգերը (և մարդկային համայնքները, որոնք բնակվում են այդ շրջապատում կամ ապավինում այդ ռեսուրսներին): Կառավարման արդյունքում բացահայտվում են հասարակության կարիքները և փորձեր արվում խրախուսել հողի և ռեսուրսների այնպիսի օգտագործում, որը չի վնասում էկոհամակարգերի բնականոն կենսագործունեությանը, որին ապավինում են քաղաքի բնակիչները:**

Ինչո՞ւ

Էկոհամակարգերը ծառայում են որպես բնական պաշտպանական միջավայր՝ բնական վտանգավոր երևույթների կանխման և կանխարգելման համար: Դրանք բարձրացնում են համայնքների դիմակայունությունը՝ ամրապնդելով կենսաապահովման բնական պայմանները, խմելու ջրի, պարենի և այլ բնական ռեսուրսների հասանելիությունն ու որակը: Ուրբանիզացիայի ընթացքում քաղաքները փոփոխության են ենթարկում իրենց շրջապատող միջավայրը և հաճախ առաջացնում նոր ռիսկեր: Զրատար համակարգերի փոփոխությունների արդյունքում կարող են փոխվել հիդրոլոգիական ռեժիմները և ապակայունացվել լանջերը՝ մեծացնելով վտանգավոր երևույթների ռիսկը, ինչպիսիք են՝ ջրհեղեղներն ու սողանքները: Մարդկային գործունեության և էկոհամակարգերի միջև հավասարակշռության պահպանումը գերազանց ռազմավարություն է ռիսկի նվազեցման, դիմակայունության ամրապնդման ու կայունության ապահովման համար:

Ինչ է հարկավոր անել

Բարձրացնել իրազեկվածությունն այն մասին, թե ինչ ազդեցություն են ունենում բնապահպանական փոփոխություններն ու էկոհամակարգերի դեգրադացիան աղետների դիմացի վրա

- Ճանաչել և տարածել այն բազմաթիվ գործառնություններն ու ծառայությունները, որ էկոհամակարգերը տրամադրում են քաղաքին, որոնց շարքում են բնական վտանգավոր երևույթների կանխումն ու կանխարգելումը:
- Հանրությանը տեղեկացնել համընդհանուր տաքացման և կլիմայի փոփոխության բացասական հետևանքների մասին:

Խրախուսել կանաչապատումն ու էկոհամակարգերի պաշտպանությունը՝ կայուն կենսակերպի և զարգացման պլանավորման ժամանակ

- Վերանայել գոյություն ունեցող պլանների, քաղաքականությունների և ծրագրերի բնապահպանական հետևանքները, ինտեգրել

Գերակա ուղղություն 8. Շրջակա միջավայրի պահպանություն և էկոհամակարգերի հզորացում

էկոհամակարգերին վերաբերող հարցերը հետագա պլանավորման գործընթացներում և բացահայտել դեգրադացման պատճառները:

- Նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները և նպաստել կանաչ տնտեսության անցմանը, կատարել ներդրումներ ռիսկի նվազեցման և էկոհամակարգերի վրա հիմնված միջոցառումների իրականացման համար, ինչը կնպաստի կլիմայի փոփոխության հարմարվողականությանը:

Հիմնել համագործակցային մեխանիզմներ բնապահպանության ոլորտի ղեկավարների և մասնավոր հատվածի հետ

- Զարգացնել գործընկերների կարողությունները՝ իրականացնելու վտանգի և խոցելիության գնահատումներ, բնապահպանական գնահատումներ և գիտական մշտադիտարկում՝ ընդլայնելու կառավարման կարողությունը էկոհամակարգերի հիման վրա աղետների ռիսկի կառավարման իրականացման համար և ընդգրկելով բազմաթիվ ոլորտներ, տարբեր մասնագիտական պլատֆորմներ և որոշումներ կայացնող տեղական շահագրգիռ կողմեր:
- Հիմնել համագործակցություն մասնավոր հատվածի հետ՝ ներգրավելով տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ և ապահովել մասնավոր ներդրումների կիրառումը՝ բնապահպանական և ռիսկի նվազեցման նորմերին համապատասխան:

Հզորացնել էկոհամակարգերի կառավարման գոյություն ունեցող գործիքները կամ ստեղծել այնտեղ, որտեղ դրանք դեռևս գոյություն չունեն

- Զրային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը կարգավորելու համար իրականացնել ջրատար համակարգերի կառավարման կայուն ծրագիր: Պահպանել ջրի պահեստավորման և բացթողնման կարողությունները: Պահպանել հոսքը բնապահպանական կարիքների համար և, կանխել կամ կանխարգելել ջրի հետ կապված վտանգավոր երևույթները:
- Ափամերձ տարածքների պաշտպանության, հոսանքն ի վեր անտառային շերտի ստեղծման, խոնավ հողերի և գետերի ափերի վերականգնման, ինչպես նաև հեղեղումների կարգավորման նպատակով՝ ներառել ջրհեղեղների կանխման և կանխարգելման միջոցառումները նախագծված ենթակառուցվածքների մեջ, որը կնպաստի քաղաքային զարգացման նպատակների իրականացմանը:



Սան Ֆրանցիսկոյի քաղաքապետարան, Ֆիլիպիններ, Նրանց տպավորիչ «Երկու միլիոն ծառերի ծրագիրը» ներգրավում է համայնքներին, բարելավում էկոհամակարգը և կրճատում ջերմոցային գազերի արտանետումները:

Օրինակ

Էկոհամակարգերի վրա հիմնված աղետների ռիսկի կառավարումը Չինաստանի Հուբեյ նահանգում և Նյու Յորքում

Չինաստանի Հուբեյ նահանգում խոնավ հողերի վերականգնման ծրագրի շրջանակներում լճերը նորից կապեցին Յանգզի գետին և վերականգնեցին 448 կմ² խոնավ հողեր՝ 285 միլիոն մ³ հեղեղումների ջուր պահեստավորելու կարողությամբ: Հետագայում տեղական ինքնակառավարման մարմինները ևս ութ լիճ 350 կմ² տարածքով միացրեցին գետին: Լճերի ջրարգելակները վերաբացվում են սեզոնային սկզբունքով, իսկ անօրինական ջրային միջոցառումներ իրականացնող կառույցները վերացվել են կամ վերանորոգվել: Տեղական ինքնակառավարման մարմինները լճի շրջակա և ճահճային տարածքները հայտարարել են որպես բնական պահպանվող գոտիներ: Ի լրումն ջրհեղեղների կանխարգելմանը, արդյունքում բարելավվել է նաև կենսաբազմազանությունը, 20-30%-ով աճել է ձկնորսությունից ստացվող եկամուտը և բարելավվել ջրի որակը՝ ընդհուպ մինչև խմելու մակարդակի:

Այս գործելակերպի մասին ավելին կարդալու համար տես՝ ՄԱՄՆՄԻ Գլոբալ գնահատման հաշվետվությունը, Գլուխ 6.4:

Նյու Յորքում փոթորիկները և կոյուղաջրերը հաճախ հեղեղում են քաղաքի փողոցները, քանի որ հին կոյուղու համակարգն այլևս արդյունավետ չի գործում: Հորդառատ անձրևներից հետո ջուրն ուղղակիորեն հոսում է գետերը՝ այդ ջրի անհրաժեշտությունն ունեցող բուսականությանը հասնելու փոխարեն: Նյու Յորքի ջրատար խողովակների բարելավման աշխատանքները գնահատվել է 6.8 միլիարդ ԱՄՆ դոլար: Փոխարենը, Նյու Յորքը կներդնի 5.3 միլիարդ ԱՄՆ դոլար՝ տանիքների, փողոցների և մայրերի կանաչ ենթակառուցվածքների զարգացման համար: Արդյունքում մի քանի օգուտ կքաղեն. նոր կանաչ տարածքներն ավելի շատ անձրևաջուր կունենան և կթեթևացնեն քաղաքի կոյուղու բեռը, կբարելավվի նաև օդի որակը, իսկ ջրի և էլեկտրաէներգիայի գինը կարող է նվազել:

Այն նախաձեռնությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ <http://tinyurl.com/84x4w9v>, Գլուխ 6.4:

Օվերստրանդ. Երաշտները որպես մեծացող ռիսկ

Հարավային Աֆրիկայի Օվերստրանդ քաղաքում տեղի է ունեցել բնակչության արագ և սեզոնային աճ և կանխատեսվել է ջրի տղություն Հերմանուս վարչական շրջանում, որտեղ տեղումները պակասել են 1997թ. ի վեր: Կլիմայի փոփոխությունը սպառնում է առաջ բերել տեղումների ավելի փոփոխական միտումներ և ջերմաստիճանի ծայրահեղ տատանումներ: Ի պատասխան, քաղաքապետարանն ընդունեց ջրային ռեսուրսների կառավարման և զարգացման համապարփակ ծրագիր, որը հիմնված է Ջրային ռեսուրսների և անտառային գործերի Հարավաֆրիկյան ազգային վարչության կողմից մշակված ազգային քաղաքականության և օրենսդրական հարթակի վրա: Ձգտելով ունենալ երկարաժամկետ և բազմոլորտ ծրագիր, մշակվեց երկու ռազմավարություն՝ ուղղված ջրի պահանջի ավելի արդյունավետ կառավարմանը և ջրի լրացուցիչ և կայուն աղբյուրների հայթայթմանը: Մի շարք տարբերակների վերլուծությունից հետո նախաձեռնեցին գրունտային ջրերի վերհանման աշխատանքները՝ տեղակայելու տեղական ջրի աղբյուրներ: Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մշտական համակարգողի դերը չափազանց կարևոր էր նման երկարաժամկետ և բազմոլորտ ծրագրի իրականացման համար, որն ընդգրկում էր ազգային և մարզային ջրային ռեսուրսների կառավարման գերատեսչությունները, կենսաբազմազանության պահպանման մարզային ինստիտուտը և մի խումբ համայնքահեն կազմակերպություններ: Գրունտային ջրերի վերհանման նկատմամբ շահագրգիռ կողմերի ունեցած թերահավատությունը և անվստահությունը հաղթահարվեց մասնակցային մշտադիտարկման հանձնաժողովի հիմնադրմամբ և սկզբնական համեմատական տվյալների մշակմամբ:

Լրացուցիչ տեղեկությունների համար տես <http://www.unisdr.org/we/inform/publications/13627> կայքէջը (էջ 52):



Գերակա ուղղություն 9 Արդյունավետ պատրաստվածություն, վաղ ազդարարում և արձագանքում

«Հիմնել վաղ ազդարարման համակարգեր և ստեղծել ճգնաժամային կառավարման համապատասխան կարողություններ: Բնակչության պատրաստվածության մակարդակի բարձրացման համար կանոնավոր կերպով կազմակերպել և իրականացնել հանրային ուսումնասնվածություններ»:



▶ Ռիսկի և աղետների սցենարներ

Մտածեք այնպիսի մեծ աղետի հնարավոր ազդեցության մասին, որի միջով ձեր համայնքը, հաստատությունը կամ ձեռնարկությունն անցել է, օրինակ՝ երկրաշարժ, փոթորիկ կամ ջրհեղեղ: Ինչպիսի խոցելիություն ունեն բնակարանային, առևտրային, առողջապահական, կրթական և այլ ենթակառուցվածքները վտանգավոր տվյալ երևույթի նկատմամբ: Որտեղ է ենթակառուցվածքը տեղակայված և ինչպե՞ս կամ ինչո՞ւ է այն դարձել խոցելի: Կարելի է արդյո՞ք նվազեցնել այդ խոցելիության աստիճանը:

Ինչո՞ւ

Արտակարգ իրավիճակների պատրաստվածության և արձագանքման լավ մշակված պլանները ոչ միայն նպաստում են մարդկային կյանքի և նյութական արժեքների փրկությանը, այլև հաճախ նպաստում են դիմակայունության ամրապնդմանը և հետադեպային վերականգնմանը՝ նվազեցնելով աղետների հետագա ազդեցությունը: Պատրաստվածությունը և վաղ ազդարարման համակարգերը բնական կամ այլ վտանգավոր երևույթների սպառնալիքի պայմաններում օգնում են քաղաքներին, համայնքներին ու անհատներին գործել արդյունավետ ժամանակահատվածում և համապատասխան ձևով՝ նվազեցնելով նյութական կորուստները, զոհերի թիվը, ինչպես նաև սեփականության և շրջակա անկայուն միջավայրի վնասները: Կայունությունը կարելի է ձեռք բերել, եթե համայնքն ու տեղի լիազոր մարմինները հասկանան տեղական պատրաստվածության և արձագանքման կարևորությունն ու անհրաժեշտությունը արտակարգ իրավիճակների կառավարման տեսանկյունից:

Ի՞նչ է հարկավոր անել

Հզորացնել և բարելավել պատրաստվածությունը.

- Ստեղծել հաստատությունական և օրենսդրական մեխանիզմներ՝ ապահովելու, որ պատրաստվածությունը կազմի քաղաքի բոլոր ոլորտների և հաստատությունների քաղաքականության և գործունեության մի մասը:
- Կիրառելով փորձարկված սցենարներ՝ մշակել, վերանայել և բարելավել ամբողջ քաղաքն ընդգրկող միջգերատեսչական հաստատությունական պատրաստվածության և արձագանքման պլանները:
- Ներառել տեղական մակարդակում ռիսկի վերլուծության արդյունքները հաղորդակցման և աղետների պատրաստվածության ռազմավարության մշակման գործընթացում:
- Ապահովել, որ քաղաքի արտակարգ իրավիճակների պատրաստվածության պլանը ներառի փրկարարական աջակցության և տուժած բնակչությանն օգնություն ցուցաբերելու

արդյունավետ միջոցառումներ՝ նախապես ընտրված տեղական կառույցների և քաղաքացիական կազմակերպությունների հետ միասին:

Ստեղծել կամ բարելավել բազմաբնույթ վտանգավոր երևույթների վաղ ազդարարման համակարգ

- Որպես արտակարգ իրավիճակների պատրաստվածության պլանի մի մաս, հիմնել վաղ ազդարարման և հաղորդակցման համակարգ, որն ընդգրկում է պաշտպանական միջոցառումներ և տարհանման հստակ ուղիներ:
- Հզորացնել տեղական կարողությունները, ինչը հնարավորություն կտա խուսափել արտաքին ռեսուրսների կախվածությունից և կիրախուսի մասնակցությունն ու գիտելիքների փոխանակումը:
- Հստակ սահմանել, թե ում է պատկանում աղետների ռիսկի վերաբերյալ տեղեկությունների թարմացման և վաղ ազդարարման համակարգերի ակտիվացման հաստատութենական և որոշումների կայացման պատասխանատվությունը: Վերարտադրել արտակարգ իրավիճակների արձագանքման պլանները՝ փորձարկել առաջարկվող արձագանքման և հանրային իրազեկման, ինչպես նաև աղետների ռիսկի կառավարման վերաբերյալ ուսուցման մոդելների արդյունավետությունը:

Արդիականացնել քաղաքի արտակարգ իրավիճակների արձագանքման ծառայությունները

- Որոշել, թե ինչպիսի սարքավորումներ, դասընթացներ և ռեսուրսներ են հարկավոր քաղաքին սպառնացող վտանգավոր երևույթներին և խոցելիությանը դիմակայելու համար և, ըստ անհրաժեշտության, սահմանել գնումների և արդիականացման առաջնահերթությունները:
- Անցկացնել հատուկ մասնագիտացված դասընթացներ առաջին արձագանքողների համար ոչ միայն սարքավորումների կիրառման վերաբերյալ, այլև այն նոր մեթոդների, որոնք կիրառվում են հնարավոր արտակարգ իրավիճակներին դիմակայելու համար:

Մշակել և իրականացնել հրամանատարաշտաբային վարժանքներ և ուսումնավարժանքներ

- Իրականացնել հրամանատարաշտաբային վարժանքներ, որոնց ժամանակ տեղական դերակատարները գնահատում են համայնքի, հաստատության կամ գերատեսչության կարողությունը՝ արձագանքելու և իրականացնելու արտակարգ իրավիճակների պատրաստվածության պլանով նախատեսված մեկ կամ մի քանի գործողություններ:
- Կանոնավոր հիմունքներով կազմակերպել ուսումնավարժանքներ, ինչը հնարավորություն կտա փորձարկել համալիր արձագանքման միջոցառումները և գնահատել պլանը, քաղաքականությունն ու ընթացակարգերը: Սա կօգնի բացահայտել գոյություն ունեցող թույլ կողմերը և որոշել ռեսուրսների բացերը:
- Ներգրավել կազմակերպությունների լայն շրջանակ, այդ թվում՝ հրշեջ ծառայությունը, օրենսդրական և արտակարգ իրավիճակների կառավարման մարմինները և, ըստ անհրաժեշտության, այլ գերատեսչություններ, ինչպիսիք են՝ տեղական հանրային առողջապահական և հանրային անվտանգության հաստատությունները, Կարմիր խաչի ընկերությունը և այլն:

Նախապես պլանավորել վերականգնողական աշխատանքները

- Հետադեպային արդյունավետ վերականգնման համար անհրաժեշտ պլանավորման և իրականացման դժվարությունները հաղթահարեք աղետից առաջ: Նախապես պլանավորումը հնարավորություն է տալիս քաղաքային լիազոր մարմիններին համաձայնության գալ վերականգնման նպատակների և ռազմավարության վերաբերյալ, հավաքագրել կարևոր տեղեկություններ վերականգնման որոշումների կայացման համար, սահմանել տարբեր կառույցների դերերն ու պարտականությունները և զարգացնել անհրաժեշտ կարողություններ՝ վերականգնողական գործողությունները արդյունավետորեն իրականացնելու համար:

Օրինակ

Ջակարտա. Շատ գործընկերներ, վաղ ազդարարման մեկ ինտեգրված համակարգ

Ինդոնեզիայի ափամերձ **Ջակարտա** քաղաքը, որտեղից սկիզբ է առնում 13 գետ, գտնվում է ջրհեղեղների բարձր ռիսկային գոտում: Ջակարտայի տարածքի մոտ 40%-ը գտնվում է ծովի մակարդակից ցածր գոտում, իսկ վարչական տարածքն ընդգրկում է 110 կղզի: Հիդրոօգերևութաբանական վտանգավոր երևույթները մեծ վնաս են հասցրել ափամերձ տարածքներում և գետերի ափերի մոտ գտնվող բնակավայրերին: Վերջին հինգ տարիների ընթացքում ջրհեղեղների պատճառով Ջակարտան կորցրել է շինությունների և ենթակառուցվածքների մեջ ներդրած միլիարդավոր դոլարներ: Ջրհեղեղների վաղ ազդարարման համակարգում բարելավումների իրականացումը իրապես եղել է բազմոլորտ գործընթաց՝ տեղական լիազոր մարմինների և գործընկերների լայն շրջանակի ընդգրկմամբ: Հաշվի առնելով բոլոր շահագրգիռ կողմերի շահերն ու կարիքները, ինչպես նաև համակարգելով համագործակցությունը, վաղ ազդարարման համակարգն ամբողջությամբ արդիականացվեց: Տեխնիկական վերազինման արդյունքում արդեն հնարավոր է ջրհեղեղների վաղ ազդարարումը: Բայց ավելի կարևոր է այն փաստը, որ զարգացել է պատրաստվածության կարողությունը: Հիմնվել և համապարփակ ուսումնավարժանքների միջոցով փորձարկվել են հիմնական համակարգման մեխանիզմներն ու գործառնական ընթացակարգերը: Արդյունքում, համապատասխան հաստատություններն ու համայնքներն այժմ ավելի պատրաստ են ազդարարման դեպքում արդյունավետ գործելու:

Լրացուցիչ տեղեկությունների համար տես <http://www.unisdr.org/we/inform/publications/13627> կայքէջը (էջ 21):

Մակաոի քաղաք, Ֆիլիպիններ. Արտակարգ իրավիճակների օպերատիվ կենտրոն

Ֆիլիպինների Մակաոի քաղաքը աշխույժ բիզնես կենտրոն է, որտեղ գտնվում են երկրի գլխավոր ձեռնարկությունները՝ այն դարձնելով Ֆիլիպինների ֆինանսական մայրաքաղաք: Քաղաքի դինամիկ սոցիալական և տնտեսական աճը պահանջում էր էական բարելավումների իրականացում ծառայությունների մատուցման ոլորտում՝ ապահովելու վերջիններիս անվտանգությունը: 2006թ.-ի քաղաքապետ, իսկ այժմ փոխնախագահ՝ Ջեյնուար Ս. Բինայը հիմնեց Մակաոի C3 կենտրոնը (Մակաոի համակարգում, վերահսկում և հաղորդակցություն), որը ծառայում է որպես քաղաքի արտակարգ իրավիճակների կառավարման օպերատիվ կենտրոն՝ արտակարգ իրավիճակների ժամանակ ծառայությունների և ռեսուրսների մշտադիտարկում, համակարգում և ինտեգրում իրականացնելու համար:

Մակաոի C3-ը գործում էր այն ժամանակ համայնքապետ, այժմ քաղաքապետ՝ Ջեյնուար Էրվին Ս. Բինայ կրտսերի ղեկավարության ներքո, որը ձգտում էր շարունակաբար բարելավել ծառայությունների արդյունավետ և ժամանակին մատուցումը՝ ներդնելով եռանիշ հեռախոսահամար՝ (168) և արդիականացնելով տեխնիկական սարքավորումները, այդ թվում՝ աշխարհագրական տեղեկատվական համակարգը (GIS) և տեսագրական դիտարկումը: Մակաոի C3-ը հզորացրեց իր աշխատակիցների օպերատիվ կարողությունները և չափանիշները՝ համագործակցելով միջազգային UNDAC, ASEAN և INSARAG կազմակերպությունների հետ: Ամուր կապեր հաստատվեցին նաև ազգային, մարզային, տեղական, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների, մասնավոր և գործարար հատվածների հետ:

Որպես անվտանգ և դիմակայուն համայնքներ ստեղծելու իր առաքելության մի մաս, քաղաքում Մակաոի C3-ն ակտիվ դեր է ստանձնում ռիսկի նկատմամբ զգայուն հողօգտագործման պլանավորման և համայնքահեն աղետների ռիսկի նվազեցման կարողությունների զարգացման ծրագրերի իրականացման գործընթացներում: Ընդլայնելով իր գործառույթները, Մակաոին իր ծառայությունների միջոցով աջակցում է այլ քաղաքների ու քաղաքապետարանների, և նպատակ ունի հիմնելու ազգային վերապատրաստման կենտրոն:

Ավելին տես <http://tinyurl.com/7su6wtw> կայքէջում:



Գերակա ուղղություն 10 Վերականգնում և համայնքների վերակառուցում

«Ապահովել, որ ցանկացած աղետից հետո տուժած բնակչության կարիքներն առաջնահերթ լինեն վերականգնման փուլում: Աջակցել բնակչությանն ու համայնքային կազմակերպություններին մշակելու և իրականացնելու արձագանքմանն ու հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումներ՝ ներառելով շենքերի և շինությունների վերակառուցումն ու կենսական կարևոր պայմանների վերականգնումը»:



▶ **Հետադետային վերականգնման և վերակառուցման ծրագրերը հնարավորություն են տալիս իրականացնել ավելի արդյունավետ ու անվտանգ շինարարություն, համակարգային բարելավումներ և քաղաքի վնասված համակարգերի արմատական վերանորոգումներ:**

▶ **Վերականգնման ծրագրերում ուշադրության արժանի կարևոր խնդիրներից է փլատակների մաքրումն ու շինարարական աղբի հեռացումը, ժամանակավոր կացարանների տրամադրումը և համապատասխան քաղաքականության ընդունումն այն մասին, թե արդյոք տվյալ տարածքի զոնավորման նորմերին չհամապատասխանող շենքերը պետք է վերակառուցել միևնույն տեղում:**

▶ **Տեղական լիազոր մարմինները պետք է առաջնորդեն**

Ինչո՞ւ

Քաղաքները տասնամյակների և դարերի ընթացքում կառուցվում են բազմաթիվ հաստատությունների կողմից, այդ իսկ պատճառով դժվար է կարճ ժամանակահատվածում վերակառուցել դրանք: Մշտապես գոյություն է ունեցել անհանգստություն այսպես կոչված «արագ վերակառուցման և հնարավորինս գրագետ վերակառուցման» ընտրության միջև: Լավ պլանավորված, մասնակցային վերականգնման և վերակառուցման գործընթացն օգնում է քաղաքներին ակտիվանալ, վերականգնել և վերակառուցել վնասված ենթակառուցվածքները ու տնտեսությունը՝ հնարավորություն տալով քաղաքացիներին վերականգնել իրենց կյանքի բնականոն ընթացքը, բնակարաններն ու կենսական կարևոր պայմանները: Վերակառուցումը պետք է սկսել հնարավորինս շուտ: Իրականում, քաղաքները կարող են կանխատեսել կարիքները, հիմնել օպերատիվ մեխանիզմներ և հատկացնել ռեսուրսներ՝ նախքան աղետից որևէ հարված ստանալը: Այստեղ կարևոր դեր են խաղում գործընթացների առաջնորդումը, համակարգումը և միջոցների ձեռքբերումը:

Ի՞նչ է հարկավոր անել

Վերականգնման գործընթացը պետք է լինի աղետների նվազեցման ծրագրերի և հանրային քաղաքականության մի մասը

- Դիտարկել վերականգնման և վերակառուցման գործընթացները՝ որպես քաղաքային դիսկի նվազեցման և զարգացման կանոնավոր գործընթացների անբաժանելի մաս:
- Որոշել, թե ինչպիսի միջոցներ կպահանջվեն, և նախապես պլանավորել վերջինների ասպահովման մեխանիզմները:

Կարիքների ցանկում ներառել տուժած բնակչությանը

- Վերակառուցման սկզբից մինչև վերջ ուշադրությունը սևեռել տուժած բնակչության կարիքների վրա՝ խրախուսելով նրանց մասնակցությունը դիմակայունության բաժրացմանն ու կայունության ասպահովմանն ուղղված նախագծերի և գործողությունների կատարման վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներում:

վերակառուցման գործընթացը՝ օգտագործելով ճգնաժամը որպես քաղաքի զարգացման պլանավորման, բարելավման և ապագա ռիսկերի նվազեցման հնարավորություն: Կարճ ասած, ձգտեք բարելավել ձեր քաղաքի կյանքի որակը և զարգացման կայունությունը:

- Իրականացնել համապատասխան միջոցառումներ, որոնք կօգնեն քաղաքը հնարավորինս արագ վերադարձնել իր բնականոն կենսագործունեությանը, այդ թվում նաև վերաբացել դպրոցները:
- Ապահովել, որ գործողություններն ու ծրագրերը ներառեն համապատասխան խորհրդատվություն՝ աջակցելու աղետից տուժած բնակչությանը գտնել աշխատանք և կառավարել իրենց տնտեսական խնդիրները:

Վերականգնման փուլը հնարավորություն է ընձեռում ավելի արդյունավետ կառուցման և զարգացման բարելավման համար

- Գնահատել քաղաքի ռազմավարական ծրագիրը և սահմանել գերակա այն տարածքները, որոնք ամենամեծ ազդեցությունն են կրում զարգացման գործընթացներից: Այդ տարածքներում կիրառել աղետների ռիսկի նվազեցումը՝ որպես կարևորագույն միջոցառում:
- Ըստ անհրաժեշտության, վերաձևակերպել մեծամասշտաբ և փոքրամասշտաբ ծրագրերը՝ հզորացնելով հատկապես այն ծրագրերը, որոնք ուղղված են դիմակայունության բարձրացմանը: Քաղաքի համար սահմանել մեխանիզմներ, կանոնակարգեր և կայուն հաստատութենական և քաղաքական ծրագրեր:
- Ստեղծել և զարգացնել կարողությունները՝ ուշադրություն դարձնելով տեղական մակարդակում կարողությունների հզորացմանը, և ամրապնդել զարգացման միտումները՝ օգտագործելով տեղական մակարդակի գիտելիքներն ու ռեսուրսները:
- Վերականգնման գործընթացում չի կարելի անտեսել բնական և մշակութային ռեսուրսների և արժեքների պաշտպանությունը:
- Հատուկ ուշադրություն դարձնել ժամանակավոր ապաստարաններին՝ ապահովելով, որ դրանք լինեն դիմակայուն և տեղական նորմերին համապատասխան, որպեսզի աղետների դեպքում չդառնան կիսաքանդ շինություններ:

Ձեռք բերել ռեսուրսներ, ամրապնդել համագործակցային մեխանիզմները և ապահովել կայունությունը

- Վերակառուցման գործընթացը նախաձեռնելու համար հարկավոր է մշակել ռեսուրսների կառավարման ռազմավարություն: Ներգրավել ազգային և միջազգային համագործակցության կազմակերպություններ, գործարար հատվածը և այլ հնարավոր գործընկերների:
- Ամրապնդել գոյություն ունեցող համագործակցային մեխանիզմները կամ հաստատել նորերը, ինչը կնպաստի վերակառուցման գործընթացին և հնարավորություն կտա ստեղծել նոր կարողություններ, ինչպես նաև օգտվել տեխնիկական և գիտական նորարարություններից՝ նվազեցնելու հնարավոր աղետների ռիսկը և բարձրացնելու դիմակայունությունը:

Օրինակ

Վերակառուցման սեփականատիրական մոտեցում Շրի Լանկայում

2004թ.-ի դեկտեմբերին **Շրի Լանկայում** տեղի ունեցած ցունամին ամբողջովին ավերեց մոտ 100,000 և վնասեց 44,290 տուն: Պետական հատուկ խումբը կիրառեց նորարարական սեփակա-

ԳԼՈՒԽ 3

Ինչպես իրականացնել տաս գերակա ուղղությունները՝ քաղաքները դիմակայուն դարձնելու համար



Նկարը՝ Cecilia Valdeés

Համայնքի ղեկավարը Քենյայի Նայրոբի քաղաքի Կիբերայի խոցելի բնակավայրերի վերաբնակեցման ծրագրի իրականացման ժամանակ. մասնակցային պլանավորում

«Մտածեք խորը, սկսեք փոքր գործերից: Համայնքներն են հանդիսանում պետության հիմքը»

Քաղաքապետ՝ Ալ Արքիլյանո, Սան Ֆրանցիսկո, Սերու, Ֆիլիպիններ: Այս քաղաքը 2011թ.-ի Աղետների ռիսկի նվազեցման «ՄԱԿ-Սասակավա» մրցանակի համահաղթող քաղաքն է:

Նպատակներն ու ռազմավարական պլանավորումը

Քաղաքի ռազմավարական պլանավորման գործընթացը պետք է հնարավորինս մասնակցային բնույթ կրի, որը հնարավորություն կտա քաղաքապետին և բոլոր շահագրգիռ կողմերին քննարկել, թե ինչպես լավագույնս ինտեգրել տաս գերակա ուղղությունները քաղաքի զարգացման ծրագրերում և միջոցառումներում: Եթե քաղաքը չունի զարգացման ծրագիր, ապա ժամանակն է մշակել այն: Եթե կա զարգացման ծրագիր, ապա ճիշտ ժամանակն է վերանայել այն՝ ապահովելով, որ այն ներառի աղետների ռիսկի նվազեցման բոլոր անհրաժեշտ բաղադրիչները:

Ռազմավարական պլանավորման գործընթացը հնարավորություն է տալիս տեղական լիազոր մարմիններին բացահայտել և կենտրոնանալ աղետների ռիսկի նվազեցման հիմնական առաջնահերթությունների վրա, ինչպես նաև նկարագրել, թե ինչ մարդկային, տնտեսական, տեխնոլոգիական և բնական ռեսուրսներ են հասանելի տեղական մակարդակում: Պլանավորման գործընթացում, քաղաքը կարող է գնահատել իր ուժեղ և թույլ կողմերը և հաշվի առնել այն արտաքին գործոնները, որոնց անհրաժեշտ է անդրադարձնալ կոնկրետ և գործնական արդյունքների հասնելու համար:

Պլանավորման գործընթացը ներառում է հետևյալ հիմնական փուլերը.

Հիմնական փուլեր	Քայլեր
Առաջին փուլ	<p>Կազմակերպում և տաս գերակա ուղղությունների կիրառման նախապատրաստում</p> <ol style="list-style-type: none"> Որոշել հաստատութենական շրջանակը և բարձրացնել հանրային իրազեկվածությունը Հավաքագրել բոլոր դերակատարներին և պաշտոնական հիմքերի վրա դնել մասնակցային գործընթացը Պլանավորել և իրականացնել գործընթացը
Երկրորդ փուլ	<p>Քաղաքային ռիսկի բացահայտում և գնահատում</p> <ol style="list-style-type: none"> Ավելի լավ ճանաչել քաղաքին սպառնացող ռիսկերը Իրականացնել ռիսկի գնահատում Վերլուծել տեղական միջավայրը և դերակատարներին Նախապատրաստել գնահատման հաշվետվությունը
Երրորդ փուլ	<p>Անվտանգ և դիմակայուն քաղաքի գործողությունների պլանի մշակում</p> <ol style="list-style-type: none"> Սահմանել տեսլականը, խնդիրները և հիմնական գործողությունները Սահմանել ծրագրերն ու նախագծերը Մշակել աղետների ռիսկի նվազեցման պլանը և դնել այն հաստատութենական հիմքերի վրա
Չորրորդ փուլ	<p>Պլանի իրականացում</p> <ol style="list-style-type: none"> Իրականացում և ռեսուրսների հայթայթում Ապահովել շահագրգիռ կողմերի լայն մասնակցությունը և գործընթացների առաջնորդումը
Հինգերորդ փուլ	<p>Մշտադիտարկում և հետագա վերահսկում</p> <ol style="list-style-type: none"> Ապահովել պլանի մշտադիտարկումը, վերահսկումը և գնահատումը Տարածել և խրախուսել պլանի իրականացումը

Դիմակայունության բարձրացման համար ռազմավարական պլանավորման գործընթացի առավելությունները

Պլանավորման գործընթացը քաղաքներին հնարավորություն է տալիս՝

- օգտագործել գոյություն ունեցող հնարավորություններն ու կարողություններն՝ ի նպաստ սեփական շահի, փնտրել վտանգավոր երևույթների հնարավոր հետևանքները նվազագույնին հասցնելու ուղիներ, զարգացնել ուժեղ՝ և վերացնել թույլ կողմերը,
- մշակել քաղաքի կայուն զարգացման տեսլականը՝ հաշվի առնելով աղետների ռիսկը և զարգացման գործընթացները,
- քաղաքում իրականացնել էական փոփոխություններ և բարելավումներ, զարգացնել աղետների ռիսկի նվազեցման գործընթացները,
- խրախուսել մասնակցային գործընթացների ապահովումը, հզորացնել ժողովրդավարությունը և խթանել համաձայնագրերի, համագործակցային մեխանիզմների և այլ փոխհամագործակցային մոտեցումների զարգացումը,
- մշակել և սահմանել աղետների դիմակայունության հստակ և իրատեսական նպատակների և գործողությունների առաջնահերթությունները, որտեղ ներկայացված են քաղաքի բոլոր ոլորտների շահերը,
- սահմանել ռազմավարական տեսանկյունից առաջնահերթ գործողություններ՝ ուղղված խոցելի կամ կարևորագույն նշանակության ոլորտների և խմբերի (սոցիալական, բնապահպանական, տնտեսական, քաղաքական և այլն) կարիքներին արձագանքմանը,
- հատկացնել և կառավարել ռեսուրսները՝ ըստ առկա իրականության և կարիքների,
- պլանավորել ռիսկի նվազեցման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարություն, որտեղ ներառված են զարգացման և կայունության հեռանկարները,
- հավաքագրել և գրանցել տեղական մակարդակում գոյություն ունեցող նորարարական հնարավորություններն ու գործողությունները,
- հզորացնել տեղական մակարդակում իշխանությունների կողմից առաջատարի դերի ստանձնումը և խրախուսել ինքնագնահատականի բարձրացումը քաղաքի բոլոր ոլորտներում, ըստ անհրաժեշտության, զարգացնել կարողությունները:

Պլանավորման սկզբունքները

Ավելի կարևոր է աղետների ռիսկի նվազեցման կոնկրետ միջոցառումների իրականացման մասին մտածել պլանավորման ամբողջ ընթացքում, քան սպասել պլանավորման ավարտին: Առաջնահերթությունը սահմանելիս հարկավոր է կենտրոնանալ այն գործողությունների վրա, որոնց իրականացման համար տեղական մակարդակում արդեն կան համապատասխան միջոցներ և կարողություններ և, որոնք կարող են արագ ապահովել տեսանելի արդյունքներ: Սա կքաջալերի բոլոր շահագրգիռ կողմերին և կբարձրացնի իրազեկվածությունը քաղաքում աղետների ռիսկի նվազեցման կարևորության մասին: Երբ վերոնշյալն ընդունվի հավաքական համաձայնությամբ, հավանականությունը մեծ է, որ գործողությունները կիրականացվեն և կլինեն կայուն:

Հիշեք, որ պլանի մշակումը շատ ավելի ժամանակատար գործընթաց է, քան շատերը ենթադրում են: Շտապելու դեպքում հնարավոր է կորցնել շահագրգիռ կողմերի մասնակցությունն ապահովելու և գործընթացի տերը լինելու հնարավորությունը:

Բոլոր փուլերի ընթացքում ներքոհիշյալ սկզբունքների կիրառումը ռազմավարական պլանավորման գործընթացն ավելի արդյունավետ է դարձնում.

- Խրախուսել տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ստանձնելու դիմակայունության բարձրացման նպատակով տեղական մակարդակում կարողությունների զարգացման առաջատարի դերը:

- Կիրառել մասնակցային մոտեցումներ և խրախուսել համայնքի բոլոր շահագրգիռ կողմերի և բնակիչների մասնակցությունը, այդ թվում՝ երեխաներ, ազգային փոքրամասնություններ, հաշմանդամներ և տարեց քաղաքացիներ, ինչը կնպաստի քաղաքի սոցիալական կառուցվածքի ամրապնդմանը:
- Կիրառել գենդերային հավասարության և ներգրավման սկզբունքներ:
- Ապահովել ճկունություն, թափանցիկություն և հաշվետվողականություն:
- Սահմանել հստակ պարտավորություններ, իրատեսական խնդիրներ ու գործողություններ:
- Զարգացնել կայունության սկզբունքները (տնտեսական, բնապահպանական և սոցիալական ոլորտներ) և դիմակայունությունը:
- Բարձրացնել իրազեկվածությունը և զարգացնել ծրագրի իրականացման տերը լինելու զգացողությունը:

Կարևոր փուլերն ու քայլերը

Առաջին փուլ. Կազմակերպում և տաս գերակա ուղղությունների կիրառման նախապատրաստում

- 1. Նախապատրաստում. որոշել հաստատութենական շրջանակը և բարձրացնել հանրային իրազեկվածությունը**
 - Գնահատել քաղաքապետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների քաղաքական կամքը՝ զարգացման գործընթացներում աղետների ռիսկի նվազեցումն ինտեգրելու համար:
 - Բարձրացնել հանրային իրազեկվածությունը քննարկվող խնդրի շուրջ:
 - Գործընթացը սկսելու համար տեղական մակարդակում հիմնել իրավական դաշտ: Ընդունել որոշում՝ աղետների դիմակայունության մասին քաղաքականություն որդեգրելու վերաբերյալ:
 - Քաղաքապետարանում ստեղծել տեխնիկական միավոր կամ խումբ, որը կստանձնի աշխատանքների առաջնորդումն ու միջոցառումների իրականացումը:
- 2. Հավաքագրել բոլոր դերակատարներին և պաշտոնական հիմքերի վրա դնել մասնակցային գործընթացը**
 - Բացահայտել և հավաքագրել բոլոր դերակատարներին և ստեղծել ռազմավարական փոխհամագործակցային միջավայր:
 - Ստեղծել բազմոլորտային հատուկ խումբ կամ ուժեղացնել այն՝ գործընթացի իրականացման համար:
 - Ստեղծել ոլորտային կամ թեմատիկ աշխատանքային խմբեր:
 - Որոշել կարիքները, քաղաքային ռեսուրսները, առաջնահերթությունները և սահմանել գալիք աշխատանքների ելակետային ցուցանիշները:
 - Ստեղծել համապատասխան մեխանիզմներ՝ մասնակցության ընդլայնման, վերահսկողության և տեղեկատվությունների տարածման համար:
- 3. Պլանավորել և իրականացնել գործընթացը**
 - Սահմանել կիրառվելիք մեթոդաբանությունը, անհրաժեշտ փոխհամագործակցային ձևաչափերը, միջոցներն ու կարողությունները:
 - Ստեղծել աշխատանքային պլան:
 - Զարգացնել գործընթացի իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական կարողություններ:

- Համապատասխան գերատեսչություններից ձեռք բերել տեխնիկական աջակցություն՝ գործընթացի առաջընթացն ապահովելու համար:
- Հայթայթել իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներ:
- Ակտիվացնել հաղորդակցումը՝ որոշումների և աշխատանքային պլանների հրապարակման միջոցով:

Երկրորդ փուլ. Քաղաքային ռիսկի բացահայտում և գնահատում

Տեղական ինքնակառավարման ինքնագնահատման գործիքն ու հարցաշարը (ՏԵՆ՝ Հավելված 1) կարող է օգտագործվել նախնական տեղեկությունների հավաքագրման համար: Այն կարող է նաև օգտակար լինել հինգերորդ փուլում նկարագրված մշտադիտարկման միջոցառումների իրականացման համար:

4. Ավելի լավ ճանաչել քաղաքին սպառնացող ռիսկերը

- Հավաքագրել և համակարգել աղետների ռիսկի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ազգային և տեղական մակարդակներում գոյություն ունեցող իրավական դաշտի, քաղաքային զարգացման ծրագրերի, պլանների ու ռազմավարության վերաբերյալ:
- Վերանայել գոյություն ունեցող տարածքային զարգացման պլանը և մանրամասնորեն ուսումնասիրել վերջինում տեղ գտած ծրագրերն ու նախագծերը:
- Գրանցել, թե քաղաքն ինչ մակարդակում է գտնվում տաս գերակա ուղղություններից յուրաքանչյուրի իրականացման ուղղությամբ և վերլուծել աղետների վերաբերյալ պատմական տվյալները:

5. Իրականացնել ռիսկի գնահատում

- Իրականացնել քաղաքի ընդհանուր ուսումնասիրություն կամ այստորոշում, որը կտա ելակետային գիտելիքներ՝ ռիսկերի վերլուծության համար:
- Գնահատել վտանգավոր երևույթներն ու խոցելիությունը՝ կապված քաղաքի գործունեության, ծրագրերի և առաջնահերթությունների հետ:
- Տաս գերակա ուղղություններին համապատասխան սահմանել ռազմավարական գործողությունների առաջնահերթությունները՝ նվազեցնելու ռիսկը կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում:
- Խրախուսել քննարկումներ բոլոր դերակատարների միջև՝ առաջնահերթությունների վերաբերյալ համաձայնության գալու նպատակով:
- Ստեղծել հնարավորություններ տեղական համայնքների համար՝ ռիսկի գնահատումների իրականացման կամ համայնքային խոցելի ակտիվների՝ դպրոցների, առողջապահական կենտրոնների ու հանրային հաստատությունների բացահայտման համար:

6. Վերլուծել տեղական միջավայրը և դերակատարներին

- Կատարել քաղաքի իրավիճակի ներքին և արտաքին վերլուծություն՝ բացահայտելով ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու սպառնալիքները:
- Վերլուծել աղետների ռիսկի նվազեցման հետ կապված քաղաքում գոյություն ունեցող կարողություններն ու ռեսուրսները, բացահայտել հիմնական դերակատարներին ու շահագրգիռ կողմերին:

7. Նախապատրաստել գնահատման հաշվետվություն

- Պատրաստել ուսումնասիրության հաշվետվության նախագիծը և բոլոր մասնակիցներին ներգրավել գործընթացի մեջ՝ բացահայտումների ներկայացման և հաստատման համար:
- Նախապատրաստել հաշվետվության վերջնական տարբերակը՝ ներառելով վերանայման ընթացքում ներկայացված մեկնաբանություններն ու առաջարկությունները:
- Հրապարակել գնահատման հաշվետվությունը:

Երրորդ փուլ. Անվտանգ և դիմակայուն քաղաքի գործողությունների պլանի մշակում**8. Սահմանել պլանի սկզբունքները, խնդիրները և գործողությունները**

- Մշակել աղետների ռիսկի նվազեցման գործողությունների պլանի տեսլականն ու առաքելությունը:
- Մշակել պլանի ուղղորդող սկզբունքները:
- Համաձայնեցնել աղետների ռիսկի նվազեցման պլանի ռազմավարական ուղղություններն ու խնդիրները:

9. Երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր

- Սահմանել այն ծրագրերը, որ հարկավոր է մշակել և իրականացնել համաձայն ռազմավարական պլանի:
- Ընտրել այն ծրագրերը, որոնք իրականացվելու են պլանում սահմանված կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ առաջնահերթությունների հիման վրա:

10. Աղետների ռիսկի նվազեցման պլանը դնել հաստատութենական հիմքերի վրա և կայունացնել

- Մշակել աղետների ռիսկի նվազեցման պլանի նախնական տարբերակը, հանդիպել շահագրգիռ կողմերի հետ՝ վերջիններիս հետ այն համաձայնեցնելու և նրանց դիտարկումներն ներառելու համար:
- Պատրաստել վերջնական պլանը պարզ և հասկանալի լեզվով:
- Պլանը հաստատել իրավական ընթացակարգերով՝ ապահովելով, որ այն քաղաքի համար ծառայի որպես աղետների ռիսկի նվազեցման ուղղորդիչ քաղաքականություն:
- Ինտեգրել աղետների ռիսկի նվազեցման բոլոր բաղադրիչները քաղաքի զարգացման ծրագրում:
- Հրատարակել և լայնորեն տարածել պլանը՝ ամբողջ համայնքի իրազեկումը ապահովելու համար:

Չորրորդ փուլ. Պլանի իրականացում**11. Իրականացումը և ռեսուրսների հայթայթումը**

- Մշակել պլանի իրականացման ռազմավարություն՝ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ միջոցառումների և առաջնահերթությունների համար:
- Հստակորեն համակարգել քաղաքի բոլոր գերատեսչություններն ու դերակատարներին և սահմանել համայնքի կառուցվածքը, դերերն ու պարտականությունները:
- Ստեղծել անհրաժեշտ մեխանիզմներ, կազմակերպել միջոցների և ֆինանսների հայթայթում ու կառավարում՝ պլանում ներառված ծրագրերի իրականացման համար:

12. Ապահովել շահագրգիռ կողմերի լայն մասնակցությունը և գործընթացների առաջնորդումը

- Սահմանել և հաստատել պաշտոնական և ոչ պաշտոնական հաստատութենական մեխանիզմների իրավական կարգավիճակը, որը հնարավորություն կտա բոլոր դերակատարներին գիտակցել սեփական պատասխանատվությունը և ստանձնել պլանի իրականացման գործընթացը:
- Ձևավորել գործնական հարաբերություններ և հիմնել համագործակցային մեխանիզմներ՝ ազգային, տեղական և միջազգային մակարդակներում ծրագրի իրականացման համար:
- Դասակարգել քաղաքի բոլոր ոլորտների և դերակատարների աջակցությունը աղետների ռիսկի նվազեցման ծրագրի ներքո՝ կարճաժամկետ ծրագրերի մշակման համար:

Հինգերորդ փուլ. Մշտադիտարկում և վերահսկողություն**13. Ապահովել պլանի մշտադիտարկումը, վերահսկումը և գնահատումը**

- Մշակել պլանի իրականացման մշտադիտարկման և գնահատման ռազմավարություն:
- Որոշել թե ո՞վ է պատասխանատու վերահսկման և մշտադիտարկման ապահովման համար, ինչպես նաև որոշել տեղական համայնքի և սոցիալ-տնտեսական ոլորտի դերը:
- Սահմանել պլանի նպատակների իրականացման և առաջընթացի գնահատման ցուցանիշները:
- Մշակել գնահատման և առաջընթացի մասին հաշվետվությունների պատրաստման հստակ ժամանակացույց, այդ թվում՝ նշանակել նաև նշված հանձնարարությունների կատարման պատասխանատուներ:
- Ստեղծել մեխանիզմներ և հնարավորություններ՝ խորհրդակցելու համայնքի և տեղական իշխանության ներկայացուցիչների հետ և ստանալու նրանց կարծիքը:
- Բարելավել պլանի բովանդակության տեխնիկական մասը՝ հնարավորություն տալով տեղական իշխանությանը և շահագրգիռ հաստատություններին կատարել իրենց ներդրումը:

14. Տարածել և խրախուսել պլանի իրականացումը

- Մշակել հաղորդակցման ռազմավարություն (ներքին և արտաքին)՝ խրախուսելու և տեղեկացնելու տեղական իշխանությանը, համայնքին և տարբեր դերակատարներին բացթողումների, խնդիրների և ձեռքբերումների մասին:
- Ստեղծել հաղորդակցման մեխանիզմներ, որով հնարավորություն կտրվի ղեկավարներին և համայնքներին ներկայացնել իրենց առաջարկություններն ու մեկնաբանությունները:

«Տեղական ինքնակառավարման մարմիններին պետական ռեսուրսները հեշտությամբ հասանելի չեն դառնում: Հաճախ ՏԻՄ-ը ղժվարանում են ազդեցություն ունենալ տեղական մակարդակում պետական ներդրումների մասին որոշումների կայացման վրա: Երկկողմ համաձայնությամբ դոնորներն ու ՄԱԿ-ն ուղղակիորեն աշխատում են կառավարության և ՀԿ-ների հետ, հազվադեպ՝ քաղաքների կամ համայնքների հետ: Հաճախ քաղաքները նախաձեռնում են սեփական միջոցների սպառում, սակայն մեզ անհրաժեշտ է նրանց կարծիքն ու ներգրավվածությունն ազգային որոշումների կայացման գործընթացներում: Մեր խնդիրը հանձնառության ստեղծումը չէ. գոյություն ունեցող հանձնառությունը ձնագնդի ազդեցություն կունենա: Մեզ անհրաժեշտ են գործընկերական կապեր քաղաքի մակարդակում և կառավարության հետ: Միջանկյալ հատվածում մենք պետք է աշխատենք համայնքների հետ: Մեզ անհրաժեշտ է ունենալ աղետների ռիսկի նվազեցման նորարարական համագործակցություններ պետության և մասնավոր հատվածի միջև»:

Դեվիդ Կեդման՝ Վանկուվերի փոխքաղաքապետ, Տեղական իշխանությունները հանուն կայունության ընկերության (ICLEI) նախագահ

Ինչպես ֆինանսավորել աղետների ռիսկի նվազեցման գործընթացը

Հստակ տեսլականով, առաքելությամբ և ծրագրերով հագեցած ռազմավարական պլանը հաճախ քաղաքի բյուջեից, տարածաշրջանային, ազգային կամ միջազգային աղբյուրներից միջոցներ ներգրավելու լավագույն ուղին է: Կանոնավոր ֆինանսավորում կարող է կուտակվել քաղաքի եկամուտներից, պետական բյուջեի հատկացումներից և մարզերի ոլորտային վարչություններին տրվող հատկացումներից: Աղետների առաջացման դեպքում, քաղաքներին ինչպես ազգային, այնպես էլ միջազգային աղբյուրներից կարող է հատկացվել լրացուցիչ գումար՝ արձագանքման և օգնության տրամադրման համար, իսկ ավելի ուշ՝ վերականգնման և վերակառուցման համար:

- **Լիովին օգտագործել տեղական ռեսուրսներն ու կարողությունները.** Աղետների ռիսկի նվազեցման համար ֆինանսավորում հայթայթելու առաջին աղբյուրը տեղական բյուջեն է: Շատ քաղաքապետարաններ եկամուտ են ստանում ծառայությունների վճարներից, հարկերից, այլ վճարներից, տուգանքներից և պարտատոմսերից, որոնք կազմում են տարեկան բյուջեի մաս: Քաղաքապետարանը կարող է իր գումարները ծախսել զարգացման և կենսունակության բարձրացման վրա՝ մինչև ժամանակ նվազեցնելով աղետների ռիսկը և բարձրացնելով դիմակայունությունը:
- **Աղետների ռիսկի նվազեցումն ընդհանուր պապասխանարվություն է.** Այս պատասխանատվությունն ընդհանուր է բոլոր շահագրգիռ կողմերի համար՝ սկսած տեղական և ազգային կառավարման մարմիններից մինչև մասնավոր հատված, արդյունաբերություն, ՀԿ-ներ և քաղաքացիներ: Հիմնադրամները կամ համագործակցող գործակալությունները նույնպես կարող են ֆինանսներ տրամադրել: Նշված հաստատությունների և ոլորտների միջև փոխադարձ ըմբռնումը նպաստում է այնպիսի քաղաքի ձևավորմանը, որն ավելի լավ է պատրաստված աղետների ռիսկի հարցերին անդրադառնալու համար: Նորարարական ընկերությունները և համագործակցությունը պետական և մասնավոր հատվածի և համայնքային խմբերի միջև կարող է ի հայտ գալ կոնկրետ ծրագրերի իրականացման դեպքում:
- **Այլ ռեսուրսներ.** Բարձրարժեք տեխնիկական աջակցություն, տեղեկատվություն, կրթություն և վերապատրաստման հնարավորություն կարող է տրամադրել գիտական ոլորտը, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, տարածաշրջանային կամ տեխնիկական աջակցության կազմակերպությունները: Վերոնշյալը կարող է նաև իրականացվել այլ քաղաքների հետ փոխանակման ծրագրերի միջոցով՝ քաղաքի համար շատ փոքր միջոցներով կամ ընդհանրապես առանց ծախսի:
- **Չկան ռեսուրսներ առանց ռազմավարության և հստակ ծրագրի.** Ռեսուրսներ հայթայթելու համար քաղաքը պետք է ունենա հստակ ռազմավարություն, քաղաքականություն, ծրագրեր և իրականացման մեխանիզմներ: Ռազմավարական պլանը կապահովի, որ ծրագրերը նպաստեն սահմանված նպատակների իրականացմանը և կարող են օգտագործվել նաև աղետների ռիսկի նվազեցման կոնկրետ ծրագրերին բյուջե հատկացնելու համար:
- **Հեղադեպային ֆինանսավորման հնարավորություններ.** Աղետից հետո, քաղաքներին հասնելի են դառնում ազգային կամ միջազգային օգնության ֆոնդերը, այդ թվում՝ ՀԿ-ներից, կառավարությունից կամ միջազգային կազմակերպություններից ստացվող գումարները: Ի լրումն քաղաքի սեփական միջոցների՝ որոշ երկրներում կատարում են հատուկ բյուջետային հատկացումներ՝ նախատեսված վերակառուցման աշխատանքների համար: Ոչ բոլոր տեղական ինքնակառավարման մարմիններն են տեղյակ այս տարբերակներին, այդ իսկ պատճառով, հարկավոր է նախքան աղետի ծագելն ուսումնասիրել հասանելի տարբերակները, ռեսուրսներն ու հարաբերությունները և նախօրոք ձեռք բերել համապատասխան համաձայնություններ:
- **Կլիմայի փոփոխությունը.** Այժմ հասանելի են կլիմայի փոփոխության հարմարվողականության համար նախատեսված միջազգային և ազգային ֆոնդեր: Ընդունվել են որոշ քաղաքային ծրագրեր, որոնք միավորում են ռիսկի նվազեցման միջոցառումները կլիմայի փոփոխության հարմարվողականության նպատակների հետ:

Ֆինանսավորման տարբերակների և հնարավորությունների ամփոփում

► Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի Շրջանակային կոնվենցիայի հարմարվողականության հիմնադրամը հաստատել է ֆինանսավորում էլ Սալվադորի մայրաքաղաք՝ Սան Սալվադորի համար՝ արդիականացնելու այն ենթակառուցվածքները, որոնք դիմակայուն են կլիմայի փոփոխության նկատմամբ: Հոնդուրասում մեկ այլ ծրագրով, որի բյուջեն կազմում է 5.7 միլիոն ԱՄՆ դոլար, նախատեսվում է անդրադառնալ կլիմայի փոփոխության ռիսկին ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում, բարձրացնել համակարգային դիմակայունությունը և նվազեցնել խոցելիությունը քաղաքի աղբատ բնակչության շրջանում:

www.adaptation-fund.org;
www.climatefundsupdate.org/

Տեղական մակարդակ

- Տեղական ինքնակառավարման բյուջե:
- Եկամուտներ՝ ծառայությունների վճարներից, հարկերից, այլ վճարներից, տուգանքներից և պարտատոմսերից:
- Տեղական ՀԿ-ների (համայնքահեն) կամ մասնավոր հատվածի (պետական-մասնավոր համագործակցություն) հետ միավորումներից առաջացած ռեսուրսներ:
- Վերապատրաստման և հետազոտությունների նպատակով գիտական ոլորտի և գիտական կազմակերպությունների կողմից շնորհված դրամաշնորհներ:
- Փոխադարձ համագործակցության համաձայնագրերի և հարևան քաղաքների հետ տարածքային համագործակցային մեխանիզմների հիման վրա ստեղծված ռեսուրսներ՝ ներդրումների ծախսերը համատեղելու համար:
- Տեղական միջոցների ներգրավման քարոզարշավներ:

Ազգային-տարածքային մակարդակ

- Պետբյուջեով ոլորտներին հատկացվող միջոցներ, որոնք նախատեսված են աղետների կանխման, կանխարգելման, օգնության տրամադրման, վերակառուցման, կլիմայի փոփոխության հարմարվողականության, էկոհամակարգերի պաշտպանության կամ քաղաքի և ենթակառուցվածքների արդիականացման համար:
- Պետական բյուջեից քաղաքապետարաններին հատկացվող տարեկան ֆինանսավորում:
- Տեղի ՀԿ-ների և հիմնադրամների ռեսուրսներ:
- Հետազոտական և գիտական ծրագրերի և գիտական ցանցերի ռեսուրսներ, որոնք հասանելի են նաև վաղ ազդարարման համակարգերի, վտանգավոր երևույթների մշտադիտարկման և այլ խնդիրների լուծման համար:
- Տարածաշրջանային և ազգային տարածքային համագործակցային մեխանիզմները քաղաքների միջև:

Միջազգային մակարդակ

- Մասնակցություն քաղաքային և տեղական ինքնակառավարման միավորումներում, ինչպիսիք են՝ Տեղական իշխանությունները հանուն կայունության (ICLEI), Միավորված քաղաքներ և տեղական ինքնակառավարման մարմիններ (UCLG) և Քաղաքային ցանց (CityNet) և ՄԱԱՆՄՈՒ «Դարձնենք քաղաքները դիմակայուն» քարոզարշավը՝ ստեղծելու գործընկերական կապեր և ուսուցման հնարավորություններ քաղաք-քաղաք և քույր քաղաքների միջև համագործակցության շրջանակներում:
- Գումարներ, որոնք հասանելի են ազգային կամ միջազգային երկկողմանի համաձայնությունների միջոցով: Գումարները հաճախ հասանելի են համայնքներում գործող ՀԿ-ների միջոցով, որոնք կապեր ունեն նշված կազմակերպությունների

հետ:

- Բազմակողմ համագործակցություն, հիմնականում, երկրում գործող Միավորված ազգերի կազմակերպության հիմնադրամների և ծրագրերի միջոցով (օրինակ՝ ՄԱԿ-ի Հարգացման ծրագիր, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, Համաշխարհային պարենի ծրագիր, Աղետների նվազեցման և վերականգնման գլոբալ հիմնադրամ): Բազմակողմ և երկկողմ համագործակցությունների մեծ մասը պահանջում է կառավարության համաձայնությունը:
- Վարկեր կամ պարտատոմսեր ազգային կամ տարածաշրջանային զարգացման բանկերից, կամ Համաշխարհային բանկից:
- Աղետների ռիսկի նվազեցման ոլորտում ընդգրկված տարածաշրջանային կազմակերպություններ:
- Կլիմայի փոփոխության հարմարվողականության հիմնադրամներ:

Օրինակ

Սան Ֆրանցիսկո, Սեբու. Տեղական առաջնորդումը կարևոր է- «Մտածեք խորը, սկսեք փոքր գործերից»

Ֆիլիպինների Սեբու նահանգի Սան Ֆրանցիսկո քաղաքն ունի 45,000 բնակիչ: Քաղաքը բաժանված է 15 բարանգայի (Ֆիլիպինների ամենափոքր վարչական տարածքը) և 100 փուրկի (բարանգայի ավելի փոքր ենթատարածք, հատկապես գյուղական վայրերում): 2004թ. Սան Ֆրանցիսկոն հզորացրեց փուրկների համակարգը՝ որպես համայնքահեն կառավարման հիմք և համայնքին հնարավորություն տվեց ներգրավվել աղետների ռիսկի նվազեցման գործունեության մեջ: «Մտածեք խորը, սկսեք փոքր գործերից» նախաձեռնությունը սկսվեց ընդամենը մի քանի շահագրգիռ փուրկներից և շատ արագ արդյունքներ տվեց աղբահանման կառավարման և կենսական պայմանների բարելավման ոլորտներում: Յոթ տարվա ընթացքում այս համայնքային խմբերը պատասխանատվություն են կրել աշխատանքների մեծ մասի համար: Օրինակ, որպես տնտեսական զարգացման (այդ թվում՝ զբոսաշրջության) նախապայման, իրականացվել են ճանապարհաշինության մեծածավալ աշխատանքներ: Այսօր ճանապարհների և ջրահեռացման համակարգերի շահագործման պատասխանատվությունը կրում են փուրկներն ու անհատ սեփականատերերը: Սան Ֆրանցիսկոն ոգեշնչել է Ֆիլիպինների և ասիական երկրների մի շարք այլ քաղաքապետերի, որոնք քաղաքների միջև ուսումնական վարժանքների նպատակով այցելությունների ժամանակ տեսել են, թե ինչպես կարելի է կիրառել փուրկների օրինակը՝ բարելավելու աղետների ռիսկի նվազեցման գործընթացներն իրենց քաղաքներում: Այս օրինակի հաջողության գրավականը քաղաքի բարձրաստիճան լիազոր մարմինների հանձնառությունն է, որոնց հետ համայնքների կողմից ընտրված ներկայացուցիչներն ուղիղ կապի մեջ են (ներառյալ քաղաքապետը) և ներկայացնում են ամսեկան հաշվետվություններ:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք <http://preventionweb.net/go/16759> կայքէջը: Սան Ֆրանցիսկոյի Քաղաքային աղետների ռիսկի նվազեցման և կառավարման հնգամյա պլանը (ՄԱԱՆՄՌ 2011-2015) հասանելի է <http://tinyurl.com/cf49nb6> կայքէջում:

Ամման, Մակատի և Մումբայ. Աղետների ռիսկի նվազեցման գլխավոր պլաններ «Երկրաշարժեր և մեգաքաղաքներ» նախաձեռնությունը

Երկրաշարժավտանգ որոշ մեգաքաղաքներ (Հորդանանի Ամմանը, Ֆիլիպինների Մակատին և Հնդկաստանի Մումբայը) «Երկրաշարժեր և մեգաքաղաքներ» նախաձեռնության աջակցությամբ մշակել են Աղետների ռիսկի կառավարման գլխավոր պլաններ: Վերջիններս վերլուծական ուղղորդիչ օրինակ են հանդիսանում տեղական ինքնակառավարման մարմինների, հատկապես, մեգա-

քաղաքները և կառավարությունների համար և աջակցում են հասկանալու բնական վտանգավոր երևույթների նկատմամբ իրենց խոցելիության աստիճանը, վերլուծելու հնարավոր ֆիզիկական և սոցիալ-տնտեսական ազդեցությունները և մշակելու իրենց միջավայրին համահունչ ռիսկի նվազեցման մոտեցում՝ հաշվի առնելով իրենց առաջնահերթություններն ու իրականացման գործընթացները:

Ունենալով մոտ 14 միլիոն բնակչություն՝ **Մումբայը** Հնդկաստանի ամենամեծ քաղաքներից է և երկրի ֆինանսական մայրաքաղաքը: Քաղաքին սպառնում են տարաբնույթ ծագման ռիսկեր՝ ցիկլոններ, ափամերձ էրոզիա, սողանքներ, երկրաշարժեր և համաճարակներ: Միևնույն ժամանակ, քաղաքի բնակչության 6.5 միլիոնն ապրում է կիսաքանդ տներում: Վերջիններիս դիմակայունությունը բարձրացնելու համար տասնամյակներ կպահանջվի: Մեծ Մումբայի քաղաքային ընկերության ղեկավարությամբ, քաղաքը ներգրավել է 100-ից ավելի հաստատություններ և կազմակերպություններ՝ հասկանալու քաղաքին սպառնացող ռիսկերը և գտնելու այնպիսի լուծումներ, որոնք կընդունվեն առաջնորդների և իրենց ընտրողների լայն գանգվածների կողմից: Մումբայն աշխատեց «Երկրաշարժեր և մեգաքաղաքներ» նախաձեռնության հետ՝ կենտրոնանալով ռիսկի նվազեցման խնդիրների վրա և նախապատրաստեց նախնական ուսումնասիրություն և ուղի հարթեց քաղաքի դիմակայունության բարելավման համար: Մշակվեց նոր՝ «Աղետների ռիսկի կառավարման գլխավոր պլան», որն անդրադարձավ աղետների ռիսկի կառավարման այնպիսի ոլորտների, ինչպիսիք են ջրամատակարարման և սանհանգույցների համակարգերի դիմակայունությունը, ռիսկի բաղադրիչների ինտեգրումը հողօգտագործման պլանավորման մեջ, շինարարական նորմերը և չափանիշները, կիսաքանդ ապաստարաններն ու բնակարանաշինությունը: Գլխավոր պլանի մշակման գործընթացում ներգրավելով դերակատարների լայն շրջանակ՝ շահագրգիռ կողմերն ավելի լավ են պատկերացում իրենց կապը Մումբային սպառնացող տարբեր ռիսկերի հետ և իրենց դերը քաղաքի Աղետների ռիսկի կառավարման օրակարգում: Մասնակցային գործընթացը նաև օգնում է կապելու և համապատասխանեցնելու ԱՌԿ գործընթացը ազգային, պետական և այլ հանրային ու մասնավոր հաստատությունների կողմից իրականացվող համապատասխան գործընթացների հետ, հատկապես այն գործընկերների հետ, որոնք մատուցում են կարևոր ծառայություններ՝ (կոմունալ, առողջապահական, կրթական, հանրային անվտանգություն և այլն) ապահովելու պատշաճ հաղորդակցում աղետների կառավարման ոլորտում:

Աքաբայի (Հորդանան) տնտեսական հատուկ տարածքային լիազոր մարմնի համար Աղետների ռիսկի նվազեցման կառավարման բաժին հիմնելու նպատակով իրականացվել է նման մասնակցային ուսումնասիրություն՝ ներառելով պլանը, բյուջեն, սահմանված գործառույթները, մարդկային ռեսուրսների պահանջները և տեղեկատվության հոսքը տարբեր հաստատությունների միջև: Այն հիմնված է այլ քաղաքների (Կիտո, Էկվադոր, Բոգոտա, Կոլումբիա և Կատմանդու, Նեպալ) գործառույթային և հիմնական գործողությունների առումով հաջողված օրինակների վրա:

Տես հաշվեկրկությունները իրավական և հաստատությունական դաշտի վերաբերյալ և Մեծ Մումբայի ձեռնարկը Հավելված 4-ի Գերակա ուղղություն 1-ում ներկայացված կայքէջերի միջոցով:




Մենք ձեռնարկել ենք աղետների կառավարման և 6.5 միլիոն աղքատ բնակչության անվտանգության ապահովման հեռանկարային մոտեցում: Մեր նպատակը անվտանգ ապրելակերպն է:

Շրադա Ս. Ջադավ,
Հնդկաստանի Մումբայ քաղաքի նախկին քաղաքապետ
Աղետների ռիսկի նվազեցման գլոբալ պլատֆորմ, Ժնև, 2011թ. մայիս

► Աշխատենք իրագործել աղետների ռիսկի կառավարման միջազգային ISO 31000:2009 չափորոշիչը

ISO 31000:2009 չափորոշիչի շրջանակային ծրագիրը սահմանում է ռիսկի կառավարման սկզբունքներ, համապատասխան դաշտ և գործընթաց, որոնք կիրառելի են հանրային կամ մասնավոր հատվածի ցանկացած տեսակի կազմակերպության համար: Այն չի պարտադրում մեկ մոտեցում բոլորի համար, այլ ընդգծում է այն փաստը, որ ռիսկի կառավարումը պետք է համապատասխանեցվի կրնկրետ կազմակերպության հատուկ կարիքներին և կառուցվածքին: **Ավելին տես www.iso.org կայքէջում (փնտրել ISO 31000):**

Նկար 5. ISO 31000 չափանիշի ամփոփ նկարագիրը



ISO 31000 չափանիշի նկարագրություն, ©ISO 2009 – Բոլոր իրավունքները պաշտպանված են

Աղբյուրը՝ Հանրային ռիսկի կառավարման հաշվետվություն՝ www.alarm-uk.org/pdf/Marsh%20Report_ISO31000.pdf

«Դարձնենք քաղաքները դիմակայուն. Իմ քաղաքը պատրաստվում է» գլոբալ քարոզարշավի գործընկերները

Բազմաթիվ միջազգային, տարածաշրջանային, ազգային և մասնավոր հատվածի գործընկերներ աջակցում են «Դարձնենք քաղաքները դիմակայուն» գլոբալ քարոզարշավի միջոցառումների իրականացմանն ու համայնքային իշխանություններին: Նրանց նպատակն է բարելավել յուրաքանչյուր երկրի կարողությունը՝ քաղաքային մակարդակում աղետների ռիսկի նվազեցման իրականացման համար: Ամենաակտիվների շարքում են այնպիսի քաղաքային ցանցեր, ինչպիսիք են՝ Միավորված քաղաքներ և տեղական ինքնակառավարման մարմիններ շարժումը (UCLG), Տեղական իշխանությունները հանուն կայունության ընկերությունը (ICLEI), քաղաքային ցանցը (CityNet) ու «Երկրաշարժեր և մեգաքաղաքներ» նախաձեռնությունը (EM), միջազգային կազմակերպությունները, այդ թվում՝ Եվրոպական հանձնաժողովը (ECHO), Համաշխարհային բանկի աղետների նվազեցման և վերականգնման գլոբալ հիմնադրամը (GFDRR), ՄԱԿ-ի գործակալություններն ու ծրագրերը, որտեղ UNHABITAT-ը առաջնորդի դերում է, ՀԿ-ները և նրանց ցանցերը (հատկապես չինական Աշխարհի քաղաքների գիտական զարգացման ընկերությունը - WCSDA), Աղետների նվազեցման քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գլոբալ ցանցը (Global Network of Civil Society Organisations for Disaster Reduction), PLAN International ընկերությունը, GROOTS International ընկերությունը (Huairou հանձնաժողովի հետ), ակադեմիական և մասնավոր հատվածի ընկերությունները՝ ՄԱԱՆՄՌ (UNISDR) մասնավոր հատվածի խորհրդատվական խմբի միջոցով, ազգային ընկերությունները, տեղական լիազոր մարմինները և աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմները:

Այս ձեռնարկի մշակման գործընթացին աջակցություն ցուցաբերած հիմնական գործընկերներն են.



United Nations
International Strategy for Disaster Reduction

ՄԱԿ-ի Աղետների նվազեցման միջազգային ռազմավարություն (UNISDR)

www.unisdr.org

Միավորված ազգերի Աղետների նվազեցման միջազգային ռազմավարությունը (ՄԱԱՆՄՌ) հանդիսանում է աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների ՄԱԿ-ի համակարգողը և առաջնորդում է մի հզոր ցանց, որն իր մեջ ընդգրկում է ՄԱԿ-ի անդամ պետությունները, միջկառավարական և հասարակական կազմակերպություններ, ֆինանսական հաստատություններ, մասնավոր հատվածը, գիտական և տեխնիկական մարմիններ և քաղաքացիական հասարակությունը: ՄԱԱՆՄՌ-ն առաջնորդում է աղետների ռիսկի նվազեցման առավելությունների մասին համընդհանուր իրազեկվածության բարձրացման և վտանգավոր երևույթների նկատմամբ խոցելիության նվազեցման ներկայիս քարոզարշավը: Որպես 2005-2015 թվականների Հյուսիսի «Ազգերի և համայնքների» աղետներին դիմակայելու ունակությունների զարգացման գործողությունների ծրագրի» մի մաս, մինչև 2011թ.-ի վերջը «Դարձնենք քաղաքները դիմակայուն» քարոզարշավը ներգրավել է ավելի քան 1,000 քաղաք և տեղական իշխանություններ, որոնք ստանձնել են իրենց քաղաքներն ավելի անվտանգ և դիմակայուն դարձնելու գործունեությունը: ՄԱԱՆՄՌ-ն այս ծրագրի ուղղորդիչ ուժն է: Խրախուսելով փոխկապակցված կարևորագույն այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են՝ կլիմայի փոփոխություն-

նը, կրթությունն ու գենդերը, ներգրավումը ռիսկի նվազեցման նախաձեռնությունների մեջ, ՄԱԱ-ՆՄՌ-ն պատրաստում է Գլոբալ գնահատման երկամյա հաշվետվություն աղետների ռիսկի նվազեցման վերաբերյալ և մարդկությանը սպառնացող բնական վտանգավոր երևույթների վերլուծությամբ:



Աղետների նվազեցման և վերականգնման գլոբալ հիմնադրամ

www.gfdrr.org

Հիմնվելով 2006թ.-ին Համաշխարհային բանկի Աղետների նվազեցման և վերականգնման գլոբալ հիմնադրամը հանդիսանում է 38 երկրի և յոթ միջազգային կազմակերպության գործընկերություն, որի նպատակն է աջակցել զարգացող երկրներին՝ նվազեցնելու բնական վտանգավոր երևույթներից խոցելիությունը և հարմարվել կլիմայի փոփոխությանը երեք հիմնական ուղղությամբ.

- ա) գլոբալ և տարածաշրջանային գործընկերություն,
- բ) զարգացման ծրագրերում աղետների ռիսկի նվազեցման ինտեգրում,
- գ) աղետներից արագ վերականգնման համար պահեստային ֆինանսավորման հիմնադրամների ստեղծում:

Գործընկերության առաքելությունն է աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ներառումը երկրի զարգացման ռազմավարություններում՝ աջակցելով երկրի կողմից առաջնորդվող և կառավարվող Հյուսիսի գործողությունների ծրագրի իրականացմանը:



ICLEI – Տեղական իշխանությունները հանուն կայունության

www.iclei.org

ICLEI-ն ավելի քան 1.200 քաղաքների, ինչպես նաև կայուն զարգացման հանձնառությամբ ազգային, մարզային և համայնքային կառավարման կազմակերպությունների միջազգային ընկերություն է: ICLEI-ն կատարում է դրական փոփոխություններ համաշխարհային մակարդակում՝ տեղական կայունության ապահովմանն ուղղված ծրագրերի և քարոզարշավների միջոցով: Այն նաև ռեսուրս կենտրոն է, որը տրամադրում է տեղեկություններ, գործիքներ, վերապատրաստման դասընթացներ և խորհրդատվական ծառայություններ: ICLEI-ն ծառայում է որպես Կլիմայի փոփոխության քաղաքապետների համաշխարհային խորհրդի քարտուղարություն (Secretariat of WMCCC), որը սկիզբ դրեց Քաղաքապետների ադապտացման ֆորումին, որպես քաղաքային դիմակայունության վերաբերյալ տեղեկատվությունների փոխանակման և քաղաքականության քննարկման տարեկան պլատֆորմ: ICLEI-ն WMCCC-ի և Բոնն քաղաքի հետ միասին նախաձեռնեց քաղաքների և կլիմայի փոփոխության հարմարվողականության վերաբերյալ «Դիմակայուն քաղաքներ» տարեկան համաշխարհային համաժողովների կազմակերպումը: Երրորդ գլոբալ ֆորումը «Քաղաքների դիմակայունության» թեմայով տեղի ունեցավ 2012 թվականին: Ի լրումն ցածր ածխածնով և կլիմայի փոփոխության նկատմամբ չեզոք քաղաքների ու կանաչ ենթակառուցվածքների զարգացմանը, ICLEI-ի 2010-2015թթ. ռազմավարական ծրագրի նպատակներից է «Դիմակայուն համայնքների» ստեղծումը:



United Cities and Local Governments
Cités et Gouvernements Locaux Unis
Ciudades y Gobiernos Locales Unidos

Միավորված քաղաքներ և տեղական իշխանություններ (UCLG) www.cities-localgovernments.org

UCLG-ն, տեղական ինքնակառավարման և մարզային կառավարությունների աշխարհի ամենամեծ կազմակերպությունն է, որն աշխատում է 140 երկրում՝ ներկայացնելով տեղական և մարզային իշխանությունների շահերն անկախ համայնքների մեծությունից և խրախուսելով ժողովրդավարական կառավարման զարգացումը և նրա արժեքները, նպատակներն ու շահերը տեղական իշխանությունների և ընդլայնված միջազգային համայնքի հետ համագործակցության միջոցով: Դիմակայունության և աղետների ռիսկի նվազեցման ոլորտում UCLG-ն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում իրազեկման քարոզարշավներում և տեղեկատվության գործընթացներում՝ աջակցելով իր անդամներին աղետների ռիսկի նվազեցումը ներդնել տեղական և մարզային քաղաքական օրակարգում: UCLG-ն ապահովում է աղետների ռիսկի նվազեցման ոլորտում ազգային կառույցների համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ տեղական մակարդակում աղետների ռիսկի նվազեցման գործառույթների և ռեսուրսների սահմանման ուղղությամբ, ինչպես նաև ապահովում է ՄԱԿ-ի և միջազգային այլ հիմնադրամների հասանելիությունը տեղական լիազոր մարմիններին:



Քաղաքային ցանց (CityNet) www.citynet-ap.org

CityNet-ը ասիական և խաղաղօվկիանոսյան քաղաքային շահագրգիռ կողմերի տարածաշրջանային ցանց է, որն իր մեջ ներառում է նաև տեղական իշխանությունները, զարգացման լիազոր մարմինները, ՀԿ-ները, համայնքահեն կազմակերպությունները, հետազոտական ու վերապատրաստման հաստատությունները և մասնավոր կազմակերպությունները, որոնց նպատակն է աջակցել տեղական իշխանություններին բարելավելու բնակավայրերի կայունությունը: Այն աջակցում է քաղաքներին և իշխանություններին՝ քաղաքացիներին մատուցելու ավելի արդյունավետ ծառայություններ՝ տեղական մակարդակում կարողությունների զարգացման հանձնառությամբ:



«Երկրաշարժեր և մեգաքաղաքներ» նախաձեռնությունը (EMI) www.emi-megacities.org

«Երկրաշարժեր և մեգաքաղաքներ» նախաձեռնությունը (ԵՄՆ) միջազգային, շահույթ չհետապնդող գիտական կազմակերպություն է՝ նվիրված աղետների ռիսկի նվազեցմանը մեգաքաղաքներում և հիմնական մայրաքաղաքներում: ԵՄՆ մանդատն է հզորացնել կարողությունները զարգացող քաղաքներում, հնարավորություն ստեղծելով ձեռք բերել և կիրառել գիտական գիտելիքներ ինչպես քաղաքականության մշակման, այնպես էլ գործնական ոլորտներում՝ զարգացնելով երկրաշարժերի նկատմամբ քաղաքային պատրաստվածությունը և խոցելիության նվազեցումը: ԵՄՆ-ն հզոր է ամբողջ աշխարհում գործող իր գործընկեր քաղաքների, հետազոտական և գիտական հաստատությունների, մասնագիտական և տեղական կառավարման կազմակերպությունների ցանցի շնորհիվ: Իր գործընկերների հետ համագործակցության շնորհիվ, ԵՄՆ-ն աղետների ռիսկի նվազեցման ոլորտում ձեռք է բերել վերլուծական, ռազմավարական պլանավորման և խնդիրների լուծման կարողություններ, այդ թվում՝ մշակել է Աղետների ռիսկի կառավարման գլխավոր պլանը՝ մի մեխանիզմ, որն ուղղորդում է տեղական լիազոր մարմիններին և գործընկեր հաստատություններին՝ մասնակցային պլանավորման միջոցով աղետների ռիսկի նվազեցումը կառավարման գործընթացներում և գործառույթներում ներդնելու համար:



Միավորված ազգերի բնակավայրերի ծրագիր (UNHABITAT) www.unhabitat.org

Միավորված ազգերի բնակավայրերի ծրագիրը (UNHABITAT) կայուն քաղաքաշինական զարգացմանն ուղղված ՄԱԿ-ի գործակալություն է: Ծրագրի մանդատն է զարգացնել սոցիալապես և բնապահպանական առումով կայուն քաղաքներ՝ նպատակ ունենալով ապահովել պատշաճ կացարաններ բոլորի համար: Միավորված ազգերի բնակավայրերի ծրագրի Աղետների կառավարման ծրագիրը գործակալության՝ պատերազմից կամ բնական աղետից տուժած երկրներում կառավարություններին և տեղական ինքնակառավարման մարմիններին աջակցություն ցուցաբերող մարմինն է: Այն նաև տրամադրում է տեխնիկական աջակցություն՝ կանխելու բնական վտանգավոր երևույթներից առաջացող հնարավոր ճգնաժամերը: Աշխատելով իր գործընկերների հետ, որոնց շարքում են ՄԱԱՆՄՌ-ն, Կարմիր խաչի և կարմիր մահիկի միջազգային շարժումը և այլն, Միավորված ազգերի բնակավայրերի ծրագիրը համագործակցում է կառավարությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի հետ՝ նպատակ ունենալով ապահովել քաղաքների դիմակայունությունը, արդյունավետ նախագծումը և նվազեցնել դրանց ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

Հապավումների ցանկ

ADPC	Ադետների պատրաստվածության ասիական կենտրոն
AECOM	Ճարտարագիտական, խորհրդատվական, օպերատիվ կառավարման ընկերություն
ASEAN	Հարավարևելյան ասիական ազգերի ընկերություն
ASEZA	Հատուկ տնտեսական գոտու կառավարում (Աքաբա, Հորդանան)
BCA	Ծախս-արդյունք վերլուծություն
CADRI	Ադետների ռիսկի նախաձեռնության կարողություն (ՄԱՋԾ, ՄԱԱՆՄՌ- և ՄԳՀԳ միջգերատեսչական նախաձեռնություն)
CORILA	Consorzio Ricerche Laguna (Վենետիկ, Իտալիա)
CRED	Ադետների համաճարակաբանության հետազոտման կենտրոն
CRF	Ադետներից տուժածների օգնության ֆոնդ
DRMMP	Ադետների ռիսկի նվազեցման գլխավոր պլան
DRM	Ադետների ռիսկի կառավարում
DRR	Ադետների ռիսկի նվազեցում
ECHO	Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության գրասենյակ
EM-DAT	Ադետների միջազգային տվյալների շտեմարան,
EMI	Երկրաշարժերը և մեգաքաղաքները նախաձեռնություն
EOC	Արտակարգ իրավիճակների օպերատիվ կենտրոն
FAO	Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն
FEMA	Արտակարգ իրավիճակների կառավարման ֆեդերալ գործակալություն (ԱՄՆ)
GAR	Ադետների ռիսկի նվազեցման գլոբալ գնահատման հաշվետվություն (ՄԱԱՆՄՌ)
GFDRR	Ադետների նվազեցման և վերականգնման գլոբալ հիմնադրամ
GIS	Աշխարհագրական տեղեկատվական համակարգ
GNDR	Ադետների նվազեցման քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գլոբալ ցանց
HFA	Հյուսիսի գործողությունների ծրագիր
ICLEI	Տեղական իշխանությունները հանուն կայունության
IID	Միջազգային զարգացման ինստիտուտ (Ադելաիդա, Ավստրալիա)
ILO	Աշխատանքի միջազգային կազմակերպություն

Ինչպես իրականացնել տաս գերակա ուղղությունները՝
քաղաքները դիմակայուն դարձնելու համար

INEE	Արտակարգ իրավիճակներում կրթության անցկացման միջգերատեսչական ցանց
INSARAG	Որոնողական և փրկարարական միջազգային խորհրդատվական խումբ
IPCC	Կլիմայի փոփոխության միջկառավարական խորհուրդ
IRP	Վերականգնման միջազգային պլանֆորմ
LG-NET	Տեղական ինքնակառավարման մարմինների ցանց (Հնդկաստան)
LG-SAT	Տեղական ինքնակառավարման մարմինների ինքնագնահատման գործիք (տես Հավելված1)
MCGM	Մեծ Մումբայի քաղաքային ընկերություն
NEHRP	Երկրաշարժի վտանգների նվազեցման ազգային ծրագիր (ԱՄՆ)
NGO	Հասարակական կազմակերպություն
OECD	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
PAHO	Համաամերիկյան առողջապահական կազմակերպություն, ԱՀԿ տարածքային գրասենյակ
SES	Ճգնաժամային պետական ծառայություն (Վիկտորիա, Ավստրալիա)
SMART	Հեղեղումների կառավարման ճանապարհային թունել (Կուալա Լումպուր, Մալազիա)
SMEC	Ձյունածածկ լեռների գնահատման կենտրոն (արհեստավարժ ծառայությունների մատուցման ընկերություն, Ավստրալիա)
UCLG	Միավորված քաղաքներ և տեղական իշխանություններ
UNDAC	Միավորված ազգերի աղետների գնահատում և համակարգում
UNDP	Միավորված ազգերի զարգացման ծրագիր
UNESCAP	Միավորված ազգերի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հարցերի հանձնաժողով
UNESCO	Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն
UNICEF	Միավորված ազգերի մանկական հիմնադրամ
UNISDR	Միավորված ազգերի աղետների նվազեցման միջազգային ռազմավարություն
WB	Համաշխարհային բանկ
WCSDA	Աշխարհի քաղաքների գիտական զարգացման ընկերություն (Չինաստան)
WFP	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

Հավելվածներ

Հավելված 1. Աղետների դիմակայման տեղական ինքնակառավարման մարմինների ինքնագնահատման գործիք	82
Հավելված 2. Աղետների ռիսկի նվազեցման տերմինաբանություն	91
Հավելված 3. Աղետների ռիսկի սպառնալիքների միտումներ և մեջբերումներ	92
Հավելված 4. Գործիքներ և ռեսուրսներ	96

Հավելված 1. Աղետների դիմակայման տեղական ինքնակառավարման մարմինների ինքնագնահատման գործիք

Ինչո՞ւ է հարկավոր կիրառել տեղական ինքնակառավարման մարմինների ինքնագնահատման գործիքը

Տեղական ինքնակառավարման մարմինների ինքնագնահատման գործիքի կիրառումը կօգնի սահմանել ելակետային տվյալները, բացահայտել բացերը և ունենալ համեմատելի տվյալներ տեղական ինքնակառավարման մարմինների, ամբողջ պետության և համընդհանուր մակարդակներում՝ գնահատելու ժամանակի ընթացքում արձանագրած ձեռքբերումները: Օգտագործելով այս համընդհանուր կիրառման գործիքը՝ քաղաքները և տեղական ինքնակառավարման մարմինները կառավարությանը դիմելիս կարող են հիմնավորել իրենց առաջնահերթությունները և բյուջետային հատկացումները:

Տեղական ինքնակառավարման մարմինների ինքնագնահատման գործիքի հիմնական նպատակն է՝

- աջակցել տեղական ինքնակառավարման մարմիններին համագործակցել տարբեր շահագրգիռ կողմերի հետ՝ աղետների ռիսկի նվազեցման ոլորտում գոյություն ունեցող բացերն ու դժվարությունները բացահայտելու և հասկանալու համար,
- սահմանել ելակետ և պատրաստել առաջընթացի վերաբերյալ հաշվետվություններ այն քաղաքների և քաղաքապետարանների համար, որոնք հանձն են առել «Դարձնենք քաղաքները դիմակայուն» քարոզարշավի և Տաս գերակա ուղղությունների իրականացումը,
- լրացնել Հյոգոյի գործողությունների ծրագրի մշտադիտարկման համակարգի միջոցով հավաքագրված տեղեկությունները՝ տեղական մակարդակի տվյալների տրամադրմամբ: Քաղաքները կարող են արդյունքները փոխանակել ՀԳԾ ազգային համակարգողի հետ՝ որպես ազգային հաշվետվողականության գործընթացի մի մաս:

Ո՞վ է իրականացնում ուսումնասիրության գործընթացը

Արդյունավետության ապահովման համար, ինքնագնահատումը հարկավոր է իրականացնել որպես **բազմոլորտ** գործընթաց, որը կառաջնորդեն տեղական ինքնակառավարման մարմինները: Հիմնական դերակատարների շարքում են տեղական ինքնակառավարման մարմինները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, գիտական ոլորտը, գործարար համայնքը և համայնքահեն կազմակերպությունները, որոնց, ըստ անհրաժեշտության, աջակցում են ազգային գերատեսչությունները: Քաղաքացիական հասարակության և համայնքահեն կազմակերպությունների ներգրավումը կարևորագույն դեր է խաղում գործընթացի հաջողության ապահովման համար:

Ինչպե՞ս իրականացնել վերանայման գործընթացը

Տեղական միջավայրին հատուկ ցուցանիշներ. Ինքնագնահատման արդյունքները կտեղադրվեն էլեկտրոնային առցանց համակարգում, որը կարող է նաև օգտագործվել փաստաթղթային տարբերակով, եթե այդպես նախընտրում են տեղական ինքնակառավարման մարմինները: Առցանց համակարգը ձևաչափը մշակվել է ՄԱՆՄՌ կողմից մի շարք գործընկերների հետ խորհրդակցության արդյունքում, այդ թվում՝ Տեղական իշխանությունները հանուն կայունության ընկերության (ICLEI), տեղական իշխանության ներկայացուցիչների և Աղետների նվազեցման քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գլոբալ ցանցի ներկայացուցիչների հետ:

Առցանց տարբերակը ներառում է տեղական համատեքստին համապատասխան ցուցանիշներ,

որոնք ներկայացված են որպես «հիմնական հարցեր» և որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 1-ից 5 սանդղակով (Հիմնական հարցերը ներկայացված են ստորև բերված Աղյուսակ Ա.1-ում, իսկ գնահատման սանդղակը՝ Աղյուսակ Ա.2-ում): Հիմնական հարցերը կապված են ՀԳԾ գերակա ուղղությունների և հիմնական ցուցանիշների (Տես՝ Աղյուսակ Ա.3), ինչպես նաև «Դարձնենք քաղաքները դիմակայուն» քարոզարշավի տաս գերակա ուղղությունների հետ: Ինքնագնահատումը կաջակցի ՀԳԾ-ի ուսումնասիրության գործընթացին և կլրացնի «Դարձնենք քաղաքները դիմակայուն» քարոզարշավի մասնակից տեղական ինքնակառավարման մարմինների առցանց պրոֆիլները: Ինքնագնահատման գործընթացն առաջարկում ենք համատեղել ՀԳԾ ազգային մշտադիտարկման գործընթացի հետ, ինչպես նաև իրականացնել այն երկու տարին մեկ անգամ:

Տեղական ինքնակառավարման մարմինների ինքնագնահատման առցանց գործիքը

ՀԳԾ առցանց մշտադիտարկման համակարգը տեղակայված է հետևյալ կայքէջում՝ www.prevention-web.net/english/hyogo/hfa-monitoring: Այն հասանելի է նաև քարոզարշավի կայքէջի միջոցով՝ www.unisdr.org/campaign: Առցանց համակարգ մուտք գործելու համար հարկավոր է գրանցվել, որն իրականացվում է ՄԱԱՆՄՌ տարածաշրջանային գրասենյակների և աղետների ռիսկի նվազեցման համապատասխան ազգային համակարգողի կողմից: Յուրաքանչյուր տեղական ինքնակառավարման մարմնի կտրամադրվի չկրկնվող օգտատիրոջ անվանում և գաղտնաբառ՝ համակարգ մուտք գործելու համար: Տեղական ինքնակառավարման մարմինների ինքնագնահատման գործիքի կիրառման մանրամասն ուղեցույցները նույնպես հասանելի են առցանց:

Աղյուսակ Ա.1. Գնահատման սանդղակ. Առաջընթացի մակարդակը

Ինքնագնահատման կարգավիճակը և առաջընթացի մակարդակը պետք է գնահատել 1-5 սանդղակով, որը կօգնի գնահատել առաջընթացը ժամանակի ընթացքում: Լրացուցիչ ուղեցույցները հասանելի են առցանց տարբերակում:

ԱՌԱՋՆԹԱՅԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ	ԱՌԱՋՆԹԱՅԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՐՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐԿԱՆԻՇԻ ՀԱՄԱՐ (ավելացրեք նկատառումներ համատեքստի և խնդիրների վերաբերյալ)
5	Համապարփակ առաջընթաց է ձեռք բերվել, առկա է հանձնառություն և համապատասխան կարողություններ՝ բոլոր մակարդակներում գործունեությունը կայուն իրականացնելու համար:
4	Էական առաջընթաց է ձեռք բերվել, սակայն գոյություն ունեն որոշ թերություններ հանձնառության, ֆինանսական միջոցների կամ օպերատիվ կարողությունների առումով:
3	Առկա է որոշ հաստատությունական հանձնառություն և ԱՌՆ իրականացման կարողություններ, սակայն առաջընթացը համապարփակ կամ էական չէ:
2	Ձեռք են բերվել նվաճումներ, սակայն անավարտ: Թեև բարելավումները պլանավորված են, հանձնառությունն ու կարողությունները սահմանափակ են:
1	Նվաճումները քիչ են, իրավիճակի բարելավման պլանավորման կամ առաջընթացի նշանները՝ մի քանիսը:

Աղյուսակ Ա.2. Ինքնագնահատման հիմնական հարցերը՝ հիմնված «Դարձնենք քաղաքները դիմակայուն» քարտզարշավի Տաս գերակա ուղղությունների վրա

«Տաս գերակա ուղղությունները» սյունակում ներառված են ՀԳԾ գերակա ուղղությունների թվերը, որոնց համապատասխանում է յուրաքանչյուր գերակա ուղղությունը: Այս աղյուսակի յուրաքանչյուր «Հիմնական հարցին» հաջորդող թիվը [օրինակ՝ 1.1] ցույց է տալիս Աղյուսակ Ա.3-ում ներկայացված համապատասխան ՀԳԾ հիմնական ցուցանիշը: «Հիմնական հարցերի» և «Հիմնական ցուցանիշների» համապատասխանության ամբողջ համակարգն առկա է առցանց՝ լրացուցիչ ուղեցույցներով:

ՏԱՍԸ ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ- ՆԵՐԸ	ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԸ [Յուրաքանչյուր հարցին հետևող թվերը ցույց են տալիս ՀԳԾ հիմնական ցուցանիշները]
<p>ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 1.</p> <p>Հիմնել կազմակերպչական և համակարգման մեխանիզմներ՝ բոլորի դերերն ու պարտականությունները հստակեցնելու համար</p> <p>[ՀԳԾ գերակա ուղղություն 1]</p>	<ol style="list-style-type: none"> 1. Որքանով են տեղական կազմակերպությունները (այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինները) կարողունակ (գիտելիք, փորձ, պաշտոնական մանդատ)՝ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության իրականացման համար: [1.1] 2. Ինչ մակարդակի համագործակցություն գոյություն ունի համայնքների, մասնավոր հատվածի և տեղական լիազոր մարմինների միջև՝ ռիսկի նվազեցման ուղղությամբ: [1.1] 3. Որքանով են տեղական ինքնակառավարման մարմիններն աջակցում խոցելի համայնքներին (հատկապես կանանց, տարեցներին, հիվանդներին, երեխաներին) ակտիվորեն մասնակցելու աղետների ռիսկի նվազեցման, որոշումների կայացման, քաղաքականության մշակման, պլանավորման և իրականացման գործընթացներին: [1.3] 4. Որքանով են տեղական ինքնակառավարման մարմինները մասնակցում ազգային ԱՌՆ պլանավորման գործընթացին: [1.4]
<p>ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 2:</p> <p>Հատկացնել բյուջե և խրախուսել սեփականատերերին, ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին, համայնքներին, գործարար համայնքին և հանրային ոլորտին՝ կատարելու ներդրումներ ռիսկերը նվազեցնելու համար</p>	<ol style="list-style-type: none"> 5. Որքանով են պատշաճ ֆինանսական միջոցները հասանելի տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ռիսկի նվազեցման գործունեություն ծավալելու համար: [1.2] 6. Որքանով են տեղական ինքնակառավարման մարմինները բավարար ֆինանսական միջոցներ հատկացնում՝ ԱՌՆ միջոցառումների, այդ թվում՝ աղետների արձագանքման և վերականգնման գործողությունների իրականացման համար: [1.2] 7. Ինչպիսիք ֆինանսական ծառայություններ են հասանելի (օրինակ՝ խնայողական և վարկային ծրագրեր, մակրո և միկրո ապահովագրություն) խոցելի և մեկուսացված տնային տնտեսություններին՝ մինչ աղետների առաջացումը: [4.2] 8. Որքանով են միկրո ֆինանսավորումը, կանխիկ օգնությունը, վարկերը, վարկային երաշխավորությունները հասանելի տուժած ընտանիքներին՝ աղետներից հետո կենսական բնականոն պայմանները վերականգնելու համար: [4.2]

<p>ՀԳԾ գերակա ուղղություն 1 և 4]</p>	<p>9. Ինչպիսի՞ տնտեսական խրախուսման միջոցներ են ստեղծվել (օրինակ՝ նվազեցված ապահովագրական վճարներ տնային տնտեսություններին համար, հարկերի կրճատումներ գործարարների համար) տնային տնտեսությունների և գործարար համայնքի համար՝ աղետների ռիսկի նվազեցման ոլորտում ներդրումներ կատարելու համար: [4.3]</p>
<p>ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 3</p> <p>Թարմացնել տվյալները վտանգավոր երևույթների և խոցելիության վերաբերյալ, նախապատրաստել և տարածել ռիսկի գնահատման ուսումնասիրության արդյունքերը</p> <p>ՀԳԾ գերակա ուղղություն 2, 3 և 4]</p>	<p>10. Որքանով են տեղական գործարար ընկերությունները (ինչպիսիք են՝ առևտրային պալատները և այլն) աջակցում փոքր ձեռնարկություններին՝ աղետներից հետո գործունեության անընդհատությունն ապահովելու համար: [4.3]</p> <p>11. Որքանով են տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում աղետների ռիսկի մանրագնին գնահատումներ, զարգացման հիմնական խոցելի ոլորտների համար: [2.1]</p> <p>12. Ինչ հաճախականությամբ են այս ռիսկի գնահատումները վերանայվում, օրինակ՝ տարեկան կտրվածքով, թե՛ երկու տարին մեկ: [2.1]</p> <p>13. Ինչ հաճախականությամբ են տեղական ինքնակառավարման մարմինները տվյալներ հաղորդում տեղական վտանգավոր երևույթների միտումների և ռիսկի նվազեցման միջոցառումների, այդ թվում՝ վաղ ազդարարումների և վտանգավոր երևույթների հավանական ազդեցությունների (օրինակ՝ ռիսկի մասին տեղեկացման պլանի կիրառում) վերաբերյալ: [3.1]</p> <p>14. Որքանով են տեղական ինքնակառավարման մարմինների ռիսկի գնահատումները կապված հարևան տեղական ինքնակառավարման մարմինների և ռիսկի կառավարման պետական պլանների հետ: [2.4]</p> <p>15. Որքանով են աղետների ռիսկի գնահատումներն ընդգրկված բոլոր տեղական զարգացման պլաններում: [2.1]</p>
<p>ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 4</p> <p>Կատարել ներդրումներ և ապահովել ռիսկի նվազեցման առումով կարևոր այնպիսի ենթակառուցվածքների անխափան շահագործումը, ինչպիսիք են՝ հեղեղատարներն ու դրենաժային համակարգերը</p> <p>ՀԳԾ գերակա ուղղություն 4]</p>	<p>16. Որքանով է հողօգտագործման քաղաքականության, բնակարանաշինության և զարգացման ենթակառուցվածքների պլանավորման կանոնակարգերում հաշվի առնվում գոյություն ունեցող և կանխատեսված աղետների ռիսկը (այդ թվում՝ կլիմայի հետ կապված ռիսկերը): [4.1]</p> <ul style="list-style-type: none"> • բնակարանաշինություն • հաղորդակցման համակարգ • տրանսպորտ • էներգիա <p>17. Ինչ պատշաճությամբ են գնահատվում բարձր ռիսկային գոտիներում գտնվող խիստ կարևորության հանրային հաստատությունների անվտանգությունը և բոլոր վտանգավոր երևույթների ռիսկի ազդեցությունը: [4.4]</p> <p>18. Ինչ պատշաճությամբ են միջոցառումներ իրականացվում՝ առավել կարևորության հանրային հաստատությունները և ենթակառուցվածքները աղետների ժամանակ պաշտպանելու համար: [4.4]</p>

<p>ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 5</p> <p>Գնահատել բոլոր դպրոցների և առողջապահական հաստատությունների անվտանգությունը և, ըստ անհրաժեշտության, բարձրացնել այն:</p> <p>[ՀԳԾ գերակա ուղղություն 2, 4 և 5]</p>	<p>19. Որքանով են դպրոցները, հիվանդանոցներն ու առողջապահական հաստատություններն արժանացել հատուկ ուշադրության՝ «վտանգավոր բոլոր երևույթների» ռիսկի գնահատման առումով: [2.1]</p> <p>Նշել՝</p> <ul style="list-style-type: none"> • դպրոցները, • հիվանդանոցները, առողջապահական հաստատությունները: <p>20. Որքանով են դպրոցները, հիվանդանոցներն ու առողջապահական հաստատություններն անվտանգ, որպեսզի կարողանան շարունակել իրենց գործունեությունն արտակարգ իրավիճակների ժամանակ: [2.1]</p> <p>Նշել՝</p> <ul style="list-style-type: none"> • դպրոցները, • հիվանդանոցները, առողջապահական հաստատությունները: <p>21. Որքանով են տեղական ինքնակառավարման մարմինները կամ կառավարման այլ մակարդակները զինված հատուկ ծրագրերով՝ դպրոցների, հիվանդանոցների ու առողջապահական հաստատությունների շահագործումը, համապատասխանությունը շինարարական նորմերին, ընդհանուր անվտանգությունը, հիդրոտեխնոլոգիայի և կառուցման ռիսկերը և այլն կանոնավոր կերպով գնահատելու համար: [4.6]</p> <p>Նշել՝</p> <ul style="list-style-type: none"> • դպրոցները, • հիվանդանոցները, առողջապահական հաստատությունները: <p>22. Որքանով են աղետների պատրաստվածության կանոնավոր ուսումնավարժանքներ իրականացվում դպրոցներում, հիվանդանոցներում ու առողջապահական հաստատություններում: [5.2]</p> <p>Նշել՝</p> <ul style="list-style-type: none"> • դպրոցները, • հիվանդանոցները, առողջապահական հաստատությունները:
<p>ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 6</p> <p>Կիրառել և պարտադրել ռիսկերին համապատասխան շինարարական նորմեր և հողօգտագործման պլանավորման սկզբունքներ: Հատկացնել անվտանգ տարածքներ ցածր եկամուտ ունեցող քաղաքացիներին:</p> <p>[ՀԳԾ գերակա ուղղություն 4]</p>	<p>23. Որքանով են հողօգտագործման կանոնակարգերը, շինարարական, առողջապահական և անվտանգության նորմերը (որտեղ հաշվի է առնված ռիսկի գործոնը) կիրառվում բոլոր զարգացման գոտիներում և շինարարության մեջ: [4.1]</p> <p>24. Որքան ազդեցիկ են գոյություն ունեցող կանոնակարգերը (օրինակ՝ հողօգտագործման պլաններ, շինարարական նորմեր, և այլն)՝ ձեր լիազորության տակ գտնվող տարածքում աղետների ռիսկի նվազեցման գործունեությանն աջակցելու համար: [4.1]</p>

<p>ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 7</p> <p>Դպրոցներում և համայնքներում ապահովել աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված կրթական ծրագրեր ու վերապատրաստում:</p> <p>[ՀԳԾ գերակա ուղղություն 1, 3 և 5]</p>	<p>25. Ինչ հաճախականությամբ է տեղական ինքնակառավարման մարմինը համայնքների համար իրականացնում ԱՌՆ և աղետների պատրաստվածության վերաբերյալ իրազեկվածության բարձրացման կամ կրթական ծրագրեր: [1.3]</p> <p>Նշել՝</p> <ul style="list-style-type: none"> • ծրագրերը ներառում են մշակութային բազմազանության խնդիրներ, • ծրագրերում հաշվի են առնվում գենդերային հարցերը: <p>26. Ռիսկի նվազեցման վերաբերյալ ինչ մակարդակի վերապատրաստում է իրականացնում կառավարությունը տեղական պաշտոնյաների և համայնքային ղեկավարների համար: [1.3]</p> <p>27. Որպես կրթական ծրագրի մի մաս, որքանով են տեղական դպրոցներն ու հաստատություններն իրականացնում աղետների ռիսկի նվազեցման (ներառյալ կլիմայի հետ կապված ռիսկերը) դասընթացներ, կրթական ծրագրեր կամ վերապատրաստում: [3.2]</p> <p>28. Որքանով են քաղաքացիները տեղյակ տարհանման պլանների կամ տարհանման ուսումնավարժանքների մասին: [5.2]</p>
<p>ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 8</p> <p>Պաշտպանել էկոհամակարգերն ու բնական պաշտպանական միջավայրը</p> <p>կանխելու վտանգավոր երևույթները, հարմարեցնելու կլիմայի փոփոխությանը:</p> <p>[ՀԳԾ գերակա ուղղություն 4]</p>	<p>29. Որքանով են ԱՌՆ քաղաքականությունը, ռազմավարությունները և իրականացման պլաններն ինտեգրված գոյություն ունեցող բնապահպանական զարգացման և բնական ռեսուրսների կառավարման ծրագրերի մեջ: [4.1]</p> <p>30. Որքանով է տեղական իշխանությունն աջակցում էկոհամակարգերի ծառայությունների վերականգնմանը, պաշտպանությանը և կայուն կառավարմանը: [4.1]</p> <p>Նշել համապատասխան վանդակները՝</p> <ul style="list-style-type: none"> • անտառներ, • ափամերձ գոտիներ, • խոնավահողեր, • ջրային ռեսուրսներ, • գետի ավազաններ, • ձկնորսություն: <p>31. Որքանով են քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և քաղաքացիները մասնակցում էկոհամակարգերի ծառայությունների վերականգնման, պաշտպանության և կայուն կառավարման գործընթացներին: [4.1]</p> <p>32. Որքանով է մասնավոր հատվածը մասնակցում բնապահպանական և էկոհամակարգերի կառավարման ծրագրերի իրականացմանը: [4.1]</p>

<p>ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 9</p> <p>Հիմնել վաղ ազդարարման համակարգեր և ստեղծել ճգնաժամային կառավարման համապատասխան կարողություններ:</p> <p>[ՀԳԾ գերակա ուղղություն 2 և 5]</p>	<p>33. Որքանով են ֆինանսական ռեսուրսները հասանելի տեղական հաստատություններին՝ աղետների արձագանքման և վաղ վերականգնման արդյունավետ իրականացմանն աջակցելու համար: [5.3]</p> <p>34. Որքանով են վաղ ազդարարման կենտրոնները համալրված համապատասխան աշխատակազմով (կամ, ըստ անհրաժեշտության, մասնագետների առկայությամբ) և հագեցած ռեսուրսներով (էլեկտրաէներգիայի այլընտրանք, սարքավորումներ և այլն) բոլոր ժամանակներում արդյունավետ գործունեություն ծավալելու համար: [2.3]</p> <p>35. Որքանով են ազդարարման համակարգերը հնարավորություն ստեղծում համայնքի պատշաճ մասնակցության համար: [2.3]</p> <p>36. Տեղական ինքնակառավարումն ինչ մակարդակի արտակարգ իրավիճակների օպերատիվ կառավարման կենտրոն և/կամ արտակարգ իրավիճակների կառավարման հաղորդակցման համակարգ ունի: [5.2]</p> <p>37. Ինչ հաճախականությամբ են անցկացվում վերապատրաստման վարժանքներ և փորձեր՝ համապատասխան պետական մարմնի, հասարակական ոլորտի ներկայացուցիչների, տեղական առաջնորդների և կամավորների մասնակցությամբ: [5.2]</p> <p>38. Որքանով են արդյունավետ արձագանքման համար անհրաժեշտ հիմնական միջոցները հասանելի բոլոր ժամանակներում, ինչպիսիք են՝ արտակարգ իրավիճակների պարագաները, ապաստարանները, սահմանված տարիանման ուղիները և արտակարգ իրավիճակների արձագանքման պլանները: [5.2]</p> <p>Նշել համապատասխան վանդակները՝</p> <ul style="list-style-type: none"> • օգնության տրամադրման պարագաների պաշարներ, • ապաստարաններ, • սահմանված տարիանման անվտանգ ուղիներ, • արձագանքման պլան կամ աղետների պատրաստվածության համայնքային պլան բոլոր հիմնական վտանգավոր երևույթների համար:
<p>ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ 10</p> <p>Ապահովել, որ յուրաքանչյուր աղետից հետո տուժած բնակչության կարիքներն ու մասնակցությունը կենտրոնական լինեն վերականգնման փուլում:</p> <p>[ՀԳԾ գերակա ուղղություն 4 և 5]</p>	<p>39. Որքանով են համապատասխան միջոցները և փորձագետները հասանելի տեղական ինքնակառավարման մարմիններին՝ աջակցելու աղետներից հոգեպետ և սոցիալապետ (հոգեբանական, հուզական) տուժած բնակչությանը: [5.3]</p> <p>40. Որքանով են աղետների ռիսկի նվազեցման միջոցառումներն ինտեգրված հետադետային վերականգնողական գործունեության մեջ (այսինքն՝ վերակառուցում, կենսական պայմանների վերականգնում): [4.5]</p> <p>41. Որքանով է արձագանքման պլանը (կամ նման այլ պլան) ներառում հետադետային վերականգնման և վերակառուցման ռազմավարություն, կարիքների գնահատումներ և կենսական պայմանների վերականգնման հարցեր: [5.2]</p>

Աղյուսակ Ա.3. ՀԳԾ ազգային հիմնական ցուցանիշները

Աղյուսակ Ա.3-ում ներկայացվում են Հյուգոյի գործողությունների ծրագրի հինգ գերակա ուղղությունների հիմնական ցուցանիշները, որոնք **ազգային** կառավարություններն օգտագործում են առաջընթացի մշտադիտարկման համար (ավելին տես www.preventionweb.net/english/hyogo/hfa-monitoring կայքէջում: Աջ սյունակում ներկայացված թվերը ցույց են տալիս, թե Աղյուսակ Ա.1-ի որ հիմնական հարցին են առնչվում ՀԳԾ ցուցանիշները (առցանց տարբերակով դրանք միմյանց հետ կապված են):

ԱԶԳԱՅԻՆ ՀԳԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ (ՀՑ) ԸՍՏ ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ	Հիմնական հարցերը (Տես՝ Աղյուսակ Ա.1)
<p>ՀԳԾ գերակա ուղղություն 1. Երաշխավորել, որ աղետների ռիսկի նվազեցումը պետական և տեղական նշանակության առաջնահերթություն է և գտնվում է ամուր հաստատությունական հիմքի վրա:</p> <p>ՀՑ 1.1. Աղետների ռիսկի նվազեցման ազգային քաղաքականությունը և օրենսդրական դաշտն առկա է բոլոր մակարդակներում ապակենտրոնացված պարտականություններով և կարողություններով:</p>	1, 2, 3, 4
<p>ՀՑ 1.2. Գոյություն ունեն պատշաճ ռեսուրսներ, որոնք հատկացված են բոլոր վարչական մակարդակներում աղետների ռիսկի նվազեցման ծրագրերի և գործողությունների իրականացման համար:</p>	5, 6
<p>ՀՑ 1.3. Համայնքային մասնակցությունը և ապակենտրոնացումը երաշխավորված է՝ տեղական մակարդակներում լիազորությունների և ռեսուրսների փոխանցման միջոցով:</p>	3, 25, 26
<p>ՀՑ 1.4. Գործում է աղետների ռիսկի նվազեցման բազմոլորտ պլատֆորմ:</p>	4
<p>ՀԳԾ գերակա ուղղություն 2. Բացահայտել, գնահատել և վերահսկել աղետների ռիսկը, ինչպես նաև հզորացնել վաղ ազդարարման համակարգը:</p> <p>ՀՑ 2.1. Ազգային և տեղական մակարդակների ռիսկի գնահատումները՝ հիմնված վտանգավոր երևույթների մասին տվյալների և խոցելիության վերաբերյալ տեղեկությունների վրա, հասանելի են և ներառում են ռիսկը:</p>	11, 12, 15, 19, 20
<p>ՀՑ 2.2. Գործում են համապատասխան համակարգեր հիմնական վտանգավոր երևույթների և խոցելիության մասին տվյալների մշտադիտարկման, արխիվացման ու տարածման համար:</p>	
<p>ՀՑ 2.3. Վաղ ազդարարման համակարգերը գործում են բոլոր հիմնական վտանգավոր երևույթների համար և հասանելի են համայնքներին:</p>	34, 35
<p>ՀՑ 2.4. Ազգային և տեղական մակարդակների ռիսկի գնահատման ուսումնասիրություններում հաշվի են առնվում տարածաշրջանային և անդրսահմանային ռիսկերը՝ նպատակ ունենալով հիմնել տարածաշրջանային համագործակցություն ռիսկի նվազեցման ոլորտում:</p>	14
<p>ՀԳԾ գերակա ուղղություն 3. Օգտագործել գիտելիքը, նորարարությունն ու կրթությունը՝ բոլոր մակարդակներում անվտանգության և դիմակայման մշակույթ ձևավորելու համար:</p> <p>ՀՑ 3.1. Աղետների վերաբերյալ համապատասխան տեղեկություններն առկա են բոլոր մակարդակներում և հասանելի բոլոր շահագրգիռ կողմերին՝ համացանցերի, տեղեկատվության տարածման համակարգերի ստեղծման և այլ միջոցներով:</p>	13

<p>ՀՅ 3.2. Դպրոցական ծրագրերում, ուսումնական նյութերում և համապատասխան վերապատրաստման դասընթացներում ներառված են աղետների ռիսկի նվազեցման և վերականգնման գաղափարներն ու գործելակերպերը:</p>	27
<p>ՀՅ 3.3. Ռիսկերի գնահատման և ծախս-արդյունք վերլուծությունների համար անհրաժեշտ ուսումնասիրությունների մեթոդներն ու գործիքները մշակված են և հագեցված:</p>	
<p>ՀՅ 3.4. Առկա է ամբողջ երկիրն ընդգրկող հանրային իրազեկման ռազմավարություն՝ միտված աղետների դիմակայման մշակույթի ստեղծմանը, որը հասանելի է նաև քաղաքային և գյուղական համայնքներին:</p>	
<p>ՀԳԾ գերակա ուղղություն 4. Նվազեցնել հիմքային ռիսկի գործոնները: ՀՅ 4.1. Աղետների ռիսկի նվազեցումը բնապահպանական քաղաքականության և ծրագրերի, այդ թվում՝ հողօգտագործման, բնական պաշարների կառավարման ու կլիմայի փոփոխության հարմարվողականության անբաժանելի մասն է:</p>	16, 23, 24, 29, 30, 31, 32
<p>ՀՅ 4.2. Սոցիալական զարգացման քաղաքականություններն ու ծրագրերն իրականացվում են ռիսկային գոտում գտնվող բնակչության խոցելիությունը նվազեցնելու նպատակով:</p>	7, 8
<p>ՀՅ 4.3. Տնտեսական և արդյունաբերական ոլորտային քաղաքականությունն ու ծրագրերն իրականացվել են՝ նվազեցնելու տնտեսական գործունեության խոցելիությունը:</p>	9, 10
<p>ՀՅ 4.4. Բնակավայրերի պլանավորման և կառավարման գործընթացներում ներառված են աղետների ռիսկի նվազեցման բաղադրիչները, այդ թվում՝ շինարարական նորմերի կիրառումը:</p>	17, 18,
<p>ՀԳԾ գերակա ուղղություն 5. Բարձրացնել աղետների արդյունավետ արձագանքման պատրաստականությունը բոլոր մակարդակներում: ՀՅ 5.1. Աղետների ռիսկի նվազեցման նպատակով առկա են քաղաքականության մշակման, տեխնիկական և հաստատութենական կարողություններ և մեխանիզմներ՝ աղետների ռիսկի կառավարման համար:</p>	1
<p>ՀՅ 5.2. Աղետների պատրաստվածության և արձագանքման պլաններն առկա են բոլոր վարչական մակարդակներում, և իրականացվում են կանոնավոր ուսումնասիրական քննարկումներ՝ փորձարկելու և զարգացնելու աղետների արձագանքման ծրագրերը:</p>	22, 28, 36, 37, 38, 41
<p>ՀՅ 5.3. Ֆինանսական պահուստները և արձագանքման մեխանիզմներն առկա են (ըստ անհրաժեշտության աջակցելու արդյունավետ օպերատիվ արձագանքման և վերականգնողական գործընթացներին):</p>	33, 39
<p>ՀՅ 5.4. Առկա են համապատասխան ընթացակարգեր՝ աղետի ժամանակ վտանգավոր երևույթների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման համար և հետադետային իրավիճակի վերաբերյալ ուսումնասիրություններ իրականացնելու համար:</p>	

Հավելված 2. Աղետների ռիսկի նվազեցման տերմինաբանություն

Աղետների ռիսկի կառավարումը սպառնալիքների բացասական ազդեցությունների և աղետների հավանականության նվազեցմանն ուղղված հարթահարման հնարավորությունների բարելավման քաղաքականության և ռազմավարության իրականացման, վարչական հրահանգների, կազմակերպչական և օպերատիվ հմտությունների հետևողական օգտագործման գործընթացն է: Աղետների ռիսկի կառավարման նպատակն է կանխարգելման, հետևանքների նվազեցման և պատրաստվածության գործողությունների ու միջոցառումների միջոցով խուսափել վտանգների բացասական հետևանքներից կամ նվազեցնել այդ հետևանքները (ՄԱԱՆՄՌ):

Աղետների ռիսկի նվազեցումը աղետների պատճառային գործոնների վերլուծությանն ու կառավարմանն ուղղված (ներառյալ վտանգների ազդեցության նվազեցման, բնակչության և ունեցվածքի խոցելիության նվազեցման, հողօգտագործման, շրջակա միջավայրի խելամիտ կառավարման և անբարենպաստ պատահարներին պատրաստականության բարձրացման միջոցով) աղետների ռիսկի նվազեցման պարբերական աշխատանքների հայեցակարգ և գործելակարգ է (*ուղղորդված Հյուսիս 2005-2015թթ. «Ազգերի և համայնքների՝ աղետների ռիսկի նվազեցումը» համալսարանական ծրագրի» համընդհանուր քաղաքականությամբ*):

Դիմակայունությունը (դիմակայունությունը) վտանգի ենթակա հասարակության, համայնքի կամ համակարգերի ունակությունն է դիմակայելու վտանգի հետևանքներին, դրանք կրելու, դրանց հարմարվելու և ժամանակին ու արդյունավետ վերականգնվելու, այդ թվում՝ իրենց հիմնական կառուցվածքները գործառնությունների պահպանման և վերականգնման միջոցով (ՄԱԱՆՄՌ): Դիմակայունությունը միտված է մեծացնելու քաղաքի ընդհանուր կարողությունը՝ ստեղծելու ուժեղ ու առողջ հասարակություն և տնտեսություն՝ ունակ գործելու տարբեր հանգամանքներում (Տեղական իշխանությունները հանուն կայունության (ICLEI)):

Կայուն ուրբանիզացիան սոցիալական, տնտեսական և բնապահպանական կայունության ապահովման համար ինտեգրված, գենդերային զգայուն և բնակչության աղքատ խավերին աջակցող գործընթաց է: Այն հիմնված է պլանավորման և որոշումների կայացման մասնակցային գործընթացների և ընդգրկուն կառավարման վրա (ՄԱԿ-ՀԱԲԻԹԱԹ): Կայուն ուրբանիզացման սկզբունքներն են՝

- հասանելի և բնակչության աղքատ խավերին տրամադրվող հողերի, ենթակառուցվածքների, ծառայությունների և բնակարանաշինության ապահովում,
- սոցիալապես ընդգրկուն, գենդերային զգայուն, առողջ և անվտանգ զարգացում,
- շրջակա միջավայրի համար անվտանգ և ցածր ածխածնով միջավայրի առկայություն,
- պլանավորման և որոշումների կայացման մասնակցային գործընթացներ,
- կայուն և մրցակցային տեղական տնտեսություն, որը նպաստում է պատշաճ աշխատանքի և ապրուստի ապահովմանը,
- խտրականության բացակայություն և քաղաքի նկատմամբ հավասար իրավունքների երաշխավորում,
- քաղաքներին և համայնքներին հնարավորությունների ընձեռում՝ բացասական երևույթների և փոփոխությունների արդյունավետ կառավարման և պլանավորման համար՝ դիմակայման մշակույթի ստեղծման նպատակով:

Լրացուցիչ սահմանումների համար տես ՄԱԱՆՄՌ աղետների ռիսկի նվազեցման տերմինաբանությունը՝ <http://www.unisdr.org/terminology>:

Հավելված 3. Աղետների ռիսկի սպառնալիքների միտումներ և մեջբերումներ


Համաձայն **ՄԱԿ-ի 2011թ. Աղետների ռիսկի նվազեցման «Բացահայտել ռիսկը և վերածնակերպել զարգացումը» Գլոբալ գնահատման հաշվետվության**, գոյություն ունի աղետներից առաջացած վնասների մեծացման երկու գործոն: Առաջինը, մարդկանց բնակավայրերի հիմնում է վտանգավոր տարածքներում, այդ թվում՝ ջրհեղեղավտանգ տարածքները և թայֆունների նկատմամբ բարձր ռիսկային գոտիները: Վերջին 40 տարվա ընթացքում, աշխարհի բնակչությունն ավելացել է 87%-ով: Ի տարբերություն նշվածի, ջրհեղեղավտանգ գետային ավազաններում բնակվող մարդկանց քանակն ավելացել է 114%-ով, իսկ ափամերձ տարածքներում բնակվող մարդկանց թիվը, որոնց սպառնում են ցիկլոնները, ավելացել է գրեթե 200%-ով: Վերոնշյալի հիմնական մասը բաժին է հասնում ցածր և ցածրից միջին եկամուտ ունեցող երկրներին:

Երկրորդը, արևադարձային ցիկլոններից խոցելի ՀՆԱ բացարձակ արժեքը, որը 1970-ականների ավելի քան 600 միլիարդ ԱՄՆ դոլարից ավելացել է մինչև 1.6 տրիլիոն ԱՄՆ դոլարի նոր հազարամյակում՝ ավելացող սպառնալիքը դարձնելով աղետների ռիսկի հիմնական գործոններից մեկը: Սա ցույց է տալիս, որ աղետավտանգ գոտիներում ներդրումներ կատարելու տնտեսական դրդապատճառները շարունակում են գերակշռել ակնկալվող աղետների ռիսկերում:


Իհարկե, կան նաև լավ նորություններ: Համընդհանուր մասշտաբով, ջրհեղեղների և արևադարձային ցիկլոնների պատճառով առաջացող մահացության ռիսկը գնալով նվազում է: Սա կարևոր նվաճում է և հիմնականում Արևելյան Ասիայի և խաղաղօվկիանոսյան, ինչպես նաև այն երկրների շնորհիվ, որտեղ խոցելիության նվազեցումը գերազանցում է սպառնալիքը: Զարգացման պայմանների լավացման հետ մեկտեղ, այս երկրները (ինչպես նաև որոշ քաղաքներ) հզորացրել են աղետների կառավարման ոլորտը՝ ավելի արդյունավետ վաղ ազդարարման համակարգերի, պատրաստվածության և արձագանքման շնորհիվ, որի արդյունքում աղետների ժամանակ էականորեն նվազել է զոհերի թիվը:

Ի տարբերություն վերոնշյալի, տնտեսական վնասի ռիսկը մեծանում է բոլոր տարածաշրջաններում: Ցավոք, համընդհանուր տնտեսական տեսանկյունից, ՏՀԶԿ երկրներում ջրհեղեղների պատճառով տնտեսական կորուստների ռիսկն այսօր ավելի արագ է մեծանում, քան մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, որը նշանակում է, որ հիդրոոդերևութաբանական պայմաններից բխող աղետներից պարուստի կորստի ռիսկն ավելի արագ է մեծանում, քան այդ ապրուստը ստեղծվում է: Սա չի նշանակում, որ երկրները չեն նվազեցնում իրենց խոցելիությունը. իհարկե, նվազեցնում են: Սակայն այդ բարելավումները բավականին արագ կամ խորությամբ տեղի չեն ունենում՝ փոխհատուցելու աճող սպառնալիքը: Ստորև ներկայացված գծապատկերները ցույց են տալիս նշված նկատառումները:

Տոկոսային փոփոխություն (Լատինական Ամերիկա և Կարիբյան կղզիներ)



Տոկոսային փոփոխություն (ՏՀԶԿ երկրներ (OECD))



Կլիմայի փոփոխության միջկառավարական խորհրդի (IPCC) հաջորդական հաշվետվություն ծայրահեղ երևույթների և աղետների ռիսկի կառավարման վերաբերյալ՝ ուղղված կլիմայի փոփոխության հարմարվողականության զարգացմանը: Կլիմայի փոփոխության միջկառավարական խորհուրդ, 2012թ.:

Կլիմայի փոփոխության միջկառավարական խորհրդի այս հաշվետվության մեջ առաջին անգամ արծարծվում է այն հարցը, թե ինչպես մասնագիտական փորձառությունը կլիմայի, աղետների ռիսկի կառավարման և հարմարվողականության ոլորտում ներդնելով կարելի է նվազեցնել և կառավարել հիդրոոգերևութաբանական վտանգավոր երևույթների և աղետների ռիսկերը փոփոխվող կլիմայի պայմաններում: Հաշվետվության մեջ գնահատվում է կլիմայի փոփոխության դերը վտանգավոր երևույթների բնութագրերի փոփոխման հարցում: Գնահատական է տրվում նաև սպառնալիքներն ու խոցելիությունը նվազեցնելու, ինչպես նաև հիդրոոգերևութաբանական վտանգավոր երևույթների նկատմամբ դիմակայունությունը բարձրացնելու նպատակով տարբեր հաստատությունների, կազմակերպությունների և համայնքների կողմից կիրառվող բազմաբնույթ մոտեցումներին: Նման տարբերակների շարքում են՝ վաղ ազդարարման համակարգերը, ապահովագրական ծածկույթի նորարարությունները, ենթակառուցվածքների զարգացումները և սոցիալական անվտանգության ցանցերի ընդլայնումը: Նշված հաշվետվության մեջ տեղ են գտել նաև որոշ դեպքերի ուսումնասիրություններ, որտեղ նկարագրված են աշխարհի տարբեր մասերում տեղի ունեցող յուրահատուկ հիդրոոգերևութաբանական վտանգավոր երևույթներ և դրանց ազդեցությունները, ինչպես նաև աղետների ռիսկի կառավարման ոլորտում իրականացվող մի շարք նախաձեռնումներ:

Հաշվետվության մեջ ներկայացվում են տեղեկություններ այն մասին, թե

- բնական կլիմայական բազմազանությունը և մարդածին կլիմայական փոփոխություններն ինչպես են ազդում որոշ հիդրոոգերևութաբանական երևույթների հաճախականության, ուժգնության, տարածության և տևողության վրա:
- մարդկային հասարակության և էկոհամակարգերի խոցելիությունը ինչպես է կապված նշված երևույթների հետ, որն օգնում է բացահայտել աղետների ազդեցությունն ու հավանականությունը:
- զարգացման տարբեր մոտեցումներն ինչպես կարող են ապագայում բնակչությանը քիչ թե շատ խոցելի դարձնել հիդրոոգերևութաբանական վտանգավոր երևույթներից:
- հիդրոոգերևութաբանական երևույթների և կլիմայի փոփոխության հարմարվողականության փորձը առաջարկում է ուղիներ, թե ինչպես ավելի արդյունավետորեն կառավարել հիդրոոգերևութաբանական երևույթների հետ կապված ներկա և սպասվելիք ռիսկերը:
- բնակչությունն ինչպես կարող է ավելի դիմակայուն դառնալ նախքան աղետների առաջացումը:

Հիմնական թեմաները

- Աշխարհի որոշ մասերում դիտվել է որոշ հիդրոոգերևութաբանական վտանգավոր երևույթների աճ: Հետագա աճ է կանխատեսվում նաև 21-րդ դարի ընթացքում:
- Սոցիալ-տնտեսական զարգացումը, բնածին և մարդածին կլիմայական փոփոխություններն ազդում են կլիմայի և հիդրոոգերևութաբանական վտանգավոր երևույթներով պայմանավորված աղետների ռիսկի վրա:
- Աղետների ռիսկի կառավարման և կլիմայի փոփոխության հարմարվողականության փորձն ապահովում է համապատասխան գիտելիքների հենք՝ սպառնալիքներին և աղետներին դիմակայելու համար պատրաստվածությունն ապահովելու և արձագանքման արդյունավետ մոտեցումներ մշակելու համար:

Հաշվետվությունը հրապարակվել է 2012թ.-ին:
 Ամփոփ տարբերակը հասանելի է www.preventionweb.net/go/srex կայքէջում:

Քաղաքներում կլիմայի փոփոխության հարմարվողականության ուղեցույց:

Համաշխարհային բանկ, 2011թ.

Սա գործնական ռեսուրս է, որն օգնում է արձագանքել քաղաքներում կլիմայի փոփոխության հարմարվողականության խնդիրներին: Թիրախային հիմնական լսարանը զարգացող երկրների քաղաքային իշխանություններն ու ոլորտի մասնագետներն են, ովքեր սկսել են դիտարկել կլիմայի փոփոխության հարմարվողականության հարցերը: Այստեղ նրանք կարող են գտնել այս զարգացող թեմայի համապարփակ նկարագրությունը: Ուղեցույցում ներկայացվում են լավագույն գործելակերպերի և հաջողված փորձերի օրինակներ, ինչպես նաև նկարագրվում են այլ տեղեկատվական նյութեր ու գործիքներ: Այնտեղ նախանշվում են գործնական գործողություններ և ցույց է տրվում, թե ինչպես կարելի է կապել կլիմայի փոփոխության խնդիրը համայնքային գերակայությունների և քաղաքին վերաբերող այլ կարևոր հարցերի հետ, ինչպիսիք են՝ աղետների ռիսկի նվազեցումը, տնտեսական զարգացումը, հանրային առողջապահությունը, կայունությունը, պարենային անվտանգությունը և այլ առաջնահերթություններ: Այսպիսով, այն կարող է նպաստել քաղաքներում հարմարվողականության պլանների մշակմանն ու իրականացմանը՝ հզորացնելով կարողությունները և աջակցելով քաղաքային իշխանությունների և այլ շահագրգիռ կողմերի միջև հարմարվողականության հարցերի շուրջ երկխոսության խթանմանը: Գիտելիքի այս շտեմարանը մշակվել է Համաշխարհային բանկի կողմից՝ Տեղական իշխանությունները հանուն կայունության ընկերության մասնակցությամբ և հրապարակվել է Համաշխարհային բանկի և ՄԱԿ-ՀԱԲԻԹԱԹ կազմակերպության կողմից իրականացվող «Քաղաքներ և կլիմայի փոփոխություն» համատեղ ծրագրի շրջանակներում «Cities Alliance» կազմակերպության աջակցությամբ:

Ավելին տես <http://go.worldbank.org/EEBXSYPRO> կայքէջում:

Քաղաքներ և հեղեղումներ. 21-րդ դարում քաղաքային հեղեղումների ռիսկի ինտեգրված կառավարման ուղեցույց: Համաշխարհային բանկ, Աղետների նվազեցման և վերականգնման գլոբալ հիմնադրամ (GFDRR), 2012թ.:

Սա օպերատիվ ուղեցույց է զարգացող երկրների քաղաքների քաղաքականության մշակման և որոշումներ կայացնողների, ինչպես նաև տեխնիկական մասնագետների համար, որտեղ ներկայացվում է, թե ինչպես կառավարել հեղեղումների ռիսկն արագորեն փոփոխվող քաղաքային միջավայրում և փոփոխական կլիմայի պայմաններում: Այն առաջարկում է ռազմավարական մոտեցում, համաձայն որի գործողությունները գնահատվում են, ընտրվում և ինտեգրվում այն գործընթացի մեջ, որի միջոցով ստանում են տեղեկատվություն և ներգրավվում բոլոր շահագրգիռ կողմերը: Ներկայացնելով ավելի քան հիսուն կոնկրետ դեպքերի ուսումնասիրություններ, մի շարք բաժիններ, գործելակերպեր և բազմաթիվ ուղղորդիչ քաղաքականության սկզբունքներ, ուղեցույցը արժեքավոր նյութ է քաղաքային հեղեղումների ռիսկի ինտեգրված կառավարման համար:

Քաղաքային ռիսկի ինտեգրված կառավարումը բազմակողմանի և բազմոլորտ մոտեցում է, որն իրականացվում է տարբեր պետական և հասարակական մարմինների պատասխանատվության ներքո: Հեղեղումների ռիսկի կառավարման չափորոշիչները պետք է լինեն՝ համապարփակ, տեղայնացված, ինտեգրված և հավասարակշռված բոլոր ընդգրկված ոլորտներում: Ուղեցույցը կազմված է հետևյալ սկզբունքների հիման վրա՝

- Յուրաքանչյուր ջրհեղեղի ռիսկի սցենարը տարբեր է. չկա ջրհեղեղի կառավարման կոնկրետ ծրագիր:
- Ջրհեղեղի կառավարման նախագծերը պետք է հաղթահարեն փոփոխվող և անորոշ ապագայի խնդիրները:
- Արագ ուրբանիզացիան պահանջում է ջրհեղեղների ռիսկի կառավարման ինտեգրումը քաղաքաշինության կանոնավոր պլանավորման և կառավարման դաշտ:

- Ինտեգրված ռազմավարությունը պահանջում է և՛ կառուցվածքային, և՛ ոչ կառուցվածքային չափորոշիչների կիրառում և ճիշտ չափագրում՝ «հավասարակշռությունը պահպանելու» համար:
- Անհնար է ամբողջովին վերացնել հեղեղումների ռիսկը:
- Բացի հեղեղումների կառավարման դերից, հեղեղումների կառավարման չափորոշիչներն ունեն նաև մի շարք այլ առավելություններ:
- Չափազանց կարևոր է հեղեղումների ռիսկի ծրագրերի մշակման և իրականացման պատասխանատվության հստակությունը:
- Հեղեղումների ռիսկի կառավարման չափորոշիչների իրականացումը պահանջում է բազմոլորտ համագործակցություն:
- Հեղեղումների կառավարման ծախսեր կատարելիս կարևոր է հաշվի առնել հեղեղումների սոցիալական և էկոլոգիական ավելի ընդլայնված հետևանքները:
- Անհրաժեշտ է իրականացնել շարունակական տեղեկատվության տարածման միջոցառումներ՝ իրազեկվածության բարձրացման և պատրաստվածության ամրապնդման նպատակով:
- Հարկավոր է պլանավորել հեղեղումներից հետո արագ վերականգնման գործողություններ և օգտագործել այն կարողությունների հետագա զարգացման համար:

Ավելին տես www.gfdrr.org/urbanfloods կայքէջում:

Հավելված 4. Գործիքներ և ռեսուրսներ

Խնդրում ենք հաշվի առնել, որ որոշ դեպքերում այս գործիքների և ռեսուրսների կայքէջերի հասցեների (URL) բնօրինակները կրճատվել են՝ տեղեկությունների հասանելիությունը հեշտացնելու համար: Այս կրճատ հասցեներն օգտագործելիս՝ ավտոմատ կերպով կուղղորդվեք դեպի յուրաքանչյուր կազմակերպության կայքէջի համապատասխան ռեսուրսը:

Ընդհանուր ուղեցույց

“Making Cities Resilient – My City is Getting Ready!”

www.unisdr.org/campaign Այն ամենը, որ անհրաժեշտ է իմանալ գլոբալ քարոզարշավին միացած քաղաքների մասին, որոնք աշխատում են ռիսկի նվազեցման ուղղությամբ:

Hyogo Framework for Action 2005-2015: Building the resilience of nations and communities

www.unisdr.org/hfa Տասնամյա գործողությունների ծրագիր, որն ընդունվել է Միավորված ազգերի անդամ պետությունների կողմից և առաջարկում է դիմակայունության ստեղծման ուղղորդիչ սկզբունքներ և ազգային մակարդակով կիրառվելիք առաջընթացի մշտադիտարկման համակարգ:

Words into Action: A Guide for Implementing the Hyogo Framework – ՄԱԱՆՄՌ (2007թ.)

www.unisdr.org/files/594_10382.pdf Հյուսիս գործողությունների ծրագրի իրականացման ռազմավարություններ և ուղեցույցներ (ազգային ուղղվածություն):

A Guide for Implementing the Hyogo Framework for Action by Local Stakeholders – ՄԱԱՆՄՌ, Կյոտոյի համալսարան (2010թ.)

www.preventionweb.net Առաջարկություններ տեղական ինքնակառավարման մարմինների և շահագրգիռ կողմերի համար՝ տեղական մակարդակում ՀԳԾ իրականացման վերաբերյալ (հիմնված «խոսքից անցում գործողությունների» ուղեցույցի վրա):

United Nations Millennium Development Goals

www.undp.org/mdg/basics.shtml Բոլոր ազգերի և աշխարհի առաջադարձ զարգացման հաստատությունների կողմից համաձայնեցված ութ նպատակներ, որոնք միտված են աղքատության, քաղցի և հիվանդությունների նվազեցմանը:

Global Assessment Report on Disaster Risk Reduction (GAR) – ՄԱԱՆՄՌ (2009 և 2011)

<http://www.preventionweb.net/gar> Երկու տարին մեկ իրականացվող աղետների ռիսկի նվազեցման առաջընթացի Համընդհանուր գնահատում (հիմնված ՀԳԾ հաշվետվությունների վրա) և ռիսկի միտումների, բնական վտանգավոր երևույթների ուսումնասիրում և վերլուծություն և դրանց դիտարկման առաջարկություններ: GAR 2009-ի ենթավերնագիրն է՝ **Ռիսկը և աղքատությունը փոփոխվող կլիմայի պայմաններում**: Հասկանալի կարևոր են. Գլուխ 3՝ Ռիսկի և աղքատության միտումները տեղական մակարդակում և Գլուխ 4.2՝ Քաղաքային և տեղական կառավարում, աղքատություն և աղետների ռիսկ: GAR 2011-ի ենթավերնագիրն է՝ **Քաղաքային ռիսկը և վերածնակերպել գարգացումը**: Հասկանալի կարևոր է Գլուխ 6-ը՝ Աղետների ռիսկի նվազեցման հնարավորությունները և դրդապատճառները:

Climate Resilient Cities: A Primer on Reducing Vulnerabilities to Disasters – Աղետների նվազեցման և վերականգնման գլոբալ հիմնադրամ (GFDRR), Համաշխարհային բանկ, ՄԱԱՆՄՌ (2008թ.)

<http://tinyurl.com/ycuaqyn> Կլիմայի հետ կապված աղետների խոցելիության նվազեցման ուղեցույց կոնկրետ դեպքերի ուսումնասիրություններով և աշխատանքային ձևաչափերով:

What role for low-income communities in urban areas in disaster risk reduction? Դ. Սաթերթվայթ, ՄԱԱՆՄՌ, IIED (2011թ.)

http://www.preventionweb.net/english/hyogo/gar/2011/en/bgdocs/Satterthwaite_2011.pdf GAR 2011-ի ներածական փաստաթուղթ, որտեղ ներկայացված է ցածր եկամուտ ունեցող համայնքների կազմակերպությունների դերը ցածրից միջին եկամուտ ունեցող երկրներում քաղաքային աղետների ռիսկի նվազեցման ոլորտում:

Գերակա ուղղություն 1. Հաստատութենական և վարչական համակարգ

«Քաղաքացիական խմբերի և քաղաքացիական հասարակության անմիջական մասնակցությամբ ստեղծել կազմակերպչական և համակարգման մեխանիզմներ՝ հասկանալու և նվազեցնելու աղետների ռիսկը: Ստեղծել տեղական համագործակցային մեխանիզմներ: Ապահովել, որ հասարակությունները հասկանան իրենց դերը աղետների ռիսկի նվազեցման և պատրաստվածության ոլորտներում»

Disaster Risk Reduction in Greater Mumbai Project: Disaster Risk Management Master Plan (DRMMP) Handbook (2009թ.)

http://emi-megacities.org/drmmp_handbook.pdf Ուղեցույց, որտեղ քայլ առ քայլ ներկայացվում է Հնդկաստանի Մումբայ քաղաքում աղետների ռիսկի կառավարման գլխավոր պլանի իրականացման գործընթացը

Legal and Institutional Arrangements, Mumbai, India – A Disaster Risk Management Master Plan. Մեծ Մումբայի քաղաքային ընկերություն, ԵՄՆ (2011թ.)

<http://tinyurl.com/c3mxbxy> Մումբայում աղետների ռիսկի կառավարման իրավական և հասարակութենական դաշտի ուսումնասիրություն և Աղետների ռիսկի կառավարման գլխավոր պլանի հիմքը

Local Disaster Management, Interim Guidelines – Քուինսլենդի կառավարություն, Ավստրալիա

<http://tinyurl.com/d7a9kqr> Պլան տեղական ինքնակառավարման մարմիններին օժանդակելու մշակել համայնքահեն աղետների կառավարման համակարգի աջակցման ծրագիր:

Philippine Disaster Risk Reduction and Management Act of 2010 – Ֆիլիպինների կառավարություն (2011թ.)

<http://tinyurl.com/c2qqcmc> Ֆիլիպիններում ԱՌՆ պլանավորման հզորացման ազգային ծրագիր

Cape Town Municipal Disaster Risk Management Plan (South Africa) – Քեյփ Թաունի աղետների կառավարման կենտրոն (2008թ.)

<http://www.capetown.gov.za/en/DRM/> Քաղաքի համապարփակ մոտեցումն աղետների ռիսկի կառավարմանը

Brisbane City Community Safety and the Disaster Management Plan (Ավստրալիա)

<http://www.brisbane.qld.gov.au/community/community-safety/> Տեղեկություններ համայնքի անվտանգության վերաբերյալ, որն ուղղորդում է աղետների կառավարման պլանի մշակումը

Գերակա ուղղություն 2. Ֆինանսավորում և ռեսուրսներ

«Հարկացնել աղետների ռիսկի նվազեցման բյուջե և խրախուսել համայնքներին, տների սեփականատերերին, ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին, գործարար համայնքին և հասարակական հարվածին ներդրումներ կատարել՝ իրենց առջև ծառայած ռիսկերը նվազեցնելու համար»:

Sharing Risk: Financing Australia's Disaster Resilience – Ավստրալիայի ռազմավարական քաղաքականության ինստիտուտ (2011թ.)

<http://tinyurl.com/d2542rr> Ինը առաջարկություն, թե ինչպես նվազեցնել բնական աղետների պարտաճանաճ հնարավոր վնասները և աջակցել տուժածներին վերականգնման գործընթացում

Financing the Resilient City: a Demand Driven Approach to Development, Disaster Risk Reduction and Climate Adaptation – Տեղական իշխանությունները հանուն կայունության (ICLEI) (2011թ.)

<http://tinyurl.com/7jylz9p> Դիմակայունության ֆինանսավորման նորարարական մոտեցում, որի ուշադրության կենտրոնում է քաղաքային ռիսկի նվազեցման համար մեծ գումարների հայթայթման պահանջները: Այն ավելին է, քան կարող է ձեռք բերվել նոր միջազգային ադապտացման հիմնադրամների միջոցով:

Mitigation Benefit Cost Analysis (BCA) Toolkit Compact Disc – FEMA, ԱՄՆ

<http://www.fema.gov/government/grant/bca.shtm>

Այս գործիքն իր մեջ ներառում է FEMA BCA համակարգչային ծրագիրը, տեխնիկական ձեռնարկներ, BCA վերապատրաստման դասընթացի փաստաթղթեր

Climate Finance Options – Համաշխարհային բանկ, ՄԱԶԾ

www.climatefinanceoptions.org Այս համացանցային պլատֆորմը համապարփակ ուղեցույց է՝ զարգացող երկրների համար հասանելի ֆինանսական արարեթմաների վերաբերյալ

The Adaptation Fund – ՄԱԿ ԿՓՇԿ (UNFCCC)

<http://www.adaptation-fund.org/> Հիմնված է ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի Կյոտոյի արձանագրությանը՝ ֆինանսավորելու հարմարվողականության նախագծերն ու ծրագրերը զարգացող երկրներում, որոնք միացել են նշված արձանագրությանը:

Climate Funds Update

www.climatefundsupdate.org/ Անկախ կայքէջ, որը տեղեկություններ է տրամադրում կլիմայի փոփոխության ֆինանսավորման միջազգային նախաձեռնությունների աճող թվաքանակի մասին՝ աջակցելու զարգացող երկրներին զբաղվելու կլիմայի փոփոխության հետ կապված խնդիրներով

Գերակա ուղղություն 3. Վտանգավոր երևույթների ռիսկի գնահատում. ճանաչիր քեզ սպառնացող ռիսկը

«Ապահովել պարբերաբար թարմացվող հստակ տվյալներ վտանգավոր երևույթների և խոցելիության վերաբերյալ, իրականացնել ռիսկի գնահատումներ և օգտագործել դրանք՝ որպես քաղաքային զարգացման պլանավորման և որոշումների կայացման հիմք: Ապահովել, որ վերոհիշյալ տեղեկատվությունը և ձեռք բերված «դիմակայման պլանները» հասանելի լինեն հանրությանը և ամբողջությամբ քննարկվեն նրանց հետ»:

Urban Risk Assessments: Towards a Common Approach – Համաշխարհային բանկ (2011թ.)

<http://go.worldbank.org/VW5ZBJBHAO> Քաղաքային ռիսկի գնահատման իրականացման ծրագիր, որի նպատակն է հզորացնել փոխկապվածությունն ու համաձայնությունն այն մասին, թե ինչպես կարող են քաղաքները պլանավորել բնական աղետներին և կլիմայի փոփոխությանը դիմակայելու գործընթացը:

Techniques Used in Disaster Risk Assessment – ՄԱԿ-ՀԱԲԻԹԱԹ

<http://www.disasterassessment.org> ԱՌՆ գնահատման գործիքների և կոնկրետ դեպքերի ուսումնասիրությունների փոխանակման դաշտ: Փնտրել «Աղետների ռիսկի համապարփակ գնահատում» ('Comprehensive Disaster Risk Assessment') և ավելին «Աղետների ռիսկի գնահատման համար կիրառվող միջոցները» ('Techniques Used in Disaster Risk Assessment') թեմաների ներքո

Assessing the Vulnerability of Local Communities to Disasters – UNEP (2008թ.)

<http://tinyurl.com/d4re8ew> Ռիսկի բնորոշման գործիք, որը կօգնի համայնքներին մտապահելու պարզաբան կազմել իրենց սպառնացող ռիսկերի մասին

Urban Governance and Community Resilience Guide on Risk Assessment in Cities – ADPC (2010թ.)

<http://tinyurl.com/cxbgquh> Ուղեցույցների շարք՝ նպատակ ունի բարձրացնել իրազեկվածությունն այն խնդիրների վերաբերյալ, որոնց հետ տեղական մակարդակում կառավարման մարմինները բախվում են աղետների ռիսկի նվազեցման գործընթացի իրականացման ժամանակ:

HAZUS: Software for Risk Assessment and Modelling of Disasters – FEMA (2011թ.)

<http://www.fema.gov/plan/prevent/hazus> ԵՏՀ վրա հիմնված համակարգչային ծրագիր, որն օգնում է գնահատել երկրաշարժերից, ջրհեղեղներից և փոթորիկներից առաջացող հնարավոր կորուստները

Earthquake Risk Assessment Tools – Earthquake Engineering Research Institute (ԱՄՆ)

<http://www.eeri.org/mitigation/> Կայքէջ, որտեղ տրամադրվում է տեղեկատվություն՝ երկրաշարժերից առաջացող կորուստների նվազեցման ուղիների մասին: Փնտրել՝ «Գործիքների որոշումներ կայացնողների համար» ('Toolkit for Decision Makers')՝ մշակված Կալիֆորնիայի սեյսմիկ անվտանգության հանձնաժողովի կողմից (1999թ.):

Urban Risk Assessment: A Facilitator's Guidebook – ADPC, ECHO, Handicap International, Islamic Relief, Plan International (2010թ.)

<http://tinyurl.com/d3cfb7j> Ինչպես քաղաքային ռիսկի գնահատման գործընթացը քաղաքային մակարդակից իջեցնել համայնքային մակարդակ՝ բոլոր խմբերին աղետներին նախապատրաստվելու գործընթացի մեջ ներառելու համար:

Discovery of a "Hot Spot" – Համաշխարհային բանկ, Աղետների նվազեցման և վերականգնման գլոբալ հիմնադրամ (GFDRR)

<http://tinyurl.com/cdsa2rk> Գնահատման վարժության աշխատանքային ձևաչափ՝ քաղված GFDRR-ի «Կլիմայի նկատմամբ դիմակայուն քաղաքներ» հրատարակումից (ընթացակարգը Ընդհանուր ուղղորդում բաժինը):

Weathering the Storm: Participatory Risk Assessment for Informal Settlements – «Աղետների կանխարգելում հանուն կայուն ապրելակերպի» ծրագիր, Քեյպ Թաունի համալսարան, Հարավային Աֆրիկա (2008թ.)

<http://tinyurl.com/d8youoc> Ուղեցույց պարզաբանում է ռիսկի մասնակցային գնահատման մեթոդները՝ բնակավայրերի մակարդակով ինտեգրված աղետների ռիսկի կառավարման պլանավորման գործընթացում կիրառելու համար:

Գերակա ուղղություն 4. Ենթակառուցվածքների պաշտպանություն, բարելավում և դիմակայունություն

«Կատարել ներդրումներ և ապահովել ռիսկերի նվազեցման առումով կարևոր այնպիսի ենթակառուցվածքների անխափան շահագործումը, ինչպիսիք են հեղեղատարներն ու դրենաժային համակարգերը, որոնք հարմարեցված են և, ըստ անհրաժեշտության, կարող են հաղթահարել կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած իրավիճակները»:

Urban Flooding and its Management: Case Study of Delhi – Աղետների կառավարման ազգային ինստիտուտ

<http://tinyurl.com/cpdheeh> Ակնարկ ջրհեղեղների կառավարման վերաբերյալ Հնդկաստանի օրինակով:

Adapting Urban Water Systems to Climate Change – Տեղական իշխանությունները հանուն կայունության (ICLEI), IWA, SWITCH, UNESCO (2011թ.)

www.adaptationhandbook.org Համայնքային մակարդակում որոշումներ կայացնողների համար նախատեսված ձեռնարկ, որտեղ ներկայացված են կլիմայի փոփոխության նկատմամբ քաղաքային ջրային ռեսուրսների համակարգերի խոցելիության հիմնական ոլորտները:

Handbook on Good Building Design and Construction – ՄԱԶՏ, ՄԱԱՆՄԻ (2007թ.)

<http://tinyurl.com/bttjvn2> Տների սեփականատերերի և շինարարների համար նախատեսված խորհուրդներ՝ աղետավտանգ գոտիներում լավ նախագծման սկզբունքների վերաբերյալ:

Գերակա ուղղություն 5. Կենսական նշանակության հաստատությունների պաշտպանություն: Կրթություն և առողջապահություն

«Գնահատել բոլոր դպրոցների և առողջապահական հաստատությունների անվտանգությունը և, ըստ անհրաժեշտության, ուժեղացնել և բարելավել այն»:

The Hospital Safety Index – Համաամերիկյան առողջապահական կազմակերպություն (2008թ.) <http://tinyurl.com/c53gdvw> Քիչ ծախսատար և վստահելի մեխանիզմ, որը որոշում կայացնողներին տալիս է ընդհանուր պարկերացում արտակարգ իրավիճակների և աղետների ժամանակ հիվանդանոցի գործունեությունը շարունակելու կարողության մասին: Ներկայացված են անվտանգության գնահատման ձեռնարկ և ձևաչափեր:

UNISDR Safe Hospitals Campaign: 10 Basic Facts to Know – ԱՀԿ, Համաշխարհային բանկ (2008թ.)

<http://tinyurl.com/crva29l> Տասը կետ, որ հարկ է մտապահել աղետների ժամանակ կարևորագույն նշանակության հաստատությունների կարևորության մասին, ինչպիսիք են՝ հիվանդանոցները:

One Million Safe Schools and Hospitals: Assessment and Mitigation Planning for Risk Reduction – ՄԱԱՆՄՌ և գործընկերներ

<http://www.safe-schools-hospitals.net/> Նախաձեռնություն, որը խթանում է համայնքներին, կազմակերպություններին և անհատներին ստանձնել դպրոցների և հիվանդանոցների անվտանգությունը բարձրացնելու հանձնառությունը (Փնտրել «Գործիքների համար նախատեսված տեղեկատվական նյութեր») (Information Materials for tools) թեմայի ներքո):

Guidelines on Non-structural Safety in Health Facilities – Նեպալի առողջապահության նախարարություն (2004թ.)

<http://tinyurl.com/c7dr3yh> Կանխարգելման միջոցառումներ, որոնք կարող են տարբերություն մտցնել հիվանդանոցների աղետների ժամանակ գործունեությունը շարունակելու կամ դադարեցնելու կարողության մեջ:

School Disaster Reduction and Readiness Checklist- Risk Reduction Education for Disasters – RiskRed (2008թ.)

<http://tinyurl.com/bwulwrn> Դպրոցներում աղետների նվազեցման գործողությունների ցանկ

Guidance Notes on Safer School Construction – ՄԱԱՆՄՌ, INEE, Համաշխարհային բանկ

<http://tinyurl.com/cx2a5vk> Դպրոցների դիմակայուն շինարարության և վերականգնման համար նախագծի մշակման ուղղորդիչ սկզբունքներ և ընդհանուր քայլեր

Safe Hospitals: A Collective Responsibility, A Global Measure of Disaster Reduction – Համաամերիկյան առողջապահական կազմակերպություն, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (2005թ.) PAHO/WHO

<http://tinyurl.com/cl2o5c4> Առողջապահական հաստատությունների դիմակայունության կարևորությունն ապացուցող գրքուկ

Գերակա ուղղություն 6. Շինարարական նորմեր և հողօգտագործման պլանավորում

«Պարտադիր և հետևողականորեն կիրառել առկա ռիսկերին համապատասխան և իրատեսական շինարարական նորմերն ու հողօգտագործման պլանավորման սկզբունքները: Հարկացնել անվտանգ հողատարածքներ ցածր եկամուտ ունեցող քաղաքացիներին, ինչպես նաև բարձրացնել ու բարելավել գործող շինարարական նորմերին չհամապատասխանող շինությունների անվտանգության մակարդակը»:

Local Government Land Use Planning and Risk Mitigation – SMEC, IID (2006թ.)

<http://tinyurl.com/co422t7> Այսպես ընդգծվում է տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունը՝ կիրառելու հողօգտագործման պլանավորում և զարգացման վերահսկողություն:

Guía Metodológica para incorporar la Gestión del Riesgo en las Escuelas y la Comunidad – Խաղաղություն ու հույս ասոցիացիա (Asociación Paz y Esperanza), Պերու, 2009թ.

<http://tinyurl.com/cokpyp5> Ռիսկի կառավարման ուղեցույց դպրոցների և տեղական համայնքների համար

Natural Hazard Development Permit Areas District of Vancouver – Կանադա

<http://tinyurl.com/bmcfkyv> Բնական վրանգների կառավարման ռիսկի վրա հիմնված մոտեցում՝ մշակված Հյուսիսային Վանկուվերի կողմից

Գերակա ուղղություն 7. Վերապատրաստում, կրթություն և հանրային իրազեկում

«Ապահովել աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված հանրակրթական ծրագրերի և հանրության համար նախատեսված դասընթացների ներդրումն ու իրականացումը համայնքներում և դպրոցներում»:

Town Watching Handbook for Disaster Education: Enhancing Experiential Learning – Եվրոպական միություն, Կյոտոյի համալսարան, ՄԱԱՆՄՌ Ասիայի և խաղաղօվկիանոսյան երկրներ

<http://tinyurl.com/buvf3f7> Դպրոցականներին և համայնքների անդամներին ռիսկի նվազեցման միջոցառումների իրականացման գործընթացներում ներգրավելու ձեռնարկ

Strengthening Institutional Capacity Development for CBDRM - Q & A Guide for Local Authorities in Asia – ADPC, UNESCAP, ECHO

<http://tinyurl.com/d3ymo4d> Հողօգտագործման պլանավորման ոլորտում աղետների ռիսկի նվազեցման վերաբերյալ հաճախ տրվող հարցեր

ՄԱԱՆՄՌ Asia Community-based Disaster Risk Reduction for Local Authorities – ADPC, UNESCAP, European Commission Humanitarian Aid (2006)

<http://tinyurl.com/cs4jkhc> Աշխատանքային ձեռնարկ՝ ուղղված համայնքահեն աղետների ռիսկի կառավարման կարողությունների զարգացմանը

Գերակա ուղղություն 8. Շրջակա միջավայրի պահպանություն և էկոհամակարգերի հզորացում

«Պաշտպանել առկա այն էկոհամակարգերն ու բնական պաշտպանական միջավայրը, որոնց օգնությամբ հնարավոր է մեղմել կամ նվազեցնել ջրհեղեղների, փոթորիկների և այն վրանգավոր երևույթների ազդեցությունը, որոնց նկատմամբ ձեր քաղաքը խոցելի է: Հարմարվել կլիմայի փոփոխությանը՝ ներդնելով և զարգացնելով, հաջողված փորձի վրա հիմնված աղետների ռիսկի նվազեցման արդյունավետ միջոցառումներ»:

Climate Variability and Change: Adaptation to Drought in Bangladesh – ADPC, FAO (2007)

<http://tinyurl.com/bo3bn26> Ուսումնական ուղեցույց և տեղեկատվական նյութ երաշտի հետ կապված խնդիրները Բանգլադեշի համարեքսպորտ հասկանալու համար

Albay Province, Philippines: Responding to the Challenge of Disaster Risk Reduction and Climate Change Adaptation – Provincial Government of Albay and the Centre for Initiatives and Research on Climate Adaptation (SCR) (2010)

<http://tinyurl.com/ck6btnb> Կոնկրետ դեպքի ուսումնասիրություն, որտեղ օգտագործվում է աղետների ռիսկի նվազեցումը՝ կլիմայական դիմակայունություն ապահովելու համար

City of Cape Town, Coastal Zone Management Strategy – (South Africa)

<http://www.capetown.gov.za/en/EnvironmentalResourceManagement/>

Այս կայքէջում փրամադրվում է քաղաքների վերաբերող բնապահպանական խնդիրների ընդհանուր նկարագրությունը: Փնտրել «Publications» նյութի ներքո՝ գտնելու Քեյթի Թաունի ավամերձ կառավարման ինտեգրված մոտեցման մասին տեղեկություններ:

U.S. Mayors' Climate Protection Agreement: Climate Action Handbook – Տեղական

իշխանությունները հանուն կայունության (ICLEI), Սիեթլ, ԱՄՆ քաղաքապետերի համաժողով, Կլիմայի պաշտպանության ԱՄՆ քաղաքապետերի խորհուրդ (2006)

<http://tinyurl.com/ce2ammu> Գործունեության օրինակներ, որ տեղական մակարդակում

իշխանությունները կարող են իրականացնել՝ գլոբալ փառքացման արտանետումների նվազեցման և կլիմայական պաշտպանության համար:

Manual on Flood Preparedness Program for Provincial and District Level Authorities in the Lower Mekong Basin Countries – ADPC; GTZ, ECHO, Mekong River Commission for Sustainable Development (2009)

<http://preventionweb.net/go/13076> Նկարագրվում են անհրաժեշտ գործողություններ, որոնք պահանջվում են իրականացնել ջրհեղեղների պատրաստվածության պլանավորման ժամանակ և կարող են հարմարեցվել Ասիայի այլ երկրների կարիքներին և իրավիճակներին:

Flood Plain Management Plan for the City of Venice – Venice City Council (2009)

<http://tinyurl.com/d7tkbxx> Լրացում LMS-ին և փարածքային ջրհեղեղների կառավարման 2010-2015թթ. ծրագրին:

Գերակա ուղղություն 9. Արդյունավետ պատրաստվածություն, վաղ ազդարարում և արձագանքում

«Հիմնել վաղ ազդարարման համակարգեր և ստեղծել ճգնաժամային կառավարման համապատասխան կարողություններ: Բնակչության պատրաստվածության մակարդակի բարձրացման համար կանոնավոր կերպով կազմակերպել և իրականացնել հանրային ուսումնավարժանքներ»:

A Framework for Major Emergency Management – Բնապահպանության, ժառանգության և տեղական ինքնակառավարման վարչություն, Իռլանդիա (2008)

<http://tinyurl.com/bqxzg7q> Նախատեսված է հիմնական արձագանքման մարմինների համար՝ պատրաստվելու և արտակարգ իրավիճակների ժամանակ համակարգված արձագանքում ապահովելու համար:

Shake Out Drill Manual for Government Agencies and Facilities – Earthquake Country Alliance, California, U.S.A.

<http://tinyurl.com/d429rru> Երկրաշարժերի ուսումնավարժանքների և պատրաստվածության միջոցառումների օրինակներ:

State Earthquake Emergency Plan – SES, City of Victoria, Quake Safe Australia (2010)

<http://tinyurl.com/cw2vbj5> Ավստրալիայի Վիկտորիա նահանգում երկրաշարժերի արդյունավետ կառավարման ռազմավարական ուղեցույց:

Ready New York: Preparing for Emergencies in New York City – Office of Emergency Management

<http://tinyurl.com/bmxbhu> Արտակարգ իրավիճակներում գործելակերպի պլանավորման ուղեցույց քաղաքացիների համար:

Implementing a Hazard Early Warning System, Shanghai – GFDRR, Համաշխարհային բանկ (2011)

<http://tinyurl.com/7egujr> Այս հաշվետվության մեջ ամփոփվում է, թե ինչպես աշխատեցնել վաղ ազդարարման համակարգերը՝ հիմնվելով հիդրոդեթեռնոլոգիայի վրա:

U.S. Federal Emergency Management Agency

<http://www.fema.gov> Արտակարգ իրավիճակների պատրաստվածության պլանավորման և բնական վրանգների հնարավոր կորուստների կանխարգելման վերաբերյալ լայնածավալ հրատարակումներ և ուղեցույցներ: Փնտրեք հետևյալ վերնագրերը կայքէջում՝

Are you Ready? An In-depth Guide to Citizen Preparedness – FEMA

Earthquake Safety Guide for Home Owners – FEMA, NEHRP (2005)

Mitigation How-To Guides (6 totals) State and Local Mitigation Planning – intended to help States and communities plan and implement practical, meaningful hazard mitigation actions (FEMA 386-1,2,3,4,6,7 and 8) <http://www.fema.gov/plan/mitplanning/resources.shtm>

North Shore Emergency Management Office – City of North Vancouver, Canada

<http://www.nsemo.org> Փնտրեք կայքէջում 'Smart Manuals', այդ թվում՝ **Earthquake and Tsunami Smart Manual - British Columbia, Canada The Home Owners Fire Smart Manual**

Գերակա ուղղություն 10. Վերականգնում և համայնքների վերակառուցում

«Ապահովել, որ ցանկացած աղետից հետո տուժած բնակչության կարիքներն առաջնահերթ լինեն վերականգնման փուլում: Աջակցել բնակչությանն ու համայնքային կազմակերպություններին մշակելու և իրականացնելու արձագանքմանն ու հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումներ՝ ներառելով շենքերի և շինությունների վերակառուցումն ու կենսական կարևոր պայմանների վերականգնումը»:

International Recovery Platform (IRP)

<http://www.recoveryplatform.org/resources/>

Տես IRP կայքէջի նյութերը, այդ թվում՝ ուսումնասիրություններ, գործիքներ և ուղեցույցներ, վերականգնման օրինակներ և հաշվետվություններ ու ուղղորդիչ նյութեր:

The Livelihood Assessment Tool Kit – ILO, FAO (2009)

<http://www.fao.org/>

Օգնում է վերականգնման գործընթացում ներգրավված դերակատարներին գնահատել աղետների ազդեցությունը մարդկանց ապրուստի վրա և վերականգնման կարողություններն ու հնարավորությունները:

A Handbook for Reconstructing after Natural Disasters. Safer Homes, Stronger Communities – GFDRR (2009)

<http://www.housingreconstruction.org/housing/toc> Տեղեկատվական նյութ՝ նախատեսված բնական աղետներից հետո ավելի անվտանգ տներ և հզոր համայնքներ կառուցելու համար:

Pre-disaster Planning for Post Disaster Recovery – Organization of American States (2000)

<http://www.oas.org/pgdm/document/preplan.htm> Կարիքյան կղզիների Անտիգուա և Բարբուդայի ու Սենթ Վինսենտ և Դենվիսի ոլորտային վերականգնման պլանների օրինակներ, որոնք կարող են հարմարեցվել այլ սցենարների:

Aceh-Nias: 10 Management Lessons for Host Governments Coordinating Post-Disaster Reconstruction (Indonesia) – BRR (2009)

<http://tinyurl.com/d4egskh> Արժեքավոր դասեր՝ քաղված Aceh-Nias ցունամիի փորձից վերակառուցման երեք տարբեր բաղադրիչների վերաբերյալ. կազմակերպում, իրականացում և ֆինանսավորում:

Guidelines for Planning Gender-sensitive Post-disaster Reconstruction (2001)

<http://www.onlinewomeninpolitics.org/> Այս ուղեցույցներում տեղ են գտել աղետների միջազգային հետազոտողների բացահայտումները, տեղում աշխատողների հաշվետվությունները և աղետների փրկվածների պատմությունները:

Գլուխ 3

Santa Tecla, El Salvador: Plan Estratégico – էլ Սալվադորի կառավարություն (2003)

<http://tinyurl.com/77h9pqt> 2001թ. ավերիչ երկրաշարժից հետո մշակված պլան՝ մինչև 2020թ.-ը կայուն ապագա ապահովելու համար:

Santa Tecla City Policy for the Strategic Management of Disaster Risk – էլ Սալվադորի կառավարություն (2008)

<http://tinyurl.com/7xn4h6b> Սանտա Տեկլայի զարգացման օրինակի հիման վրա անգլերեն լեզվով մշակված դիսկի կառավարման քաղաքի ռազմավարական մոտեցումը՝ ուղղված երաշխավորելու սոցիալական ոլորտի, ենթակառուցվածքների, հողօգտագործման պլանավորման, բնական պաշարների պահպանման և արդյունաբերական անվտանգության կայունությունը:

Preparing the public sector for risk governance : 10 first steps towards an ISO 31000 framework – Marsh (2011)

(անգլերեն): <http://tinyurl.com/6p64vm6>, (ֆրանսերեն): <http://tinyurl.com/64o8pqy>, (իսպաներեն): <http://tinyurl.com/7qrkks4>. Եվրոպական քաղաքների փորձի հիման վրա հանրային ոլորտի կառավարման ծրագիր և քաղված դասեր:

Վերապահում

Այս հրատարակման մեջ տեղ գտած տեսակետները պարտադիր կերպով չեն արտահայտում Միավորված ազգերի քարտուղարության տեսակետները և պատկանում են հեղինակներին: Նյութում օգտագործված անվանումներն ու նկարագրությունները որևէ կերպ չեն արտահայտում ՄԱԿ-ի Քարտուղարության՝ տարածքի, քաղաքի ու շրջանի, կամ պաշտոնատար անձանց, կամ էլ սահմանների ուրվագծման վերաբերյալ իրավական կարգավիճակի մասին կարծիքը:

Սույն հրատարակումը կարող է ազատորեն մեջբերվել կամ վերատպագրվել, սակայն պահանջվում է ներկայացնել աղբյուրը: ՄԱՆՄՌ-ն խրախուսում է սույն փաստաթղթի մասնակի կամ արողջական վերարտադրությունը կամ թարգմանությունը և պահանջում է նախնական գրավոր համաձայնություն (կապվել ՄԱՆՄՌ-ի հետ isdr-campaign@un.org հասցեով և տրամադրել թարգմանության օրինակը):

Հիշատակում. ՄԱՆՄՌ (2012թ.) *Ինչպես դարձնել քաղաքներն ավելի դիմակայուն. Ձեռնարկ քաղաքապետների և փոքրական ինքնակառավարման մարմինների ղեկավարների համար: Ժնև, Շվեյցարիա՝ Միավորված ազգերի Աղետների նվազեցման միջազգային ռազմավարություն:*



United Nations
International Strategy for Disaster Reduction

UNISDR secretariat

Tel.: +41 22 917 8908/8907

isdr@un.org

www.unisdr.org

UNISDR Liaison Office, New York

palm@un.org

UNISDR Regional Office Africa

isdr-africa@unep.org

www.unisdr.org/africa

UNISDR Regional Office Asia and the Pacific

isdr-bkk@un.org

www.unisdr.org/asiapacific

UNISDR Regional Office The Americas

eird@eird.org

www.eird.org

UNISDR Regional Office Europe and Central Asia

isdr-europe@un.org

www.unisdr.org/europe

UNISDR Regional Office Arab States

isdr-arabstates@un.org

www.unisdr.org/arabstates

www.unisdr.org/campaign



Empowered lives.
Resilient nations.



Սույն ձեռնարկը թարգմանվել և տպագրվել է Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլանի շրջանակներում, ՄԱԶԾ «Աղետների ռիսկի նվազեցում» ծրագրի և Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպության «Աղետների ռիսկի նվազեցում» ծրագրերի նախաձեռնությամբ և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի, ՄԱԿ-ի մարդասիրական հարցերի համակարգման գրասենյակի (UNOCHA), ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ՕՔՄՖԱՄ կազմակերպության, «Ազրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի (CARD) «Շուկաներ Մեդրիի համար» ծրագրի, «ԱՄՆ ՄԶԳ գործընկերություն» հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի և Հայկական կարմիր խաչի ընկերության համատեղ ֆինանսավորմամբ:

Սույն ձեռնարկում արտահայտված տեսակետներն անպայման չէ, որ ներկայացնեն ՄԱԿ-ի կամ ՄԱԶԾ պաշտոնական տեսակետներն ու քաղաքականությունը:



Դիզայնը և տպագրությունը իրականացվել է «ԹԱՍԿ» ՍՊԸ կողմից

Քաղաքները դիմակայուն դարձնելու «Տաս գերակա ուղղությունների» գնահատման ամփոփ ցանկը

1. Քաղաքացիական խմբերի և քաղաքացիական հասարակության անմիջական մասնակցությամբ ստեղծել **կազմակերպչական և համակարգման** մեխանիզմներ՝ բացահայտելու և նվազեցնելու աղետների ռիսկը: Համայնքային մակարդակում ստեղծել համագործակցային մեխանիզմներ: Ապահովել, որ տեղական բոլոր հաստատություններն ու կառույցները հասկանան իրենց դերը աղետների ռիսկի նվազեցման և պատրաստվածության ոլորտում:
2. **Ձևավորել աղետների ռիսկի նվազեցման բյուջե** և խրախուսել համայնքներին, սեփականատերերին, ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին՝ գործարար համայնքին և հանրային ոլորտին ներդրումներ կատարել՝ իրենց առջև ծառայած ռիսկերը նվազեցնելու համար:
3. Ապահովել պարբերաբար թարմացվող հստակ տվյալներ վտանգավոր երևույթների և խոցելիության վերաբերյալ, **իրականացնել ռիսկի գնահատումներ** և օգտագործել դրանք՝ որպես քաղաքային զարգացման պլանավորման և որոշումների կայացման հիմք: Ապահովել, որ վերոհիշյալ տեղեկատվությունը և ձեր քաղաքի «դիմակայման պլանները» հասանելի լինեն հանրությանը և ամբողջությամբ քննարկվեն նրանց հետ:
4. Կատարել ներդրումներ և ապահովել **ռիսկի նվազեցման առումով կարևոր այնպիսի ենթակառուցվածքների** անխափան շահագործումը, ինչպիսիք են՝ հեղեղատարներն ու դրենաժային համակարգերը, որոնք հարմարեցված են և, ըստ անհրաժեշտության, կարող են հաղթահարել կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած իրավիճակները:
5. Գնահատել **բոլոր դպրոցների և առողջապահական հաստատությունների անվտանգությունը** և, ըստ անհրաժեշտության, բարձրացնել և բարելավել այն:
6. Պարտադիր և հետևողականորեն կիրառել առկա **ռիսկերին համապատասխան և իրատեսական շինարարական նորմերն ու հողօգտագործման պլանավորման սկզբունքները**: Հատկացնել անվտանգ հողատարածքներ ցածր եկամուտ ունեցող քաղաքացիներին, ինչպես նաև բարձրացնել ու բարելավել գործող շինարարական նորմերին չհամապատասխանող շինությունների անվտանգության մակարդակը:
7. Ապահովել աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված **հանրակրթական ծրագրերի և հանրության համար նախատեսված դասընթացների** ներդրումն ու իրականացումը համայնքում և դպրոցներում:
8. **Պաշտպանել առկա այն էկոհամակարգերն ու բնական պաշտպանական միջավայրը**, որոնց օգնությամբ հնարավոր է մեղմել կամ նվազեցնել ջրհեղեղների, փոթորիկների և այն վտանգավոր երևույթների ազդեցությունը, որից ձեր քաղաքը խոցելի է: Հարմարվել կլիմայի փոփոխությանը՝ ներդնելով և զարգացնելով, հաջողված փորձի վրա հիմնված, աղետների ռիսկի նվազեցման արդյունավետ միջոցառումներ:
9. Հիմնել **վաղ ազդարարման համակարգեր և ստեղծել ճգնաժամային կառավարման** համապատասխան կարողություններ: Բնակչության պատրաստվածության մակարդակի բարձրացման համար կանոնավոր կերպով կազմակերպել և իրականացնել հանրային ուսումնավարժանքներ:
10. Ապահովել, որ ցանկացած աղետից հետո **տուժած բնակչության կարիքներն առաջնահերթ լինեն վերականգնման փուլում**: Աջակցել բնակչությանն ու համայնքային կազմակերպություններին՝ մշակելու և իրականացնելու արձագանքմանն ու հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումներ՝ ներառելով շենքերի և շինությունների վերակառուցումն ու կենսական կարևոր պայմանների վերականգնումը:

Ձեռնարկ քաղաքապետերի և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների համար

«Աղքատությունը և խոցելիությունը ճակատագրական երևույթներ չեն: Մարդիկ անվերադարձ դատապարտված չեն: Մարդիկ պարզապես չեն համախմբում առկա ներքին և արտաքին ռեսուրսները իրենց առջև ծառայած խնդիրների լուծման համար: Մեր նախնիները պայքարել են մեզ ժառանգություն թողնելու համար, ուստի մենք պարտավոր ենք պահպանել այն հաջորդ սերնդի համար»:

Շելի Մամադու Արիբուլայ Դիեյ, Սեյնթ Լյուիսի քաղաքապետ, Սենեգալ, «Դարձնենք քաղաքներն դիմակայուն» քարոզարշավի չեմպիոն

«Վերջին տարիները ցույց են տալիս, որ աղետները հարվածում են ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած քաղաքներին: «Դարձնենք քաղաքները դիմակայուն» քարոզարշավի մասնակիցը դառնալով՝ մենք կարողանում ենք փոխադարձաբար կիսել մեր ձեռքբերումները և փորձը»:

Յուրգեն Եհմիշ, Բոննի քաղաքապետ, «Դարձնենք քաղաքները դիմակայուն» քարոզարշավի գլոբալ մեկնարկ, Բոնն, Գերմանիա, մայիս, 2010թ.

«Դիմակայուն քաղաքներ կառուցելու համար հարկավոր է տեղական մակարդակով էական միջոցներ հատկացնել, որն այնքան էլ հեշտ չէ իրականացնել տնտեսական ճգնաժամի և սուղ միջոցների պայմաններում: Սակայն այլ տարբերակ չունենք, մենք պետք է դա անենք»:

Կեյթ Հինդս, Պորտլորի քաղաքապետ, Ջամայկա, Աղետների ռիսկի նվազեցման գլոբալ պլանֆորմ, Ժնև, մայիս, 2011թ.

«Դարձնենք քաղաքները դիմակայուն. իմ քաղաքը պատրաստվում է» քարոզարշավի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.unisdr.org/campaign կայքէջը:



United Nations
International Strategy for Disaster Reduction



Global Facility for Disaster Reduction and Recovery

